ԳԵՈՐԳ
ԵԱՂԼՃԵԱՆ



ԿԱՐՍԻ

1920 Թ. ԱՆԿՄԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

3-16

ԳԵՈՐԳ ԵԱՋԸՃԵԱՆ

ԿԱՐՍԻ 1920 Թ. ԱՆԿՄԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

3960

Երևան - 2007

Տպագրուել է հեղինակի եւ իր ամենամտերիմ ընկերոջ միջոցներով

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ե 167

Ի խորոց սրտի նուիրում է ազգային հերոս, Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար, ողորմելիների սադրանքով հայրենի բանտում արգելափակուած փոխգնդապետ

Ժիրայր Սէֆիլեանին

Խմբագիր՝ Յասմիկ Գուլակեան

Եազըճեան Գէորգ

Ե - 167 Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները.- Եր.: Հեղինակային հրատարակութիւն, 2007.- 112 էջ:

Գրքոյկում քննարկուել են Կարսի 1920 թ. հոկտեմբերի 30-ի անկման եւ դրան հետեւած Հայաստանի առաջին Հանրապետութեան կործանման «ներքին» պատճառները՝ գաղափարական, ռազմական, ռազմահոգեբանական, բարոյահոգեբանական եւ վարչահիրաւական:

Հեղինակը ցոյց է տալիս, որ այդ անկումն ու կործանումը օրինաչափ էին, անխուսափելի հետեւանքը ոչ թէ արտաքին պատճառների, այլ հենց հայ հասարակութեան մէջ (ներառեալ՝ բանակում) տարածուած գաղափարական եւ բարոյահոգեբանական անկումային վիճակի ու հասարակական այլասերուած յարաբերութիւնների:

Ուսումնասիրութիւնն ունի արդիական կարեւոր նշանակութիւն:

Նախատեսւում է պատմաբանների, ՀՀ բանակի զինուորների ու սպաների, ուսանողների եւ, առհասարակ, պատմական ճշմարտութեանը հետամուտ եւ իրենց ազգի ներկայով ու ապագայով մտահոգ բոլոր հայոց համար:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-99930-4-714-8

© Գէորգ Եազըճեան, 2007 թ.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Այս ուսումնասիրութիւնը կատարուել է հոգեկան անասելի տառապանքով: Դա պայմանաւորուած չէ իւրաքանչիւր ստեղծագործութեանը յատուկ տառապանքի յաղթահարումով (ամեն ստեղծագործութիւն, ի վերջոյ, տառապանքի յաղթահարում-զանցումն է):

Իմ հոգեկան տառապանքները արդիւնքն են այն խորը ցաւի, որն առաջացել է զուգահեռներ տանելիս հայկական առաջին հանրապետութեանը կործանման առաջնորդած եւ Հայաստանի երրորդ Հանրապետութիւնում մեր օրերին տեղի ունեցող երեւոյթների միջեւ[1]: Սարսափում եմ այն մտքից, թէ այս ընթացքը կարող է յանգեցնել հայկական վերջին հողակտորի կորստին:

Այս ուսումնասիրութիւնը պատմագիտական հետազօտութիւն չէ դասական իմաստով, այսինքն՝ ակադեմիական սխոլաստիկ աշխատանք չէ: Դա այնպիսի գործ է, որն արտացոլում է իմ հաւատամքը, թէ ***«գիտութիւնը, արուեստը, մշակոյթը եւ, առհասարակ, ամեն ինչ ոչ միայն պէտք է, այլ պարտաւոր է ծառայել ազգի եւ ազգային պետութեան շահերին»***: Հետեւաբար ընթերցողը այս ուսումնասիրութեան որոշ տեղերում կհանդիպի ոչ ակադեմիական, այլ աւելի շատ հրապարակախօսութիւն յիշեցնող գրելաոճի[2]: Դա բխում է այս ուսումնասիրութիւնը կատարելու եւ, ամենակարեւորը, այն հրապարակելու բուն նպատակից՝ ***զգուշացնել հայ հասարակութեանը գալիք արհաւիրքից:***

Ու եթէ կարողացանք մեր ազգի թէկուզ մի փոքր հատուածին արթնացնել մեր այս գրքոյկ-սթափեցման կոչով, լիովին բաւարարուած պիտի լինենք:

---

[1] Այդ զուգահեռների անցկացմանը մեծապէս կօժանդակի հանրային քաղաքականութեան փորձագէտ, պատմական գիտութիւնների թեկնածու Աղասի Թադեւոսեանի «Սոցիալական վախի երեւոյթը. արմատները եւ ձեւերը Հայաստանում (1991-1998 թթ.)» ուսումնասիրութիւնը. տե՛ս Աղասի Թադեւոսեան, «Անցումային շրջանի էթնոհոգեբանական փոփոխութիւնների առանձնայատկութիւնները Հայաստանում» (յօդուածների ժողովածու), «Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի» հրատարակութիւն, Երեւան, հոկտ. 1998, էջ 19-30):

[2] Գիտական ոճը պահպանել ենք այս գրքոյկի կրճատ տարբերակում, որը լոյս է տեսել քաղաքական գիտութիւնների դոկտոր Արմէն Այվազեանի կազմած ու խմբագրած «Ռազմավարութեան եւ անվտանգութեան հարցեր» յօդուածների ժողովածուում (Երեւան, 2007), էջ 481-549:

* * *

Կարսի անկումը 1920 թ. հոկտեմբերի 30-ին հայոց նորագոյն պատմութեան ամենախայտառակ ու ամօթալի էջերից մէկն է, եթէ ոչ ամենից ամօթալին[3]: Ուրիշ ի՞նչ որակում կարելի է տալ այն փաստին, որ յօգուտ հայերի՝ բանակի թուակազմի եւ ռազմամթերքի բազմապատիկ գերազանցութեան պայմաններում, ընդամէնը 2-2.5 ժամուայ ընթացքում[4], «առանց կռուի»[5] թշնամուն է անցել ամրութիւնների բազմաշարք համակարգ ունեցող մի բերդաքաղաք՝ իր աւելի քան 700 թնդանօթով եւ անհաշուելի այլ ռազմամթերքով[6], գերի են ընկել տասնեակ հազարաւոր հայ

[3] Լիբանանահայ արձակագիր եւ Բէյրութի «Նայիրի» շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր Անդրանիկ Ծառուկեանը Կարսի անկումը համարում է «Դէր-Զօրէն ետք հայ ժողովուրդին կրած մեծագոյն աղէտը, որուն շուրջ պատմութեան խօսքը յստակ չէ դեռ, եւ շատերու մտքին մէջ կմնայ առեղծուածային շփոթութեամբ». տե՛ս նրա խմբագրական ներածական խօսքը Արտաշէս Բաբալեանի «Կարսի անկումը» յուշագրութեան վերահրատարակման առթիւ, «Նայիրի» շաբաթաթերթ, Բէյրութ, ԺԵ տարուայ (1968 թ.-Գ. Ե.) 45-50 միացեալ համարների փոխարէն լոյս տեսած բացառիկ համար, էջ 8:

[4] Ըստ Քեազիմ Կարաբէքիրի՝ Կարսն ինքը գրաւել է 3.5 ժամուայ ընթացքում («Քեազըմ Կարաբէքիրի յուշերը Հայաստանի Հանրապետութեան վրայ թրքական յարձակումներուն մասին», թարգմ. Ա. Շորվօղլեան, «Զարթօնք» օրաթերթ, Բէյրութ, 1966 թ., 10 օգոստոսի, էջ 2):

[5] Կարսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու ծխատէր քահանայ տէր Կորիւն Քոթանջեան. տե՛ս նրա 17 դեկտեմբեր 1922-ի զեկուցագիրը Ամենայն Հայոց Գէորգ Ե կաթողիկոսին, «Բանբեր Հայաստանի արխիւների», Երեւան, թիւ 1, 2006, էջ 100:

[6] Իր յուշերում Կարաբէքիրը յայտնում է. «Կարսի մէջ ահագին քանակութեամբ զինամթերք գրաւեցինք: Լաւ գործածելի վիճակի մէջ 377, նորոգութեան կարօտ 339 թնդանօթ եւ միլիոններով ռումբ ու փամփուշտ»: «Գիւմրիի մէջ ալ մեծ քանակութեամբ զինամթերք եւ զէնքեր ձեռք անցուցինք»,- աւելացնում է նա: Այս քանակների մի մասը իրեն պահելով հանդերձ, Կարաբէքիր արեւմտեան (յունական բանակի դէմ) ռազմաճակատ՝ Մուստաֆա Քեմալին ուղարկել է 117 թնդանօթ, 12 հազար հրացան, 244 գնդացիր, 14 հազար սուին եւ սուր, հրետանու 170 հազար ռումբ, 32 միլիոն փամփուշտ, 110 հազար պայթուցիկ «եւ սնդուկներով, դէզերով, շոգեկառքերով (վագոն) զինամթերք եւ մեծագումար դրամ»: Այս բոլորը նկատի ունենալով՝ յետագայում թուրքական բանակի գլխաւոր շտաբի

քաղաքացիներ, հազարաւոր զինուորներ, աւելի քան 120 սպայ, այդ թւում՝ երեք գեներալ եւ մէկ նախարար[7]: Կարսի գրաւման ժամանակ ու յաջորդող շաբաթներին, մինչեւ Կարսի մարզի ամբողջական հայաթափումը 1922 թ., թուրքերը քաղաքում կոտորել են 8 հազար, իսկ մարզում՝ 12 հազար հայ՝ հիմնականում տղամարդկանց[8]: Գերի ընկած ռումին քաղաքացի Վասիլ Իոնեսկուն վկայում է, որ Կարսում Նուրի բէյից իմացել է, «որ քաղաքում սպաննուած են 8 հազար հայեր (կանայք, երեխաներ եւ տղամարդիկ), բայց իմ դիտարկումներով սպանուածների թիւը 10-12 հազարից քիչ լինել չէր կարող, քանի որ մի ամիս անց քաղաքի շրջակայքում դեռեւս կարելի էր տեսնել բազմաթիւ դիակներ»[9]: Ըստ Կարօ Սասունու՝ 2000 հայ զինուոր եւ սպայ գերի է ընկել Կարսում: Նրանցից ընդամէնը 600 հոգի է վերադարձել Հայաստան՝ ութ ամսուայ գերութիւնից եւ տաժանակիր աշխատանքից յետոյ: Ըստ նոյն աղբիւրի՝ թուրքական գերութեան մէջ ոչնչացուել է նաեւ Կարսից եւ Ալեքսանդրապոլից տարուած մօտ 8000 հայ երիտասարդ[10]: Մէկ այլ լաւատեղեակ անձ՝ հայկական երկաթուղու բարձրաստիճան պաշտօնեայ, գերի ընկած Եղիշէ Պահլաւունին յայտնում է, որ գերի «հինգ-վեց հազար զինուորներից կենդանի վերադարձան միայն 464 հոգի: Սպաներից մահացան երեք հոգի:

պետ Ֆեւզի փաշան Թուրքիայի Ազգային մեծ ժողովում իր հրճուանքը յայտնելով Կարսի առման առթիւ, յոխորտում էր. «Հայերէն առնուած զէնքերով անկախութեան պատերազմը տասը տարի ալ կրնանք շարունակել» (նոյնը, 10 եւ 11 օգոստոսի, էջ 2):

[7] Ըստ Կարաբէքիրի՝ «Կարսի մէջ երեք զօրավար, վեց գնդապետ, 12 տեղակալ (փոխգնդապետ - Գ. Ե.), 100-է աւելի սպայ եւ ենթասպայ եւ երկու հազարէն աւելի զինուոր գերի առինք» (նոյնը, 10 օգոստոսի, էջ 2): Նա հպարտութեամբ անուանապէս յիշատակում է իր «երեւելի» գերիներից Փիրումեանին, Վեքիլեանին եւ պաշտպանութեան նախկին նախարար Արարատեանին:

[8] Աշոտ Մելքոնեան, «Կարս» եւ «Կարսի մարզ» յօդուածներ, «Հայկական հարց» հանրագիտարան, Երեւան, 1996, էջ 179, 181:

[9] Հայաստանի ազգային արխիւ, ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 43, թերթ 34: Արտատպուել է «Հայոց ցեղասպանութեան անհերքելի փաստաթղթեր» հրապարակման մէջ (աշխատասիրեց Աւետիս Փափազեանը), «Զարթօնք», 2005 թ., 14 սեպտեմբերի, էջ 2:

[10] Կարօ Սասունի, «Հայ-թուրքական պատերազմը», «Հայրենիք» ամսագիր, Բոստոն [այսուհետ՝ ՀԹՊ], 1926, թիւ 7, էջ 76:

105 հոգուց մնացին 102 հոգի»[11]: Տէր Կորիւն քահանայ Քոթանջեանը գերի սպաների թիւը ներկայացնում է «120-ի չափ», իսկ գերիների ընդհանուր թիւը՝ «3700 հոգի, ըստ ոմանց՝ 7000», որոնցից տասնմէկ ամիս յետոյ վերադարձաւ «ոչ աւել, քան 8-900 հոգի»[12], «միայն 900 հոգի, մեծ մասամբ զինուորականներ»[13]: Մինչդեռ «պատերազմի սկսուած օրէն մինչեւ Կարսի անկումը, այդ ճակատի Հայկական բանակի ընդհանուր կորուստը եղած էր մօտ 500 սպանուած եւ 1000 վիրաւոր»[14]: Այսինքն՝ գերութեան մէջ, անարգ վերաբերմունքի արժանանալով հանդերձ, կոտորուել է բազմապատիկ աւելի հայ, քան սպանուել է մարտի դաշտում: Գերիների աշխատանքի մասին ահա թէ ինչ է գրում արժանահաւատ աղբիւր Կորիւն քահանան. «Կարսի բանտում թողած հայերին անասունների նման լծում էին սայլերին եւ մահակների անգութ հարուածների տակ, ծմեռուայ սառնամանիքին, կիսամերկ, ցրտից կապտած անդամներով դիակներ, վառելափայտ եւ մեծ տակառներով ջուր էին կրել տալիս: Նոյնպիսի դաժան աշխատանքների մատնուած են եղել եւ գերիները Սարիղամիշում, Կարաուրգանում, Ջեւինում, Գանձաղում եւ Էրզրումում»: Հայ գերիներին կոտորելու հարցում այնպիսի կատաղութիւն են դրսեւորել թուրք կանայք, որ ասկեարները յաճախ ստիպուած են եղել սանձել նրանց արիւնարբու ախորժակը կամ դրան յագուրդ տալու համար կաշառք պահանջել: «Անասունի աստիճանի հասած դժբախտ հայ ժողովրդի» երիտասարդներին, այլազան կտտանքների ենթարկելով, նոյնիսկ այրել են... կենդանի[15]: Հայ գերիների ահաւոր վիճակի մասին վկայում է նաեւ Գարեգին արք. Յովսէփեանցն իր օրագրում[16]: Մի խօսքով՝ հայ գերիները անասուններից էլ վատթար վիճակում են յայտնուել: Ահա թէ ինչ է նշանակում դաւաճանել ազգային ոգուն եւ ապաւինել թուրք թշնամու... «բարեկամութեանն» ու «ողորմածութեանը»:

[11] Եղիշէ Պահլաւունի, «Յուշամատեան», Երեւան, 2006, էջ 161:
[12] Տե՛ս նրա 17 դեկտեմբերի 1922-ի զեկուցագիրը Ամենայն Հայոց Գէորգ Ե կաթողիկոսին, «Բանբեր Հայաստանի արխիւների», թիւ 1, 2006, էջ 101:
[13] Նոյնը, էջ 107:
[14] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 7, էջ 77:
[15] «Բանբեր Հայաստանի արխիւների», թիւ 1, 2006, էջ 101-103:
[16] Նոյնը, 1989, թիւ 3, էջ 126-158:

Եւ այսքանից յետոյ ընդամէնը երեք սպայ է ինքնասպանութեամբ[17] փորձել քաւել համազգային այս մեծ ԱՄՕԹԸ:

Կարսի անկմանը հետեւեց Ալեքսանդրապոլի համանման յանձնումը թշնամուն, այնուհետեւ՝ Հայաստանի առաջին Հանրապետութեան լիակատար պարտութիւնը թուրք եւ քուրդ հորդաներից, Հայրենիքի տարածքի մէկ զգալի մասի եւ թէկուզ կիսատպառատ անկախութիւն ունեցող պետականութեան կորուստները, հարուածներ, որոնցից հայութիւնը չի սթափուել մինչ օրս:

* * *

Հակառակ Կարսի եւ ընդհանրապէս առաջին հանրապետութեան անկման մասին պատմագիտական ու յուշագրական մեծածաւալ գրականութեան առկայութեան, մեր կարծիքով, հայ պատմագիտական ու քաղաքական միտքը այս իրադարձութիւններին առ այսօր ճշգրիտ գնահատականներ չի տուել: Ուշադրութիւնը առաւելաբար սեւեռուել է անկումների քաղաքական, մասնաւորաբար արտաքին եւ դիւանագիտական պատճառների վրայ՝ յետին պլան մղելով ներքին՝ գաղափարական, ռազմական, ռազմահոգեբանական, վարչահիրաւական եւ բարոյահոգեբանական պատճառները, որոնք էլ իրականում վճռորոշն էին, յատկապէս առաջինները: Նշելով պարտութեան մի քանի պատճառներ, այն էլ՝ հարցականով, Գարեգին արք. Յովսէփեանցը գրում է, որ Կարսի անկման հարցը «մի բարդ խնդիր է, կարօտ անաչառ եւ մանրազնին ուսումնասիրութեան»[18]: Իր կարգին երջանկայիշատակ եկեղեցականի յուշագրութեան երկրորդ վերահրատարակիչ Անդրանիկ Ծառուկեանը յայտնում է, որ Կարսի անկումը բոլշեւիկեան քարոզչութեամբ պայմանաւորելը «կրնայ մասամբ ճիշտ ըլլալ», բայց «անբաւարար» է ու «անհամոզիչ»: Նա տրամաբանական հարց է տալիս. «Սարդարապատի մէջ կռուող հայ զօրքը ի՞նչպէս կրնար

[17] Խօսքը առաջին գնդի հրամանատար գնդապետ Մազմանեանի, Սեպուհի բրիգադի շտաբի պետ հազարապետ Չիլինգարեանի եւ հրետանու մարտկոցի հրամանատար գլխապետ Բագրատունու մասին է: Տե՛ս Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 63: ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 7, էջ 76:
[18] Գարեգին արք. Յովսէփեանց, «Կեանքիս ամենադժբախտ օրը եւ երջանկութեանս որպէն». տե՛ս «Ոգուն չապաւինելու արդիւնքը» (կազմող եւ խմբագիր՝ Գէորգ Եազըճեան), Երեւան, 2002, էջ 41-42:

մէկ օրէն միւսը դասալիք բազմութեան մը վերածուիլ, մանաւանդ երբ գործ ունէր *միեւնոյն* թշնամիին, թուրքին հետ, որուն արիւնոտ ծրագիրը հայութեան հանդէպ գաղտնիք չէր ոչ մէկ հայու: Տարիներու ընթացքին մեր կատարած բոլոր ընթերցումները գոհացուցիչ պատասխան չեն տուած այս հարցումին»[19]: Այս առեղծուածը տասնամեակներով յուզել է նաեւ նուաստիս:

Այդ հարցումին փորձել ենք պատասխանել 2002 թուականին Երեւանում մեր կազմած եւ լոյս ընծայած «Ոգուն չապաւինելու արդիւնքը» գրքոյկով: Իսկ մեր այս ուսումնասիրութեամբ փորձում ենք է՛լ աւելի խորը քննութեան հիման վրայ հանգամանալի կերպով պատասխանել հայութեան գոյատեւման համար կենսական այս հարցումին:

Կարսի անկման ու հայութեան խայտառակ պարտութեան մասին յիշատակուել են տասնեակ պատճառներ, սակայն, ինչպէս Նժդեհն է նշում, չի ասուել բուն պատճառը՝ ճշմարտութիւնը, որն է՝ այդ օրերին համատարած «հայ ժողովրդի՝ իր ամբողջութեան մէջ անմարտունակ, անարի, անմշակ հոգին»[20]: Եւ դա լիովին հասկանալի է. ասել ճշմարտութիւնը՝ նշանակում է ընդունել սեփական սխալը եւ ապաշխարել դրա համար, իսկ ապաշխարել՝ նշանակում է սխալը գիտակցելուց յետոյ զղջալ ու ամաչել դրա համար, ներողութիւն խնդրել եւ սխալը չկրկնելու աննկուն կամք դրսեւորել: Այս առաքինութիւնը մեզ՝ հայերիս մօտ հազուագիւտ է:

Սակայն հայ հասարակութիւնը ոչ միայն պատրաստ չէ ընդունելու իր սխալը, այլեւ սուիններով է դիմաւորում քննադատողներին ու փորձում է ինքնաարդարացման հոգեբանական մեխանիզմներով ինքնահանգստանալ կամ էլ, վատագոյն դէպքում, անտեսում է սեփական սխալը, որպէսզի... այն նորից կրկնի ու կրկնի:

«Ոգուն չապաւինելու արդիւնքը» գրքոյկը լոյս տեսնելուց յետոյ ՀՀ-ում եւ արտասահմանում յիշեալ թեմայով լոյս են տեսել նոր նիւթեր: Դրանց հեղինակները կրկնում են իրենց նախորդներին՝ ինքնաարդարանալով, մեղքը օտարների (թուրքեր, բոլշեւիկներ[21], դաշնակիցներ եւ այլք) վրայ բարդելով:

---

[19] Անդրանիկ Ծառուկեան, խմբագրական ներածական խօսք Արտաշէս Բաբալեանի «Կարսի անկումը» յուշագրութեան վերահրատարակման առթիւ, «Նայիրի», ԺԵ տարուայ (1968 թ. - Գ. Ե.) 45-50 միացեալ համարների փոխարէն լոյս տեսած բացառիկ համար, էջ 8: Ընդգծումը Ա. Ծառուկեանինն է:

[20] Գարեգին Նժդեհ, «Որդիների պայքարը հայրերի դէմ», Սալոնիկ, 1927: Վերահրատարակուել է Գ. Նժդեհի «Հատընտիր»-ում, Երեւան, 2001. մէջբերումը՝ վերջինից, էջ 86:

[21] Կարսի անկման գործում ՀՅԴ պատասխանատուութեան մեղմացմանը միտուած այս հնացած, իրականութեանը մասամբ համապատասխանող պատճառը առաջ է քաշում պատմական գիտութիւնների թեկնածու (այժմ՝ դոկտոր) Գէորգ Խուդինեանը: Ըստ նրա՝ հայ զինուորների յուսալքման պատճառը «բոլշեւիկեան քարոզչութիւնն» ու «ծանր պայմաններն» էին (թէ ի՞նչ էին իրականում այդ «ծանր պայմանները», չի նշում): Նա աւելացնում է, որ «եւ զօրքի ներսում, եւ թշնամու խրամատներից տարուող բոլշեւիկեան քարոզչութիւնը վերջնականապէս կազմալուծել են բանակը»: Տե՛ս Գ. Խուդինեանի «Սիմոն Վրացեան (1882-1969)» յօդուածը, «Նշանաւոր ճեմարանականներ» (յօդուածների ժողովածու), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005, էջ 391: Աւելի հեռու է գնում պատմական գիտութիւնների դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի տնօրէն Աշոտ Մելքոնեանը: ՀՀ անկախութեան հռչակման 15-ամեակի առթիւ մի հարցազրոյցում նա Հայաստանի առաջին Հանրապետութեան կործանումը պայմանաւորում է «միմիայն արտաքին գործօնների ազդեցութեամբ»՝ առաջին հերթին նշելով «քեմալա-թուրքական եւ բոլշեւիկեան Ռուսաստանի գործակցութիւնը»: Նա աւելացնում է, որ այդ կործանման **«օբեէքթիւ ոչ մի պատճառ գոյութիւն չունի»** (հարցավար՝ Անոյշ Թրուանց: «15-ամեակ. դառնում ենք պետականութեան զգացողութիւն ունեցող ազգ»,- համոզուած է պատմաբան Աշոտ Մելքոնեանը», «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթ, Երեւան, 2006 թ., 7 սեպտեմբերի, էջ 3. հաստագրումը իմն է - Գ. Ե.): Ա. Մելքոնեանի այս տեսակէտին բացարձակապէս համաձայն չենք. հենց այս ուսումնասիրութիւնն այդ տեսակէտի ամբողջական ժխտումն է:

Այստեղ ցաւով արձանագրում ենք, որ Ա. Մելքոնեանի ղեկավարած ինստիտուտում պատմագիտական մօտեցումը եղել է եւ է թոյլ ու մակերեսային. գրեթէ ոչինչ չի փոխուել: «Պատմագիտութեան միակ չափորոշիչը ճշմարտութիւնն է»,- հաստատում էր ԵՊՀ հայոց պատմութեան ամբիոնի նախկին, երկարամեայ վարիչ, ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդեանը («Երեկոյեան Երեւան» օրաթերթ, 1989 թ., 23 եւ 24 օգոստոսի): Միակ փոփոխութիւնն այն է, որ եթէ Աշոտ Մելքոնեանի նախորդների շրջանում Հայաստանի առաջին Հանրապետութեան կործանման համար մեղաւորները հիմնականում դաշնակցականներն էին ու Անտանտի պետութիւնները, ապա ներկայումս մեղաւորները էլի արտաքին ոյժեր են՝ քեմալականներ, բոլշեւիկներ, 1920 թ. սեպտեմբերին Բաքւում համագումարի հաւաքուած ինչ-որ արարածներ: Հայութեան սեփական սխալների ոչ մէկ ճանաչում. ահա հայաստանեան պատմագիտական մտքի մշտական արատը... Արժէ յիշեցնել Նժդեհի դիպուկ ախտորոշումը. «Ընդունել ճշմարտութիւնը հանրապետական բանակի անյաջողութեանց մասին, պարզել Կարսի անկման իսկական պատճառները – կնշանակի պատաս-

Յուշագիրներից ճշմարտութեանը որոշ չափով մօտենում է Վահէ Արծրունին: Այդ հրատարակութիւնների մէջ մենք կառանձնացնենք պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՀՅԴ անդամ Արարատ Յակոբեանի՝ ծաւալով եւ տպաքանակով փոքր (28 էջ, 100 օրինակ), բայց արժէքաւոր «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմութեան փորձն ու դասերը» ուսումնասիրութիւնը (Երեւան, 2004): Հեղինակն իր առաջ խնդիր է դրել «ուշադրութիւն դարձնել այդ պարտութեան յատկապէս բարոյահոգեբանական գործօնին, որից մեծապէս կախուած է նաեւ ռազմական յաղթանակը»[22]: Նա Կարսի անկման հիմնական պատճառներ է համարում ողջ հայ հասարակութեան բարոյահոգեբանական անկումային վիճակն ու պարտուողական ոգին՝ պայմանաւորուած հասարակական տարբեր արատներով, որոնք համակել էին պետական վարչամեքենան՝ վերից վար[23], զօրաց նախարար, պետութեան եւ ՀՅԴ փաստական դիկտատոր Ռուբէն Տէր-Մինասեանին[24], բանակը՝ գե-

խանատուութեան բաժին ընդունել», մի բան, որից սարսափում են բոլոր ոլորտների (ներառեալ՝ պատմագիտութեան) մեր հին ու նոր պատասխանատուները:

[22] Արարատ Յակոբեան, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմութեան փորձն ու դասերը», Երեւան, 2004, էջ 4:

[23] Կարսի երբեմնի նահանգապետ Ստեփան Ղորղանեանը յայտնում է, որ պետական «ապիկար պաշտօնեաները – կաշառակեր, անպէտք եւ անշնորհք – շարունակում էին պաշտօնավարել եւ կեղեքել երկիրը եւ այդ մթնոլորտում պէտք է առաջ գար անբաւական տրամադրութիւն»: «Մենք անվերջ եւ անհաշիւ բազմացնում էինք միայն պաշտօնէութիւնը, պաշտօններ էինք ստեղծում մարդիկ տեղաւորելու համար, բայց չէինք վարձատրում աշխատանքը»: Պետական պաշտօնեաների մեծ մասին յայտարարելով «կիսագրագէտ ու անկիրթ»՝ Ղորղանեանը տեղեկացնում է, որ այս խառնամբոխի «նշանաբանն էր «ազգային» հասկացողութիւնը» եւ ««ազգայինի» դրօշի տակ կատարւում էր ամեն տեսակի անհեթեթ բան» (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 2, թ. 11: Նոյնը, գ. 18, թթ. 5, 13): Այս տողերը կարծէք գրուել են այսօրուայ ՀՀ-ի համար, ուր կեղծ-ազգայնական դաշնակցահանրապետական «ախպերութիւնը» հետեւողականօրէն յօշոտում է ազգային ու պետական արժէքները...

[24] Հայ Գնդունի, «Կարսի անկումին պատճառները» [այսուհետ՝ ԿԱՊ], «Մարտկոց» թերթ, Փարիզ, 1932 թ., 10 նոյեմբերի, էջ 2: Նոյն տեղում, Հայ Գնդունին մեծատառերով մէջբերում է Ռուբէնի մէկ խօսքը՝ ասուած 1920-ականների երկրորդ կէսին, Զարեւանդի գրքի վերլուծութեանը նուիրուած մի ժողովում. «Անպատիւ կեանքը նախընտրելի է, քան պատուաւոր մահը»: Ինչպէ՞ս չասես, որ Կարսի անկումից յետոյ Ռուբէնի ստորագրու-

ներալներից մինչեւ շարքային զինուոր, հասարակութիւնը՝ մտաւորական կոչեցեալից մինչեւ արհեստաւորն ու գիւղացին:

Իսկ մի՞թէ նոյն վիճակը չէ այսօր ՀՀ-ում...

* * *

Կարսի անկման մասին մեզ ծանօթ առաջին յուշագրութիւնը լոյս է տեսել ՀՅԴ-ի՝ Բոստոնում հրատարակած «Հայրենիք» ամսագրում (Ա տարի, 1923, թ. 12, էջ 52-68) «Կարսի անկումը» վերնագրով: Հեղինակն է Բիւրօ-կառավարութիւնում խնամատարութեան նախարար Արտաշէս Բաբալեանը: Յուշագրութիւնը վերահրատարակել է սփիւռքահայ ճանաչուած գրող եւ հրապարակագիր Անդրանիկ Ծառուկեանը իր խմբագրած «Նայիրի» թերթի (Բէյրութ) «ի հաշիւ ժե տարուան 45-50 միացեալ թիւերուն» փոխարէն լոյս տեսած բացառիկ համարում: Կառավարութեան սեպտեմբերի 30-ի որոշումով Բաբալեանը, ՀՀ գիւղատնտեսութեան եւ աշխատանքի նախարար, եւ միայն նոյեմբերի վերջին օրերին վարչապետ դարձած Սիմոն Վրացեանի հետ, որպէս կառավարութեան լիազօր ներկայացուցիչ, մեկնել է Կարս, որտեղ էլ գերի է ընկել հոկտեմբերի 30-ի կէսօրին, ապա քշուել Սարիղամիշ եւ Կարին (Էրզրում): Բաբալեանը յատկապէս մեղադրում է զինուորական բարձրաստիճան հրամանատարութեանը ապաշնորհութեան, ապազգայնութեան եւ անփութութեան համար: Նա նշում է ռազմական կոպիտ սխալներ, որոնց կանդրադառնանք այս ուսումնասիրութեան մէջ: Բաբալեանը մերժում է այն տեսակէտը, որ բանակն ու հայ ժողովուրդը չուզեցին կռուել եւ, որպէս ապացոյց, նշում է հազարաւոր կամաւորականների հաւաքագրումն ու սայլերի տրամադրումը բանակին: Նա թերագնահատում է մարտական ոգու բացակայութեան (առնուազն դրա թուլութեան) ՈՐՈՇԻՉ գործօնը, «վճռական մենակի» նժդեհեան սկզբունքի ՀԻՄՆՈՎԻՆ բացակայութիւնը: «Կասկած չկայ,- գրում է,- որ դրութիւնը փրկելու հնարաւորութիւն չկար: Մէկ երկու օրուայ ընթացքում գերմարդկային ճիգերով իսկ անհնար էր ազատել Կարսը անկումից... Հոկտեմբերի

թեամբ հրապարակուած ռազմաշունչ եւ հայրենասիրական կոչերը Հայրենիքի պաշտպանութեան մասին, որոնք լոյս են տեսել ՀՀ այդ օրերի պարբերական մամուլում, աւելին են, քան սովորական ծաղրուծանակը...

27-ին պարզ էր, որ դիմանալու տուեալներ չունինք»[25]: Յիշեցնենք, որ նոյն օրերին աւելի անյուսալի թուացող եւ աւելի ծանր վիճակում գտնուող Լեռնահայաստանի հայութիւնը հերոսական էջեր էր գրում հայոց նորագոյն պատմութեան գրքում՝ կատարեալ առաջնորդի կերպար՝ Նժդեհի հրամանատարութեամբ՝ ապաւինելով հայրենի լեռներին, ազգային ոգուն եւ յաղթելու կամքին:

Կարսի անկման մասին երկրորդ յուշագրութեան հեղինակը Կարօ Սասունին է՝ անկման օրերին Շիրակի նահանգապետը: Նրա յուշերը, «Հայ-թրքական պատերազմը» վերնագրով, լոյս են տեսել «Հայրենիք» ամսագրի 1926 թ. 4-9-րդ եւ 11-րդ համարներում, յետագայում հրատարակուել Բէյրութում՝ առանձին գրքով (1969 թ.): Սասունին եւս նշում է պարտութեան քաղաքական, ռազմական եւ բարոյահոգեբանական բազմաթիւ պատճառներ: Անկման «գլխաւոր պատճառ» է համարում զօրքի եւ հրամանատարութեան յոյսը Կարսի բերդի ամրութիւնների վրայ դնելը[26]: Նա եւս մօտենում է ճշմարտութեանը, սակայն դա չի ասում լիաբերան: Պատճառների շարքում նշում է նաեւ կռուելու կամքի չգոյութիւնը («Առանց ոգեւորութեան ու հաւատի բանակը ամբոխ մըն է»[27]), բանակի ապազգային հրամանատարական կազմը, ազգային բանակ չունենալը եւ այլն.: Յուշագրութեան աւարտին Կ. Սասունին համեմատում է հայկական եւ թուրքական բանակների, նաեւ գլխաւոր հրամանատարներ Նազարբէգեանի եւ Կարաբէքիրի անձնական յատկանիշները ու եզրակացնում, որ պիտի պարտուէինք, քանի որ «մեր վրայ եկող թշնամին զօրաւոր էր, կազմակերպուած եւ միաձոյլ», իսկ մենք կազմակերպուած եւ համախումբ չէինք[28]:

Միւս յուշագրողը, աւելի ճիշտ՝ անկման ռազմական եւ մի շարք բարոյահոգեբանական պատճառները ներկայացնողը ռազմական գործողութիւնների անմիջական մասնակից, 8-րդ գնդի[29] 1-

[25] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 63:

[26] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 7, էջ 69:

[27] Նոյնը, 1926, թիւ 8, էջ 92:

[28] Նոյնը, թիւ 11, էջ 116:

[29] 7-րդ եւ 8-րդ գնդերն ու Սմբատի ծիաւորների խմբերը միասնաբար կազմում էին ՀՀ բանակի 4-րդ բրիգադը՝ Սեպուհի (Արշակ Ներսէսեան) հրամանատարութեամբ:

ին գումարտակի հրամանատար, հարիւրապետ Հայ Գնդունին[30] (Համբարձում Թօփչեան) է: Նրա առաջին յուշագրութիւնը՝ «Դրուագներ Կարսի կռիւներէն» վերնագրով, լոյս է տեսել Բոստոնի «Պայքար» ամսագրի 1931 թ. սեպտեմբերի համարում (էջ 77-85): Աւելի արժէքաւոր է նրա՝ Փարիզի «Մարտկոց» թերթի վեց համարներում (1932 թ., 29 հոկտեմբերի – 10 նոյեմբերի) տպագրուած շարքը, որը վերնագրուած է «Կարսի անկման պատճառները»: Այս երկրորդ՝ հետազօտողներին համարեայ անծանօթ հրապարակման սկզբում Կարսի անկումը նա համարում է «մեր նորագոյն պատմութեան ամենէն ցնցող եւ ճակատագրական դէպքերէն մէկը», որի «պարզաբանութիւնն ու քննադատութիւնը՝ վերապրող հայութեան, իր յառաջադէմ սերունդին ու մտաւորականութեան գերագոյն պարտականութիւնն է»[31]: Նա հաւաստում է, որ անդրադառնալու է անկման պատճառներին՝ զուտ «ռազմագիտական եւ մարտական տեսակէտներով, առանց անդրադառնալու մասնաւորապէս եւ ծանրանալու քաղաքական ու դիւանագիտական մարզին վրայ, որ իր կարգին չափազանց կարեւոր է...»[32]:

Հայ Գնդունու այս հրապարակումը ՀՀ այսօրուայ բանակի սպայութեան եւ, առհասարակ, կազմի համար շատ ուսանելի է[33]: Նա թուարկում է պարտութեան ռազմական եւ ռազմահոգեբանական 20 պատճառներ, որոնք այս ուսումնասիրութեան մէջ օգտագործել ենք հանգամանօրէն:

Հայ Գնդունին եւս մօտենում է ճշմարտութեանը, երբ գրում է. «Մուստաֆա Քեմալի եւ Կարաբէքիրի հետ կրնային ճակատիլ... կռուելու եւ յաղթելու կամք ունեցող հայ ղեկավարներ: ... **Իրենց կոչումին բարձրութիւնը չգիտցող մեր մտաւորականներն ու գլուխները՝ հայկ. բանակին ռազմական դիրքերու վրայ կրած պարտու-**

[30] Կ. Սասունին Հայ Գնդունուն սխալմամբ վերագրում է 7-րդ գնդի 1-ին գումարտակի հրամանատարութիւնը (ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 7, էջ 70):

[31] ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 29 հոկտեմբերի, էջ 1:

[32] Նոյն տեղում:

[33] Չգիտենք՝ ՀՀ ռազմական ուսումնարաններում ուսուցանո՞ւմ են հայոց բանակների յաղթանակների եւ պարտութիւնների պատճառները: Կարծում ենք, որ տուեալ դէպքում անգամ չեն ակնարկում Կարսի խայտառակ պարտութեան պարագան՝ զգուշանալով, որ դասընթացներին հետեւող ապագայ սպաները թէկուզ իրենց մտքում զուգահեռներ չտանեն այդ օրերի եւ մեր օրերի բացասական, պետութեան եւ ազգի կործանմանը տանող երեւոյթների միջեւ:

թենէն առաջ, այո՛, սաղմնաւորեր եւ պատրաստեր էին Կարսի անկումն ու գրաւումը: Ուրիշ խօսքով, Կարսը, հայկ. թիկունքին մէջ հոկտ. 30-էն աւելի կանուխ ինկած էր անարժան եւ դաւաճան ղեկավարներուն ձեռքով»[34] (ընդգծումը իմն է - Գ. Ե.):

Կարսի անկման մասին մեզ յայտնի չորրորդ յուշագրողը հայոց բանակի զինուորների ոգին բարձրացնելու նպատակով 1920 թ. հոկտեմբերի սկզբից կամովին ռազմական գործողութիւնների թատերաբեմ մեկնած, նոյն նպատակներով 2.5 տարի առաջ Սարդարապատի ճակատամարտին մասնակցած, յետագայում Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, վաստակաշատ գիտնական Գարեգին արք. Յովսէփեանցն է[35]: Նրա յուշագրութիւնը՝ «Կեանքիս ամենաղժբախտ օրը եւ երջանկութեանս ոսպէն» վերնագրով, առաջին անգամ լոյս է տեսել «Պայքար» ամսագրի 1943 թ. նոր տարուայ բացառիկ համարում (էջ 200-212): Այնուհետեւ այդ յուշագրութիւնն առնուազն հինգ անգամ վերահրատարակուել է՝ «Երիտասարդ Հայաստան» թերթում (ԱՄՆ, 1958), «Նայիրի» շաբաթաթերթի «ի հաշիւ ժԵ տարուան 45-50 միացեալ թիւերուն» փոխարէն լոյս տեսած բացառիկ համարում[36], Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ Սարգիսեան կաթողիկոսի (Անթիլիաս, 1982), պատմական գիտութիւնների դոկտոր Բագրատ Ուլուբաբեանի («Բանբեր Հայաստանի արխիւների», Երեւան, 1989, թ. 3, էջ 110-125) եւ այս ուսումնասիրութեան հեղինակի (Երեւան, 2002) կողմից[37]: Վերջին չորս վերահրատարակութիւնների նախաձեռնողները Յովսէփեանցի յուշագրութեանը կցել են առաջաբաններ, որոնցում որոշակի անդրադարձել են Կարսի անկման ամենատարբեր, այդ թւում՝ գաղափարական, ռազմական եւ բարոյահոգեբանական պատճառներին: Բ. Ուլուբաբեանը յիշեալ վերահրատարակութիւնից անմիջապէս յետոյ հրատարակել է տուեալ ժամանակաշրջանին վերաբերող Գ. Յովսէփեանցի օրագիրը (էջ 125-148), իսկ այս տողերը ստորագրողը՝ արխիւային պետական (հայկական, ռուսական եւ բրիտանական) փաստաթղթեր, որոնցում եւս կան նման նիւթեր: Բուն յուշագրութեան մէջ ականաւոր եկեղեցական եւ ազգային գործիչը տեղտեղ գրում է զօրահրամանատարների ապաշնորհութեան, փչացածութեան (կոռումպացուածութեան), դասալքութեան եւ հայոց բանակում կռուելու կամքի իսպառ բացակայութեան մասին:

Հինգերորդ յուշագրողը իրադարձութիւնների օրերին Կարսում բուժակ աշխատած Արտաշէս Ալեքսանդրեանն է: Նրա յուշերն առանձին գրքով լոյս են տեսել 1986 թ., Երեւանում, «Կարս. 1920-21» խորագրով: Դրանք կրում են կոմունիստական իշխանութիւնների գաղափարախօսութեանը համահունչ ուղղուածութիւն, որի պատճառով էլ տեղեկութիւնների անաչառութեանը պէտք է մօտենալ որոշակի վերապահութեամբ: Այդուհանդերձ, նա եւս անդրադառնում է պարտութեան յիշեալ կողմերին՝ ամբողջ մեղքը բարդելով զինուորների դասալքութեան ու վերջինիս պատճառի՝ «աշխատաւորների գլխին պատուհաս դարձած եւ հակասովետական մոլուցքով կուրացած դաշնակցական «կառավարողների եւ սպայութեան» վրայ[38]:

Եօթերորդ յուշագրողը ներգաղթի բաժնի վարիչ-ղեկավար, դաշնակցական գործիչ Վահէ Արծրունին (Մելիքսէթ Մուրադեան) է, որը գործի բերումով 1920 թ. ապրիլին մեկնել էր Կարս: Քաղաքի անկումից յետոյ նա թաքնուել, իսկ 1921 թ. յունուարի կէսին յաջողել է ճեղքել թուրքական գրաւման օղակը եւ հասնել անվտանգ շրջան: Նրա յուշերի երեք պատումներ 2002 թ. աշնանը լոյս տեսան Երեւանում՝ «Հայ-տաճկական պատերազմը – Հայ սպայութիւնը – Շատախ» խորագրով, Նորայր Պահլաւունու խմբագրութեամբ եւ պատմաբան Գեղամ Բաղալեանի ծանօթագրութիւններով: Միացեալ հատորի ծաւալի մեծ մասը առաջին երկու գործերն են, որոնցում բազմաթիւ տեղեկութիւններ կան մեր ուսումնասիրութեան առարկայ հարցերի մասին: Ընդհանուր առմամբ Վ. Արծրունին եւս հաստատում է միւս յուշագրողների ասածները, թէեւ փորձում է մեղմել իր կուսակցութեան պատասխանատուութեան բաժինը հայոց այս մեծ ողբերգութեան մէջ՝ մեղքը առաւելաբար անհատների վրայ բարդելով:

---

[34] ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 10 նոյեմբերի, էջ 2:

[35] Տարօրինակ է, որ արուեստագիտութեան թեկնածու, ԵՊՀ դասախօս Լեւոն Չուգասզեանը Գարեգին եպիսկոպոսի՝ Կարսի ռազմաճակատում գործունեութիւնը վերագրում է «1918 թ. գարնանը». տե՛ս Լ. Չուգասզեանի «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա Յովսէփեան (1867-1952)» յօդուածը, «Նշանաւոր ճեմարանականներ» (յօդուածների ժողովածու), էջ 139:

[36] Յովսէփեանցի յուշագրութիւնը «Նայիրիում» վերահրատարակուել է «Կեանքիս ամենաղժբախտ օրը» վերնագրով:

[37] Չհաստատուած տեղեկութիւնների համաձայն՝ յուշագրութիւնը եւս մէկ անգամ վերահրատարակուել է «Շիրակ» ամսագրում (Բէյրութ), ամսագրի խմբագիր, պատմաբան Լեւոն Վարդանի նախաձեռնութեամբ:

[38] Արտաշէս Ալեքսանդրեան, «Կարս. 1920-21», Երեւան, 1986, էջ 25:

Մեզ յայտնի ութերորդ յուշագրողը Աբխազիայի Գուտաուդա քաղաքում ծնած եւ Սեպուհի հրամանատարութեամբ չորրորդ բրիգադում ծառայած մի երիտասարդ է՝[39] 13 յունիս – 5 նոյեմբեր 1920 ժամանակաշրջանի իր օրագրութեամբ[40]:

Կարսի խայտառակ պարտութեանը եւ դրան հետեւած ՀՀ լիակատար պարտութեանը յոյժ լաւատեղեակ, Ալեքսանդրապոլի հաշտութեան բանակցութիւններին ՀՀ պատուիրակութեան անդամ, 1919 թ. ապրիլի 12 - 1920 թ. հոկտեմբերի 30 ժամանակաշրջանում Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի մեծարժէք յուշերը առայժմ անտիպ են եւ պահպանւում են Հայաստանի ազգային արխիւում (ֆոնդ 477): Խառնիխուռն դասաւորուած այս յուշագրութիւնը (հազարաւոր էջեր) ընթերցելուց յետոյ, իր ազգի ներկայով ու ապագայով մտահոգ հայ անհատը ահռելի ճիգ պէտք է գործադրի... չխելագարուելու համար: Ղորղանեանը ներկայացնում է մերկ իրականութիւնը: Նա նշում է հայոց պարտութեան հիմնական պատճառները՝ բարոյահոգեբանական անկումային վիճակը, հասարակութեան անասնական անտարբերութիւնն իր ներկայի ու վաղուայ օրուայ նկատմամբ, պետական մտածողութեան գրեթէ իսպառ բացակայութիւնը բանակի հրամկազմում, պետական վարչամեքենայում եւ հասարակութեան մէջ, համատարած ալան-թալանը, ազգային արժէքների նկատմամբ քամահրական կամ անարգալից վերաբերմունքը եւ այլն: Նա չափազանց խիստ է քննադատում բանակի բարձրաստիճան սպայակազմին, մասնաւորաբար Կարսի նահանգում տեղակայուած զօրամասերի հրամանատարներին:

Կարսի անկման տարբեր պատճառների մասին մեծ քանակութեամբ նիւթեր կան նաեւ ՀՀ նախկին վարչապետներ Ալեքսանդր Խատիսեանի եւ Սիմոն Վրացեանի պատմագիտական մեծ արժէք ունեցող գրքերում[41], դաշնակցական որոշ գործիչների եւ դէպքերի ականատեսների կամ մասնակիցների յուշագրական պատառիկներում, հրապարակուած արխիւային ու անտիպ բազմաթիւ փաստաթղթերում եւ այլն:

Պատմագիտական կարեւոր նշանակութիւն ունեն հիմնական մասնակիցներից Քեազիմ Կարաբէքիրի յուշերը, որոնց՝ Կարսի անկմանը եւ ընդհանրապէս ՀՀ-ի վրայ թուրքական յարձակման վերաբերեալ հատուածները Ա. Շորվօղլեանի թարգմանութեամբ լոյս են տեսել Բէյրութի «Զարթօնք» օրաթերթի 1966 թ. յուլիսի եւ օգոստոսի համարներում՝ «Քեազըմ Կարաբէքիրի յուշերը Հայաստանի Հանրապետութեան վրայ թրքական յարձակումներուն մասին» վերնագրով:

Վերոյիշեալներն են այն հիմնական աղբիւրները, որոնց հիման վրայ էլ կատարուել է մեր այս ուսումնասիրութիւնը:

Մեր համոզմամբ՝ Կարսի անկման լաւագոյն եւ ճշմարտացի գնահատականը տուել է մեծ ռազմագէտ, քաղաքագէտ եւ ազգային գաղափարախօս Գարեգին Նժդեհը՝ «Որդիների պայքարը հայրերի դէմ» աշխատութեան մէջ: Երկրորդ՝ «Կեղծիքի գերութիւնը» վերնագրուած գլխում, նա «մեծ կեղծիք» է համարում Կարսի անկման բուն պատճառը այլ պատճառներով (այլեւայլ երկրորդական հանգամանքներով) փոխարինելու յանցագործ վարքագիծը: Նժդեհը գրում է, թէ իմաստուն սովորութիւն ունեն ժողովուրդները՝ «պատերազմից յետոյ հաշուի նստել, պարզել իրենց յաջողութեանց եւ պարտութեանց պատճառները: Յաղթականը կուսումնասիրէ իր յաղթանակի պատճառները՝ վաղը եւս յաղթանակելու համար, պարտուածը կանդրադառնայ իր պարտութեան պատճառներին՝ վաղը նրանցից խուսափելու նպատակով: Մի տխուր բացառութիւն է կազմում աստուածապահ մեր ժողովուրդը: Տարիներ են անցել Կարսի անկման օրէն, տարիներ, եւ <...> այդ բերդի շուրջը տեղի ունեցած ողբերգութեան մասին հրապարակում կայ ամեն ինչ, միայն ոչ ճշմարտութիւն»[42]: Նժդեհը նշում է, որ այս մասին շատ են խօսում, մտաւորականից սկսած մինչեւ սափրիչը, «բայց ոչ ճշմարտութիւնը երեւան հանելու մտահոգութեամբ: <...> եւ ամեն մէկը, որ տգիտութիւն եւ վատութիւն ունեցաւ իրենից դուրս փնտրելու աղէտի պատճառները՝ կրկնեց յիմարութիւններ միայն»[43]: Նա գրում է. «Ընդունել ճշմարտութիւնը հանրապետական բանակի անյաջողութեանց մասին, պարզել Կարսի անկման իսկական

[39] Նրա ինքնութիւնը չեն կարողացել պարզել յուշագրութեան հրատարակիչները: Մեր ճիգերը եւս առայժմ ապարդիւն են: Հետեւաբար նրան յղումներ կկատարենք որպէս «անանուն» հեղինակի:

[40] Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», Երեւան, 1994:

[41] Ալեքսանդր Խատիսեան, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», Աթէնք, 1933 (1924-1925 թթ. լոյս է տեսել «Հայրենիք» ամսագրի համարներում, վերահրատարակուել է Բէյրութում, 1968 թ.): Սիմոն Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Փարիզ, 1928 (վերահրատարակուել է Բէյրութում, 1958 թ. ու Երեւանում, 1993 թ.):

[42] Գ. Նժդեհ, «Հատընտիր», էջ 84-85:

[43] Նոյնը, էջ 85:

պատճառները – կնշանակի պատասխանատուութեան բաժին ընդունել»: Նժդեհը յայտարարում է. «Կարսի ամօթը Հ. Հանրապետական կառավարութեանը չէ միայն, այլ ողջ հայ ժողովրդի: Չափւում են, բաղխւում են բանակները, բայց յաղթում կամ պարտւում են ազգերը, ցեղերը[44]: Կարսի պատերի տակ պարտուողը հայ զինուորն ու զօրավարը չէին միայն, այլ բովանդակ հայութիւնը, հայ ժողովրդի՝ իր ամբողջութեան մէջ անմարտունակ, անարի, անմշակ հոգին:

Սհա՛ ճշմարտութիւնը, հա՛յ երիտասարդ...»[45]:

Կարսի մարզի թուրքական գրաւումը վաւերացրած՝ Կարսի 1921 թ. հոկտեմբերի 13-ի դաշնագրի ստորագրումից շուրջ երկու ամիս անց՝ 1921 թ. դեկտեմբերի 9-ին համարեայ նոյնը գրել էր Ամենայն Հայոց բանաստեղծը: Յովհաննէս Թումանեանը Վենետիկ՝ Աւետիք Իսահակեանին ուղղած իր նամակում գրում է. «Կարճ ասեմ. մենք թէ՛ դրսից, թէ՛ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխաւորապէս մենք: Մենք եմ ասում, եւ սրա մէջն է ճշմարտութիւնը: Մի մասը՝ խաչագող սրիկաներ, մի մասը՝ գողեր ու աւազակներ, մի մասը՝ ապիկար թշուառականներ: <...> Էսքան աղէտների ու պարտութիւնների մէջ ո՛չ մի մեղաւոր չերեւաց, ո՛չ ոք ոչ պատասխանի կանչուեց, ոչ պատասխան տուեց: <...> Եւ ոչ մէկը գոնէ անձնասպան չեղաւ[46], որ ապացուցաներ, թէ գոնէ ամօթ ու խղճմտանք կայ էս մարդկանց մէջ կամ էս ժողովրդի մէջ: Բայց ես ի՞նչ եմ ասում – չկարողացան գոնէ վշտանալ կամ վշտացած երեւալ»[47]:

[44] Նոյնը հաստատում է նաեւ Հայ Գնդունին. «Բանակները իրարու դէմ պատերազմելու ատեն հոգեկան ծիրքե՛րն են որ կչափուին երկու կողմերուն կամ թշնամիներուն միջեւ, ամեն բանէ աւելի» (ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 10 նոյեմբերի, էջ 2):

[45] Գ. Նժդեհ, «Հատընտիր», էջ 86:

[46] Յովհաննէս Թումանեանը խտացնում է գոյները՝ իր խոր վրդովմունքն արտայայտելու համար: Նա չէր կարող չիմանալ երեք սպաների ինքնասպանութեան մասին: Հազարապետ Չիլինգարեանն ու գլխապետ Բագրատունին դաւանում էին բարոյական անանց արժէքներ, մինչդեռ գնդապետ Մազմանեանի ինքնասպանութիւնը աւելի շուտ սեփական մեղքերի քաւութեան համար էր, քան համազգային ամօթի զգացման հետեւանքով կատարուած քայլ, ինչպէս կտեսնենք այս ուսումնասիրութեան մէջ:

[47] Լեւոն Հախվերդեան, «Թումանեանը եւ հայոց պատմական ճակատագիրը», գրուել է 18 յունուար 2000-ին: Տե՛ս Լ. Հախվերդեան, «Մենք եւ մեր դժուար օրերը» (յօդուածների ժողովածու), Երեւան, 2000, էջ 59-60:

Նժդեհի եւ Թումանեանի դատողութեանը համահունչ է Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի տեսակէտը, թէ Կարսի անկման եւ պետականութեան կործանման համար պատմութիւնը մեղադրեալների նստարանին տեղ վերապահած կլինի հայ հասարակութեան համար[48]:

Նոյնը հաստատում է նաեւ Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի բարձր կոմիսար, գնդապետ Ստոկսը՝ 1920 թ. դեկտեմբերի 24-ին իր կառավարութեանն ուղարկած ծածկագիր զեկուցագրում. «(Հայ - Գ. Ե.) ժողովրդի մօտ կռուելու կամքի բացակայութիւնը բացատրւում է նրանով, որ հենց սկզբից համոզուած էին, թէ պայքարը իրենց ոյժերից վեր է»[49]:

Մի խօսքով՝ **հայ ժողովուրդը հենց սկզբից չի ուզեցել կռուել:**

Սա՛ է ճշմարտութիւնը Կարսի անկման մասին:

Տարօրինակ է, որ յուշագրողների մեծ մասը Կարսի անկումը համարում է «չսպասուած կորուստ», «անսպասելի», «անակնկալ» (Հայ Գնդունի)[50], «անակնկալ», «անակնկալ նոյնիսկ զինուորական բարձր իշխանութեան համար» (Գարեգին արք. Յովսէփեանց)[51], «անակնկալ» (Կորիւն քահանայ Քոթանջեան)[52] եւ այլն, մինչդեռ, ըստ մեզ, **այդ խայտառակ անկումը միանգամայն բնական, տրամաբանական ու օրինաչափ էր, եւ իսկական անակնկալն այն կլինէր, եթէ Կարսը թշնամու ձեռքը չանցնէր...**

* * *

Այսօր հայ-թուրքական հաշտեցման, ՆԱՏՕ-ի հետ գործակցութեան, զիջումների եւ փոխզիջումների մասին խօսակցութիւններով հայ հասարակութեան զգօնութիւնը բթացնող ամենատարբեր արարածները (ՀՀ նախագահ, պաշտպանութեան եւ արտաքին գործերի նախարարներ, զանազան տրամաչափի ու կշռի պետա-

[48] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 14, թ. 69:

[49] <Armenia – Political and Ethnic Boundaries 1878-1948>, compiled by Anita Burdette, <Archive> Editions, London, 1998, pp. 659-660. Փաստաթղթի հայերէն թարգմանութիւնը տե՛ս «Ոգուն չապաւինելու արդիւնքը», էջ 59-60:

[50] ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 29 հոկտեմբերի, էջ 1:

[51] «Ոգուն չապաւինելու արդիւնքը», էջ 41:

[52] «Բանբեր Հայաստանի արխիւների», թիւ 1, 2006, էջ 101:

կան պաշտօնեաներ, քաղաքական ապազգային ոյժեր, խաղաղապաշտներ, խմբիշխաններ (օլիգարխներ), Եւրախորհրդին ՀՀ անդամակցութեամբ արբեցածներ, եւրոպական արժէքներից ճառողներ, ազգայնական-ցեղակրօն գաղափարախօսութեանը դաւաճանած կեղծ ազգայնական-նժդեհական դաշնակցա-հանրապետականներ, գոյնզգոյն աղանդաւորներ, ստամտաւորականներ, վարձակ լրագրողներ, ծախու պատմաբաններ եւ այլն, եւ այլն, եւ այլն), հայկական թիկունքում հոգեբանօրէն նախապատրաստում են հայոց արեւելից կողմանց ազատագրուած տարածքների դաւաճանական յանձնումը թշնամուն, մի գուցէ՝ Մեղրու շրջանն ու ամբողջ Սիւնիքն էլ վերադիր...

Այսօր՝ Արցախեան ռազմաճակատներում տարած փառապանծ յաղթանակներից ընդամէնը 13-15 տարի անց, հայ ժողովրդի ստուար հատուածը ապրում է պարտուողական հոգեբանութեամբ (որի ամենացցուն արտայայտութիւններն են Հայրենիքից շարունակուող ֆիզիկական եւ հոգեւոր արտագաղթը): Մինչ Ադրբեջանում պետութեան ղեկավարից մինչեւ «չայխանաներում» շաղակրատող ամենայետին ադրբեջանցի թշնամին օրինիբուն խօսում է Արցախին ի հարկին պատերազմով վերատիրանալու մասին ու այդ պատերազմին նախապատրաստւում է, եւ առաջին հերթին՝ բարոյահոգեբանական ոլորտներում, հայկական միջավայրում յիշեալները հետեւողականօրէն տանում են պարտուողական քարոզչութիւն, մինչեւ իսկ հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական բարեկամութեան (sic!) մասին են ցաբռտում[53], կատարում են ազատամարտին մասնակից, բայց իրենց ուղեգծին հակառակողների հոգեբանական ոչնչացման հետեւողական աշխատանք: Այս գիծը այլ կերպ քան դաւաճանութիւն ՀՀ պետական եւ հայոց ազգային շահերին կարելի չէ գնահատել: Նրանց ձայնակցում են ՀՀ զանգուածային լրատուութեան դաշտի մեծագոյն մասը, պատեհապաշտ «մտաւորականութիւնը», ստոր յատկանիշներ կրող ամենատարբեր հայանուն արարածները: Այս հետեւողական աշխատանքի հետեւանքով այսօր հայոց մէջ խախտուել է հաւատը վերջնական յաղթանակի նկատմամբ, էականօրէն նահանջել են ազգային ոգին, յարգանքը ազգային ու պետական արժէքների (ազգային եւ պետական միակ լեզու, հայոց պատմութիւն, հայկական մշակոյթ, Հայոց եկեղեցի, ՀՀ պետականութիւն եւ այլն) նկատմամբ եւ, որպէս բնական հետեւանքը այս ամենի, պայքարելու, դիմադրելու, տոկալու եւ յաղթանակելու կամքը: Իսկ նժդեհեան դիպուկ բնորոշումով՝ «թշնամու յաջողութիւնը սկսւում է հենց այն վայրկեանից, երբ իր դէմ կռուող բանակի հրամանատարութեան (մենք կաւելացնէինք՝ ժողովրդի - Գ. Ե.) մէջ սկսւում է տկարանալ յաղթանակելու հաւատը»[54]:

Եթէ տրամագծօրէն չշրջենք այս կացութիւնը, հայութեան վերջնական կործանումը կդառնայ անխուսափելի, Կարսի խայտառակութեան կրկնութիւնից խուսափումը կդառնայ պատմական օրինաչափութիւնից շեղում, հրաշքի համազօր մի բան:

Իսկ հրաշքներ միշտ չեն պատահում...

Հինգ տարի առաջ, վերահրատարակելով Գարեգին արք. Յովսէփեանցի յուշագրութիւնը, մեր առաջաբանի աւարտին ահազանգ էինք հնչեցրել՝ հայ ժողովրդին կոչ անելով սթափուել խոր նիրհից, չդաւաճանել ազգային ոգուն, «այլապէս Կարսը ամեն վայրկեան կարող է կրկնուել»[55]: Նոյնը կրկնում ենք այսօր՝ բազմակի ուժգնութեամբ, այլապէս ահազանգը անխուսափելիօրէն վերածուելու է համազգային մահազանգի՝ մի նոր 1915 թուականի...[56]

---

[53] 2006 թ. յուլիսի վերջին Հայաստանի Հանրապետական կուսակցութեան խորհրդի նախագահ «ընտրուած» ՀՀ պաշտպանութեան նախարար, Ազգային անվտանգութեան խորհրդի քարտուղար Սերժիկ Սարգսեանին (նրա անձնագրային անունն այս է) արժէ հարց տալ, թէ Գարեգին Նժդեհը ե՞րբ եւ որտե՞ղ է հայ-թուրքական բարի դրացիութիւն քարոզել...

[54] Գ. Նժդեհ, «Հատընտիր», էջ 159:

[55] «Ոգուն չապաւինելու արդիւնքը», էջ 13: Նոյնն ասել ենք 2002 թ. դեկտեմբերի 20-ին Բէյրութում, «Լիբանանահայ գրական շրջանակի» սրահում «Կարսի անկման ներքին ծալքերը» խորագրով մեր դասախօսութեան ընթացքում:

[56] Երիտթուրքական յեղաշրջումից յետոյ Անդրանիկը կոչ էր անում այդ «յեղափոխութեամբ» հարբած, թուրքի հետ «եղբայրացած», յիմարացած հայութեանը չհաւատալ երեւոյթներին, լինել զգօն եւ սթափ, ապաւինել միայն եւ միայն սեփական ազգային ոգուն: Նրան շատ քչերը լսեցին: Ազգային հերոսի յորդորը չլսելու արդիւնքը հայ ժողովրդի պատմութեան մեծագոյն ողբերգութիւնն էր...

Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները

Քննարկելով Կարսի անկման եւ դրան յաջորդած՝ ՀՀ կործանման պատճառները, մենք քննարկելու ենք առաւելաբար գաղափարական, զուտ ռազմական եւ բարոյահոգեբանական բնոյթի պատճառները (իրենց ենթաբաժանումներով), թեւ երբեմն անդրադառնալու ենք այլ բնոյթի պատճառների, որովհետեւ բոլոր գործօնները օրգանապէս միահիւսուած են: Նոյն տրամաբանութեամբ յայտնում ենք, որ պատճառների բնոյթի մեր դասակարգումն ու ենթադասակարգումը պայմանական են. որոշ ռազմական սխալներ իրենց խորքում ունեն գաղափարական, բարոյահոգեբանական նախապատճառ(ներ) եւ հակառակը: Հետեւաբար հարկաւոր է միշտ նկատի ունենալ մեր դասակարգման ու ենթադասակարգման պայմանական բնոյթը:

Ա. Կարսի անկման եւ ՀՀ բանակի բայբայման գաղափարական պատճառները

Գաղափարական եւ ոգեղէն ոլորտներով պայմանաւորուած պատճառները համարում ենք որոշիչ եւ առաջնային: Դրանց բացակայութիւնից կամ թուլութիւնից են ածանցւում միւս բոլոր պատճառները:

Ա. 1. Բանակի հրամկազմի ապազգային նկարագիրը եւ նրա մէջ հայկական պետականութեան գաղափարի թուլութիւնը կամ բացակայութիւնը

ՀՀ բանակի բարձրաստիճան սպայակազմի (գեներալներ, գնդապետներ եւ փոխգնդապետներ) զգալի մասը ցարական բանակի ոչ հայազգի (հիմնականում՝ ռուս) սպաներ էին՝ Զինգեւիչ, Երուսալիմսկի, Օռլովսկի, Նեստերովսկի, Մեդվեդեւ, Կորոլկով, Շնեուր, Գրոոս, Բաբաջանով եւ այլն: Գեներալների դաւադրութեան հետեւանքով Կարսի բերդի հրետանու հրամանատարութիւնից մինչեւ ուղն ու ծուծը հայ եւ հմուտ գնդապետ Զանփոլադեանի՝ բոլշեւիկ լինելու անհիմն մեղադրանքով հեռացուելուց[57] յետոյ նրա փոխարէն նշանակուեց բուլղար գնդապետ Բաբաջանովը: Գեներալ Արտեմ Յովսէփեանի շտաբի պետն էր լեհ փոխգնդապետ Սիգիզմունդ Գրոոսը:

[57] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 427-430:

Հայազգի բարձրաստիճան հրամանատարների ջախջախիչ մեծամասնութիւնը նոյնպէս օտար էր իր իսկ Հայրենիքում: Նրանք «ոչ միայն անծանօթ էին հայ լեզուին ու իրականութեանը, այլեւ հայ զօրքին»[58], հոգեբանօրէն չէին նոյնացել իրենց ազգի ու նրա պատմամշակութային ժառանգութեանը (ներառեալ՝ հազարամեակների աւանդոյթներ ունեցող հայկական ռազմարուեստին ու հայ զինուորականութեան պատուոյ վարքականոնին[59]), հետեւաբար չէին կարող ունենալ ազգային արժանապատուութեան զգացում, ինչպէս եւ ազգի առաջ պատասխանատուութեան գիտակցութիւն[60]: Նրանք հոգեբանօրէն չէին նոյնացել հայկական հողին, ուստի նրանց համար այդ հողի պահպանումը կամ կորուստը չէր կարող որպէս անձնական պատուի հարց կամ ողբերգութիւն ընկալուել: Հայ ազգի հետ նրանց առնչութիւնները սահմանափակւում էին իրենց ազգային ծագման մասին յիշողութեամբ եւ ոչ աւելին: Նրանց մէջ չէր նկատւում նոյնիսկ «էթնիկական երկատուածութեան» երեւոյթ[61]: Գերագոյն հրամանատար, գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբէգեանն ընդամէնը մի քանի բառ գիտէր Թիֆլիսի հայոց բարբառից, իսկ գեներալ-մայոր Դանիէլ-բէգ Փիրումեանը՝ Արցախի բարբառից: Միւս հայազգիների մեծագոյն մասը մէկ բառ իսկ հայերէն չգիտէր եւ ամենադոյզն ճիգ էլ չէր անում սովորելու պետութեան պաշտօնական միակ լեզուն: Ռուսական դպրոցներում սովորած սպաները հայ էին «անունով միայն, մեծ մասը ցարական ռեժիմի մարդիկ էին, անտեղեակ՝ մեր կեանքին, անգիտակ՝ մեր լեզուին: Շատերը լաւ հայեր էին, բայց ոչ հայրենասէրներ[62]: Մի մասը <...> պարզ վարձկան էր, օտար՝ մեր ձգտումներին, մեր ժողովրդի կարիքներին: <...> Կառավարութիւնը

[58] Վահէ Արծրունի, «Հայ-տաճկական պատերազմը – Հայ սպայութիւնը – Շատախ», Երեւան, 2002, էջ 62:

[59] Այս մասին տե՛ս Արմէն Այվազեան, «Հայ զինուորականութեան պատուոյ վարքուկանոնը», Երեւան, 2000:

[60] Տե՛ս Ալբերտ Նալչաջեան, «Էթնիկական հոգեբանութիւն», Երեւան, 2001, էջ 61-62:

[61] Այսինքն՝ «նոյն անձի մէջ երկու էթնիկական ես-կոնցեպցիաների գոյակցութիւնը» (նոյնը, էջ 460):

[62] Բացարձակապէս համաձայն չենք նման գնահատականին: Ոչ հայրենասէր, ազգային լեզուն արհամարհող հայազգի արարածը չի կարող հայ համարուել:

չկարողացաւ վերակազմել մեր զօրքը ազգային հիմունքներով»[63]: Բարձրաստիճան «հրամանատարներից շատերը երազում էին ռուսական զօրքի մուտքը Հայաստան եւ դենիկինեան օրերին բարձրածայն մեր բանակը համարում էին մի զօրամաս ռուսական Կամաւորական բանակի»[64]: Նրանք «անկախ Հայաստանը համարում էին ժամանակաւոր մի երեւոյթ, որ պիտի չքանար ռուսական ազդեցութեան տակ»[65]: Անհնար է առանց արգահատանքի կարդալ Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի արձանագրած հետեւեալ տողերը. «Արհամարհալից եւ հեգնօրէն, այդ գեներալները եւ գնդապետները ծաղրում էին «հայկական սուվերէնիտետը», դրուատում էին ռուս պետական անցուդարձը, հայ մինիստրներին «խմբապետներ» անուանում եւ կառավարութեան պահանջը բանակի ազգայնացման մասին զաւեշտ[,] զառանցանք համարելով, այդ առիթով ռուսերէն էին սրախօսում... Բաժակաճառերը վերջանում էին ռուսերէն «ուռ[ռ]այով», ուր բոլորի հայեացքը դառնում էր դէպի հիւսիս»[66]: Նոյն աղբիւրը արձանագրում է նաեւ. «Մեր հրամանատար կազմը, առանձին առանձին եւ բոլորը միասին, ժամանակաւոր հիւրեր էին համարում իրանց Հայկական բանակում»[67]:

Բարձրաստիճան հրամանատարութիւնը մի աշխարհ էր, իսկ զինուորութիւնը՝ ամբողջովին մէկ այլ աշխարհ, «հայկական

[63] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 67-68: Բարձրաստիճան սպայութեան ապազգային դիմագծի, վարձկանի հոգեբանութեան եւ նրա ու շարքային զինուորութեան միջեւ խորը անդունդի մասին տե՛ս նաեւ ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թթ. 84, 159, մաս 2, թթ. 197, 235-236, 252, 255, 284: Նոյնը, գ. 18, թ. 66, գ. 16, թ. 47:

[64] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 67: Նոյնը հաստատում է նաեւ Բիւրո-կառավարութիւնում ներքին գործերի եւ ռազմական նախարար, երկրի փաստական դիկտատոր Ռուբէն Տեր-Մինասեանը (Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները» հ. է, Լոս Անջելոս, 1952, էջ 214. մէջբերուել է Արարատ Յակոբեանի «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմութեան փորձն ու դասերը» գրքոյկից, էջ 28): Այս խայտառակ խոստովանութիւնից յետոյ կարելի՞ է արդեօք Հայաստանի առաջին Հանրապետութիւնը անկախ պետութիւն համարել...

[65] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 68: Տե՛ս նաեւ Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», էջ 40: ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 403, գ. 18, թ. 60:

[66] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 400:

[67] Նոյնը, մաս 2, թ. 236:

քաղաքական միտքը եւ զինուորական դասը անջատ էութիւններ էին...»[68]: Հայրենասիրական ջիղ, լրջութիւն, բանիմացութիւն եւ ռազմական պատուախնդրութիւն ինչ-որ չափով ունեցել են միայն գեներալ-լեյտենանտ Մովսէս Սիլիկեանը (թեեւ նա էլ հայերէն չգիտէր[69]) եւ Հայոց բանակի առաջին գնդի երբեմնի հրամանատար, գնդապետ Յարութիւնեանը: Այդուհանդերձ Սիլիկեանը «ճակատագրական այս պատերազմում <...> իրեն լաւ կողմերով չդրսեւորեց»[70]:

Զինհրամանատարների ապազգային-հակազգային եւ հակապետական նկարագիրը դրսեւորուել է նոյնիսկ թուրքական գերութեան մէջ: Ըստ Արտ. Բաբալեանի վկայութեան՝ «Կարսում գերութեան մէջ գտնուող ռուսահայ սպաների մեծ մասն ուրախ էր, որ Հայաստանում խորհրդային իշխանութիւն էր հաստատուել», եւ «միայն երեք-չորս հոգով էինք հոգով-սրտով տանջւում մեր երկրի կորուստով: Միւսները դէն նետեցին ուսադիրները եւ սկսեցին օգտագործել «ընկեր» բառը»[71]:

Բոլոր յուշագրողները շեշտում են այն միտքը, որ ՀՀ-ն թէեւ ունեցաւ զինուորութիւն եւ զինուորական հրամանատարութիւն, բայց չկրցաւ ստեղծել ազգային բանակ[72]: Ուստի «նա, բնականաբար, պէտք է պարտուեր»[73]:

[68] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 11, էջ 110: Օտար եւ օտարացած հայազգի բարձրաստիճան հրամանատարների մէջ պետութեանը իր նուիրուածութեամբ առանձնացել է... ռուս Նեստերովսկին. նա «տարօրինակօրէն կապուած էր Հայաստանին», որն համարել է «իր նոր ու հարազատ հայրենիքը»: Ասողներ էլ կային, որ քաջ համարուող չորրորդ գնդի «իսկական փառքն ինք՝ փոխգնդապետ Նեստերովսկին էր» (Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 60):

[69] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 362, 393: Արժէ նշել, թէ Սիլիկեանը ազգութեամբ ուդի էր:

[70] Արարատ Յակոբեան, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմութեան փորձն ու դասերը», էջ 19:

[71] Կտրիճ Սարդարեան, «Հայ-վրացական յարաբերութիւնները 1918-1921 թթ.», Երեւան, 2002, էջ 176:

[72] Այս մասին տե՛ս, օրինակ, ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 11, էջ 108: Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 57:

[73] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 9, թթ. 1-2: Ոգով, հոգեբանութեամբ եւ քաղաքական իդէալներով ազգային բանակի չգոյութիւնը հաստատելով հանդերձ, պատմաբան Ա. Յակոբեանը աւելի մեղմ է արտայայտւում՝ յայտնելով, թէ «նման բանակից հազիւ թէ հնարաւոր էր շօշափելի յաջողութիւններ

Ա. 2. Բարձրաստիճան սպայակազմի լեզուամտածողութիւնն ու օտարամոլութիւնը

Օտարամոլութիւնն առաջին հերթին արտայայտւում է ազգային լեզուի անտեսումով, քանի որ ազգային լեզուն եւ ազգային ինքնագիտակցութիւնը անխզելիօրէն փոխկապակցուած երեւոյթներ են[74]: Իսկ ի՞նչ ենք տեսնում ՀՀ բանակում:

Վերեւում անդրադարձանք Հայոց բանակի բարձրաստիճան հրամանատարների՝ ազգային-պետական միակ լեզուի նկատմամբ վերաբերմունքին: Մի քիչ աւելի մանրամասնենք այս հարցը:

ՀՀ բանակի այդ հրամանատարները հայ զինուորների հետ խօսում էին... թարգմանիչի միջոցով: Ուշագրաւ է այն փաստը, որ Կարսի անկումից մի քանի օր առաջ, ժամանելով բերդաքաղաք, գերագոյն հրամանատար Նազարբէգեանն ուզեցել է դիմել զօրքին՝ հայերէնով, բայց հազիւ կարողացել է արտաբերել «կեցցէ՛ Հայաստան», այն էլ «մեր ականջին օտար եւ խորթ առոգանութեամբ», որով մի անգամ էլ երեւաց «այն վիհը, որ բաժանում էր մեր հրամանատար կազմը հայ զինուորից եւ հայ ժողովրդից...»[75]:

Մեր համոզումով՝ հայոց լեզուի նկատմամբ անարգական մօտեցումը էական դեր է կատարել Կարսի անկման եւ, առհասարակ, հայկական առաջին հանրապետութեան վերացման հարցում: Յիշատակենք առաւել արտառոց վկայութիւններից ընդամենը երկուսը:

«Սեպուհը բանակի շտաբից հեռագիր ստացաւ, որը ես թարգմանեցի: Բանակն է, վերջապէս երկու տարուայ անկախ պետական կեանք ունենք, եւ դեռ կառավարական հաստատութիւնների եւ զօրական շտաբների գրութիւնները կատարւում են ռուսերէն, սա ի՞նչ խայտառակութիւն է, ուզում էի հրաժարուել կարդալ եւ թարգմանել հեռագիրը, բայց Սեպուհից քաշուեցի, չնայած սա ամենից շատ է ատում օտարամոլութիւնը»[76]: «Սեպուհի կայանը բուն հայկական շտաբ էր, ոչ մի ռուսական խօսք եւ ոչ մի ռուսախօս ու ռուս»[77]:

Յատկանշական է նաեւ հետեւեալ օրինակը. «Կարս ժամանած 20 սահմանապահ սպաներից 17-ը ռուսներ էին, երեքն էլ հայեր, <...> (որոնք - Գ. Ե.) հայերէն ոչ մի բառ չգիտէին», իսկ վրացական սահմանապահ զօրքի հրամանատարները «բացառապէս վրացիներ էին եւ բացառապէս վրացերէն խօսող ու մտածող»: Այս հայանուն սպաները «նոյնիսկ ծաղրում էին իրանց մայրենի լեզուն»[78]: «Ես չէի հասկանում, հայկակա՞ն հաստատութիւն է այդ, թէ՞ նախկին ռուսական, ուր յօշոտւում եւ ծաղրի է ենթարկւում հայկական իշխանութիւնը»,- վրդովուած գրում է Կարսի նահանգապետն իր յուշերում[79]:

Ազգային ու պետական լեզուի եւ հայկական պետականութեան նկատմամբ անարգական վերաբերմունքի արտայայտութիւն են հետեւեալ երկու դէպքերը, որոնց «հերոսն» է գեներալ Յովսէփեանը: Ֆրանսիայի ռազմական ներկայացուցիչ Պուադեբարը երբ Կարսում հայոց բանակի գնդերին դիմում է հայերէնով, «Ֆրանսիացու հայերէն արտասանած այդ ողջոյնը, ի մեծ խայտառակութիւն ներկայ հայ հասարակութեան, ստիպուած էին ռուսերէն թարգմանելու... հայ գեներալին...»[80]: Էթնոհոգելեզուական վերլուծութեան համար շատ աւելի ուշագրաւ է նոյն ականատեսի՝ Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի երկրորդ վկայութիւնը.

ակնկալել» (Արարատ Յակոբեան, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմութեան փորձն ու դասերը», էջ 28):

[74] Ալբերտ Նալչաջեան, «Էթնիկական հոգեբանութիւն», էջ 61-62:

[75] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 371-373: Զարմանալի հետաքրքրական է նաեւ այն փաստը, որ ՀՀ բանակի անյաջողութիւնների շարանի օրերում, Նազարբէգեանը «թողել էր ռուս պաշտօնազգեստը եւ պճնուել էր հայկական զինուորական տարազով: <...> Այդ օրերում նա հագնում էր իր փառաւոր անցեալի պատուալից գլխաւոր շքանշանները» (նոյնը, գ. 9, թ. 3): Յիշեցնենք, որ Կիլիկիայի հայկական թագաւորութեան վերջին օրերին, երբ պետութեան տարածքը սահմանափակուել էր մայրաքաղաք Սսի միջնաբերդով, վերջին թագաւորը՝ Լեւոն Զ Լուսինեան պղնձէ ցածրարժէք փող է թողարկել՝ «Լեւոն թագաւոր ամենայն հայոց» «պատուալից» մակագրութեամբ...

[76] Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», էջ 21: Նոյնը հաստատում է նաեւ Ստ. Ղորղանեանը (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 64):

[77] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 69: Տե՛ս նաեւ նոյնը, գ. 7, մաս 2, թ. 204: Նոյնը, մաս 3, թթ. 389-390:

[78] Նոյնը, մաս 1, թ. 151:

[79] Նոյնը, թ. 153:

[80] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 402: Ցաւով արձանագրում ենք, որ Հայաստանի երրորդ Հանրապետութեան երկու բարձրաստիճան զինուորականների (գեներալ-գնդապետներ), ինչպէս եւ ՀՀ ու ԼՂՀ մի շարք գեներալ-լեյտենանտների ու գեներալ-մայորների լեզուն եւ լեզուամտածողութիւնը այսօր եւս ռուսերէնն է, իսկ «հայախօսների» մեծ մասը հայոց լեզուն պարզապէս խոշտանգում է...

«Երբ Անտանտը ճանաչեց Հայկական հանրապետութիւնը[81], այդ առիթով Կարսում եկեղեցական մաղթանք կատարուեց եւ մեծ զօրահանդէս: Երբ ես կարդացի մինիստր-նախագահի այդ առիթով հեռագիրը, ժողովուրդը եւ զօրքը ցնծալից «կեցցէ» էր գոչում: Բայց ռուսախօս մի գեներալ՝ գեն. Յովսէփեան, խոժոռ աչքեր անելով հայ գումարտակներին, հրամանալից կրկնում էր – нет[82], ուռռա, ուռռա, կարծես հաւանութիւն չտալով հայկական զգացմունքների իւրայնի արտայայտութեանը...»[83]:

Այդուհանդերձ ՀՀ ղեկավարութիւնը համապատասխան լուրջ միջոցների չդիմեց՝ պետական մարմիններում եւ յատկապէս բանակում լեզուական խայտառակ իրավիճակը հիմնովին փոխելու: Աւելին՝ նրա ձեռնարկած մի քանի միջոցառումները ոչ միայն չգործադրուեցին, այլեւ դրանով իսկ էլ աւելի վարկաբեկեցին պետականութեան գաղափարը: Այդ միջոցառումներից էր ՀՀ կառավարութեան 1920 թ. մայիսի 30-ին հաստատած «Պետական լեզուն չիմացող պաշտօնեաների լիկվիդացիայի մասին» օրէնքը, որն այդպէս էլ մնաց թղթի վրայ[84]:

[81] Սպիտակ ռուսների հետ մանեւրելու հնարաւորութիւնը բաց չթողնելու համար, դաշնակից պետութիւնները իրողապէս (դէ ֆակտո) ճանաչեցին ոչ թէ Հայաստանի Հանրապետութիւնը, այլ նրա կառավարութիւնը:

[82] Նիէթ, «Ոչ» (ռուսերէն):

[83] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 401:

[84] Այս օրէնքը յայտարարելով «ժամանակավրէպ», պատմաբան (այժմ՝ պատմական գիտութիւնների թեկնածու) Վանիկ Բաբաջանեանը դա համարում է «աւելի շատ արդիւնք Բիւրո-կառավարութեան ոչ ռուսական հակումների». տե՛ս Վանիկ Բաբաջանեան, «Միջկուսակցական յարաբերութիւնները Հայաստանի Հանրապետութիւնում բոլշեւիկեան հակապետական ելոյթների եւ դրանց հետեւանքների յաղթահարման շրջանում (1920 թ. մայիս-օգոստոս)», Երեւան, 2006, էջ 15: Մեր համոզմամբ, երկու տարի առաջ անկախութիւն հռչակած որեւէ պետութեան մէջ նման օրէնքի ընդունումը ոչ միայն չի կարող «ժամանակավրէպ» լինել, այլ պատմական անհրաժեշտութիւն է, այլապէս պետականութեան հիմքերը չեն կարող ամրապնդուել, ինչն էլ կառաջնորդի նրա կորստին, ինչպէս եղաւ Հայաստանի առաջին Հանրապետութեան պարագային: Եւ մենք, ահազանգ հնչեցնելով աւելի քան 15 տարի առաջ անկախութիւն հռչակած ՀՀ-ում ազգային ու պետական ՄԻԱԿ լեզուի այսօրուայ դիրքերի խայտառակ թուլութեան փաստի կապակցութեամբ, զգուշացնում ենք, որ նման վարքագիծը կարող է յանգեցնել պետականութեան կորստին:

Օտարազգի եւ հայանուն, բայց ազգուրաց գեներալներին ու գնդապետներին հովանաւորում էր զօրաց նախարար, ազգային ազատագրական պայքարի առաջամարտիկ եւ ազգային արժէքների պահպանութեան նախանձախնդիր կուսակցութեան՝ ՀՅԴ անդամ, նրա Բիւրոյի միանձնեայ փաստական ղեկավար Ռուբէն Տէր-Մինասեանը[85]:

Ինչպէս վերեւում նշեցինք, բարձրաստիճան զինուորականները աչքի չէին ընկնում նաեւ անկախ պետականութեան նկատմամբ նուազագոյն յարգանքով, իրենց աւելի վատ դրսեւորելով քան վարձկանները: Բաւարարուենք մի քանի առաւել արտառոց օրինակներով[86]:

Գնդապետ Նիկոլայ Ղորղանեանը «մեկ բառ հայերէն չէր գիտեր», իսկ Սմբատը եւ զինուորները, որոնց անմիջական հրամանատարն էր նա մինչեւ փոխարինուելը Սեպուհով, «բացի հայերէնէ ուրիշ որեւէ լեզու չէին գիտեր»: Մայիսեան խռովութիւնների ժամանակ բոլշեւիկները նրան նշանակել էին իրենց շտաբի պետ, եւ նա «ենթարկուած էր խռովարարներուն»[87]: Խռովութեան ճնշումից յետոյ նրան ոչ ոք պատասխանատուութեան չկանչեց, եւ նրան վստահուեց Կարսի ռազմաճակատի աջ թեւը, ուր նա միայն անյաջողութիւններ արձանագրեց[88]:

ՀՀ առաջին ռազմական նախարար (1918 թ. յունիս – 1919 թ. մարտ) եւ բանակի գլխաւոր շտաբի պետ գեներալ Յովհաննէս Հախվերդեանը «սրտով փարած չէր Հայաստանի դատին»[89], «նա չէր հաւատում հայկական իշխանութեանը, հայոց հանրապետութիւնը նա պարապ ժամանակի զբաղմունք էր համարում»[90]: Մի

[85] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 341:

[86] Այդ օրինակները այնքան շատ են, որ կարելի է դրանցով... հատորներ կազմել:

[87] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 4, էջ 83:

[88] Այս պատեհապաշտ եւ անկայուն արժեհամակարգ ունեցող զինուորականին բոլշեւիկները յետագայում «վարձատրեցին». 1921 թ. փետրուարեան ապստամբութեան օրերին նրան կացնահարեցին Երեւանի բանտում:

[89] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 382:

[90] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 406: Այս տեսակէտից բնութագրական է ինձ հետ պատահածը. երբ ՀՀ-ում հայոց լեզուի խայտառակ վիճակին վերաբերող իմ մի նամակի լուսապատճէնը տարել էի Հայաստանի գրողների միութիւն՝ յանձնելու նախագահ Լեւոն Անանեանին, նրա բացակայութեան պատճառով եղայ ՀԳՄ քարտուղարներից Յովիկ Հովէեանի

առիթով Կովկասեան ռազմաճակատի հրամանատարներից Չեռնոզուբովը նրա մասին ասել էր, թէ «այս հիանալի մարդու ամենամեծ առաքինութիւնն իր հայ չլինելն է»[91]:

Նոյն «առաւելութիւնն» ունէր ՀՀ բանակի գլխաւոր հրամանատարը՝ գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբէգեանը: Հայկական կորպուսում, այնուհետեւ ՀՀ բանակում նրա կողքին ծառայած, ցարական բանակի սպայ, ծագումով էլզասլոթարինգիացի գնդապետ Ալեքսանդր Շնէուրը, նրան «քաջ, ազնիւ եւ ամենքից սիրուած» համարելով հանդերձ, աւելացնում է. «Ծագումով նա հայ էր, սակայն իրեն ռուս էր համարում եւ հայերէն չէր խօսում»[92]: Ահա թէ ինչպիսի ազգային ու պետական մտածողութեան տէր է եղել իբրեւ թէ անկախ Հայաստանի Հանրապետութեան առաջին զինուորական դէմքը, ում վստահուել էր հայոց Հայրենիքի պաշտպանութեան յոյժ պատասխանատու գործը...

Չափազանց բնութագրական է հետեւեալ ամօթալի փաստը: 1919 թ. ամառը ՀՀ խորհրդարանի շենքի մի սենեակից լսւում է ռուսերէն մի երգ: Խորհրդարանի փոխնախագահը եւ ուրիշներ շտապում են այնտեղ՝ ստուգելու, թէ ինչ է կատարւում: Պարզւում է, որ ՀՀ բանակի բարձրաստիճան սպաները երգում էին ցարական Ռուսաստանի «Բոժէ, ցարեա խրանի» հիմներգը. ՀՀ ղեկավարութիւնից առաջ լսել էին, որ իրենց կուռքը՝ այդ օրը Երեւան հասնող գնդապետ Զինգեւիչը, նշանակուել է Դենիկինի դիւանագիտական ներկայացուցիչ ՀՀ-ում... «Ի զուր Տիգրանեանը[93] սաստեց եւ խորհրդարանի անունով սպառնաց հայ սպաներուն: Ընդհակառակն, քանի ան աւելի լուրջ բնոյթ տուաւ իր սպառնալիքին, սպաներն աւելի ոգեւորուած երգեցին ցարական պաշտօնական երգը» եւ «իրենց տունները ցրուեցան անարգել»[94]: Նման արտառոց դէպք է եղել նաեւ 1919-ի աշնանը՝ Նազարբէգեանի՝ Կաղզուան այցի ժամանակ: Սպարապետի պատուին տրուած խնջոյքի ժամանակ գաւառի զօրամիաւորումների հրամանատար գնդապետ Շաղուբաթեանը[95] կենաց է առաջարկում ի պատիւ սպիտակգվարդիական գեներալ Պետր Վրանգելի եւ «արտասուքը աչքերին իրդ է յայտնում նորից տեսնել «ռուս իշխանութիւնը Կովկասում...» »: Այս փաստն արձանագրող Ստ. Ղորղանեանն աւելացնում է. «Բայց աւելի զարմանալի է, որ հայ գեներալներն ու բազմաթիւ հայ սպաները ոչ միայն չեն բողոքում այդ անամօթ յայտարարութեան դէմ, այլեւ իրենց «ուռռաներով» գալիս են ձայնակցելու այդ ռուսախօս եւ ռուսամոլ գնդապետին»[96]:

Իհարկէ, նմանատիպ «ազգուրաց հայ սպաներ»-ից[97] ոչ ոք պատասխանատուութեան չի կանչւում իբրեւ թէ անկախ հանրապետութեան վարկին հասցրած անարգանքի համար, պետութիւն, որի ծառայողներն էին նրանք[98]...

Ստրկամտութիւնն ու ստորաքարշութիւնը հասել էին այնպիսի ահռելի չափերի, որ «անգամ մեր հասարակական մեծարժէք դէմքերէն մէկը ուրիշներու ներկայութեան կրկնել էր. «Երանի թէ

մօտ: Սա ինձ յամառօրէն փորձում էր համոզել, որ ՀՀ-ն ապագայ չունի եւ թէ 25, առաւելագոյնը՝ 50 տարուց կործանուելու է: Եւ, ո՜վ զարմանք, մի քանի օր անց, երկու օրական օրինացերկրական կուսակցական դարձած սոյն անձը նշանակուեց... ՀՀ մշակոյթի եւ երիտ. հարցերի նախարար, ապա խուլիգանութեան համար հեռացուեց, այնուհետեւ նշանակուեց պետական մէկ այլ պաշտօնի: Ահա թէ ինչպիսի «փայլուն» «մտաւորականներ» եւ ղեկավարներ ունի նաեւ երրորդ հանրապետութիւնը...

[91] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 382: Գեներալ Հախվերդեանի ապազգայնութեան մասին յաւելեալ տե՛ս ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 12, թ. 80:

[92] Անդրէ Ամուրեան, «Գնդապետ Ալեքսանդր Շնէուրի յուշերը», Ֆրեզնօ, 1967, էջ 39: Մեր կարծիքով՝ էլ աւելի դատապարտելի է, որ չէր էլ ուզում սովորել, նոյնիսկ աւելի քան 2 տարի ծառայելով մի պետութեան բանակում, որի պետական միակ լեզուն հայերէնն էր:

[93] Սիրական Տիգրանեանը ՀՀ խորհրդարանի փոխնախագահն էր:

---

[94] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 370-371: Որ ցարական հիմնը ՀՀ բանակի բարձրաստիճան հրամանատարների ամենասիրած երգերից էր եւ ապահովում էր նրանց «շատ բարձր տրամադրութիւն»-ը, հաստատում է նաեւ Ստ. Ղորղանեանը (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 399, 401-402):

[95] Նրա ազգանունը որոշ աղբիւրներում նշւում է «Շահբուդաղեան» ձեւով:

[96] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 400-402:

[97] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 371:

[98] Համանման երեւոյթներ այսօր եւս հանդիպում են այսօրուայ ՀՀ-ում՝ անկախութեան հռչակումից աւելի քան 15.5 տարի անց: Պետական բարձրաստիճան քաղաքական եւ զինուորական պատասխանատուներ ՀՀ-ում տեղի ունեցող միջոցառումների ժամանակ խօսում են ոչ պետական լեզուով՝ թքած ունենալով ՀՀ Սահմանադրութեան 12-րդ յոդուածի (որը հայերէնը հռչակում է պետութեան միակ լեզուն), «Լեզուի մասին» ՀՀ օրէնքի եւ հայոց ազգային զգացումների վրայ ու մնում անպատիժ՝ Լեզուի պետական տեսչութիւն կոչուող գերատեսչութեան անուանական գոյութեան պայմաններում... Իր պաշտօնական խօսքը ՀՀ-ում օտար լեզուով արտասանած վերջին «հերոսներից» է ՀՀ մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերի ամենավերջին նախարարը՝ Յասմիկ Պողոսեանը:

Ռուսաստանը 1914-ի սահմանների վրայ լիներ, թող ես էլ նրա բանտումը լինէի» »[99]:

Թոյլ էր նաեւ պետական ծառայողների մեծ մասի ազգային-պետական մտածողութիւնը: Արտառոց է այն փաստը, որ պետութեան առաջին դէմքը՝ մինիստր-նախագահ (վարչապետ) Ալեքսանդր Խատիսեանը, 1919 թ. նոյեմբերի առաջին կէսին ՀՀ հիւսիսարեւելեան շրջաններ իր այցի ընթացքում նոյեմբերի 6-ին Արդահանում մտնում է քաղաքը բաժանող գետի հանդիպակաց ափին տեղակայուած վրացական զօրամասը[100] եւ այնտեղ ելոյթ ունենում... վրացերէն՝ խօսելով հայ-վրացական բարեկամութեան մասին եւ «կեցցէ» գոռում ի պատիւ վրաց հանրապետութեան[101]: Մինչեւ պետութեան կործանումը իշխող կուսակցութիւնը՝ ՀՅԴ-ն, այդպես էլ չհասկացաւ, որ կուսակցութիւնը մի բան է, իսկ պետութիւնը՝ մէկ այլ բան, աւելի ճիշտ՝ կուսակցութիւնից աւելի բարձր արժէք[102]: Օրինակ՝ «ՀՅԴաշնակցութեան Բիւրօն որոշել է Ալեքսանդրապոլից փախած պետական հաստատութիւնների պաշտօնեաներին կուսակցական դատի տալ»: «Ժողովուրդ» թերթի աշխատակիցը իրաւացիօրէն բողոքում էր՝ քանի որ դասալիքները պետական պաշտօնեաներ են, նրանք պէտք է «դատուեն պետական դատարանում եւ պետական օրէնքներով»[103], մի արդար պահանջ, որն, իհարկէ, չիրականացուեց:

Ա. 3. Օտարների վրայ յոյս դնելը

Մինչ քեմալական Թուրքիան իր յոյսը հիմնականում դրել էր իր սեփական ոյժերի վրայ, ՀՀ ղեկավարութիւնը, դաշնակիցներին վստահելով, թերագնահատում էր իր սեփական ռազմոյժի կատարելիք գործը եւ յոյսը դրել էր դիւանագիտութեան վրայ[104]: Հայութեան, մասնաւորաբար ՀՀ քաղաքական ու զինուորական ղեկավարութեան մեծ մասը իր փրկութիւնն իրենից դուրս էր տեսնում[105]: Քաղաքական գործիչների գերակշիռ մասն սպասում էր դաշնակիցների քաղաքական ու ռազմական օգնութեանը, իսկ զինուորական աստիճանաւորների գերակշիռ մասն արդէն են գլխից երազում էր ռուսական իշխանութեան վերադարձը՝ այդ իշխանութիւնը լիներ սպիտա՞կ, կարմի՞ր, թէ՞ այլ բան:

Անգամ թուրքական յարձակումից 20 օր անց, ՀՀ կառավարութիւնն իր յոյսը դնում էր ոչ թէ սեփական ոյժերի, այլ դաշնակիցների վրայ: 1920 թ. հոկտեմբերի 6-ին Խաղաղութեան խորհրդաժողովում ՀՀ պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեանը ՀՀ անունից յուշագիր է ներկայացնում դաշնակից ոյժերի գերագոյն հրամանատար մարշալ Ֆերդինանդ Ֆօշին, որտեղ ասւում է, թէ «ՀՀ կառավարութիւնը գտնում է, որ թուրք-բոլշեւիկեան պլանը ոչնչացնելու ամենից ազդու միջոցը դաշնակիցների կողմից Տրապիզոնի գրաւումն է»[106]: ՀՀ կառավարութիւնը, որպէս օժան-

---

[99] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 102: Յուշագրողը չի յիշատակում այդ «մեծարժէք դէմքի» անունը:

[100] Ալեքսանդր Խատիսեան, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», «Հայրենիք», 1925, թիւ 6, էջ 52:

[101] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 207: Յիշեցնենք՝ այդ խօսքերն ասւում էին, երբ մէկ տարի էլ չէր անցել հայ-վրացական պատերազմից: Վրացերէն խօսելով՝ Խատիսեանը հանրութեանը ցոյց էր տալիս, թէ ինքն այդ լեզուն գիտէ (նա ծնուել եւ աւելի քան 40 տարի ապրել է Թիֆլիսում, իսկ 1910-1917 թուականներին քաղաքագլուխն էր), առանց մի պահ իսկ մտածելու, թէ այդպիսով անարգում է իր ներկայացրած ազգն ու պետութիւնը եւ... ինքն իրեն:

[102] Նոյն երեւոյթը դիտւում է նաեւ երրորդ հանրապետութեան օրերին, երբ սկզբում ՀՀՇ-ն, ապա դաշնակցա-հանրապետական իշխանաւորներն ու հանրապետութեան նախագահներն իրենք իրենց նոյնացնում են պետութեան, երբեմն՝ նոյնիսկ Հայրենիքի հետ: Բաւարար է ասել, որ շուրջ 9 տարի իշխանութեան ղեկի մօտ յայտնուած ՀՀԿ-ի կենտրոնական շէնքի վրայ չի ծածանւում ՀՀ պետական դրօշը՝ հակառակ տողերս գրողի բանաւոր եւ գրաւոր բազմաթիւ բողոքների. միւս կողմից՝ ՀՀԿ-ական իշխանաւորներն իրենց պետական գրասենեակներում ՀՀ պետական դրօշի կողքին տեղադրում են կուսակցութեան դրօշը՝ պետական հաստատութիւնը շփոթելով կուսակցական կառոյցի հետ՝ անարգելով հայկական պետականութեան գաղափարը: Եւ դեռ խօսում են նժդեհականութիւնից...

[103] Ստորագրութիւն՝ «Քաղաքացի», «Կուսակցական թէ պետական դատ», «Ժողովուրդ» թերթ, օրգան Հայ ժողովրդական կուսակցութեան, Երեւան, թիւ 185, 1920 թ., 14 նոյեմբերի, էջ 2:

[104] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 4, էջ 62:

[105] Յոյսը միայն սեփական ոյժերի վրայ դնելու հիանալի օրինակ է Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե Սուրէնեանցի կոչը հայ ժողովրդին: Հայոց հայրապետը յայտարարում էր, թէ «մենք պէտք է պաշտպանենք մեր մայրենիքը, օտարը մեզ չօգնեց եւ չի՛ օգնելու». Գէորգ Ե-ի կոչը տե՛ս «Էջմիածին» շաբաթաթերթ, 4 հոկտեմբերի 1920, թիւ 12, էջ 177-179: Հայոց հայրապետի կոնդակի (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 222, թ. 20) ընթերցումն ու Գարեգին սրբազանի արտասանած ոգեշունչ ճառերը միայն էպիզոդիկ ոգեւորութեան պահեր են պարգեւել Կարսում եւ ճակատի զինուորների շրջանում, սակայն դրանք չէին կարող հրաշք կատարել:

[106] <Armenia – Political and Ethnic Boundaries 1878-1948>, p. 767.

դակ միջոց, ցանկութիւն էր յայտնում «յառաջ մղել հելլէնական զօրքը իր գրաւած ճակատներում եւ այլն»[107]: Ֆոշի անունից ՀՀ դիմումին պատասխանում է դաշնակից միացեալ զօրքերի շտաբի պետ, գեներալ Մաքսիմ Վէյգանը՝ իր պատասխանը յղելով խորհրդաժողովի նախագահին: Նա յայտնում է, որ հայկական ցանկութիւնը «որքանով էլ սկզբունքով արդարանալի է», սակայն նման միջոցառումը «պահանջում է այնպիսի ոյժեր, որոնք Անտանտի արդի հնարաւորութիւններից վեր են»: Զօրքերի փոխարէն Վէյգանը խորհուրդ է տալիս ՀՀ-ին «մատակարարել պատերազմական գոյքային միջոցներ, որոնք նրա հետ համաձայնեցուել են մի քանի ամիս առաջ»[108]: Այսքանից յետոյ էլ ՀՀ ղեկավարութիւնը յամառօրէն շարունակում էր նոյն յանկերգը երգել: ՀՀ արտաքին գործերի նախարարութիւնը Վրաստանում ՀՀ լիազօր ներկայացուցչին 29 հոկտեմբերին յղած հեռագրով հրահանգում էր. «Խնդրեցէ՛ք դաշնակիցներից շտապ եւ ռէալ օգնութիւն՝ դեսանտ Տրապիզոնի[109] շրջանում, ռազմամթերքի մատակարարում եւ այլն»[110]: Հայ

[107] Op. cit. ՀՀ կառավարութիւնը Թիֆլիսում իր ներկայացուցչին հրահանգում էր թուրքական յարձակման մասին տեղեկացնել Յունաստանի ներկայացուցչին եւ նրանից իմանալ՝ «կարո՞ղ են յունական զօրքերը, իրենց կողմից, յարձակման անցնել, ու դրանով թուրքական շարժումը թուլացնել» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 400. փաստաթղթի լրիւ շարադրանքը տե՛ս «Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920թթ. (Քաղաքական պատմութիւն). փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու», Երեւան, 2000, փաստաթուղթ թիւ 242, էջ 290): Ուղղակի շշմեցնում է ՀՀ ղեկավարութեան քաղաքական թշուառութիւնը: Մինչ Աւետիս Ահարոնեան՝ ներկայացնում էր յիշեալ դիմումը, ՀՅԴ «Յառաջ» օրաթերթ-պաշտօնաթերթի նախօրեակի՝ հոկտեմբերի 5-ի համարում լոյս էր տեսել ընդամենը մի քանի օր առաջ Փարիզից վերադարձած Ալ. Խատիսեանի հարցազրոյցը, որտեղ նա յստակօրէն ասում է. «Զինուոր անունը (դաշնակիցները - Գ. Ե.) մեզի չի տրամադրեցին, եւ **բացէիբաց յայտնեցին, թէ Հայաստան պէտք է իր յոյսը դնէ իր բանակին վրայ»** («Յառաջ», Երեւան, 1920 թ., 5 հոկտեմբերի, էջ 1. ընդգծումը իմն է - Գ. Ե.):

[108] <Armenia – Political and Ethnic Boundaries 1878-1948>, p. 769.

[109] Բնագրում՝ «Տրաբանի», որը սխալի կամ շփոթի հետեւանք է:

[110] Փաստաթուղթը՝ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 19, թթ. 34-36: Արտատպւում է «Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920թթ. (Քաղաքական պատմութիւն). փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածուից», փաստաթուղթ թիւ 276, էջ 322: Մինչեւ դաշնակիցներին դիմելը եւ նախքան հայ-թուրքական պատերազմի բռնկումը, ՀՀ կառավարութիւնը Տրապիզոնում դեսանտ իջեցնելու հարցով շօշափել է նաեւ Հարաւային Ռուսաստանում Կամաւոր-

դիւանագէտը, ստանալով Կարսի անկման մասին հեռագիրը, տեսակցում է Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի բարձր կոմիսար Ստոկսի հետ եւ կրկին բարձրացնում դաշնակիցների օժանդակութեան հարցը: Բրիտանացի զինուորականը անկեղծօրէն խոստովանում է, որ «ըստ երեւոյթին, Անտանտը կա՛մ չի կարող, կա՛մ չի ցանկանում օգնել»[111]: Ստոկսը նախապէս՝ Կարսի ուղղութեամբ թուրքական յարձակման օրերին Երեւան եւ Կարս իր այցելութեան ժամանակ յստակօրէն ասել էր, թէ «ոչ մի օգնութեան յոյս չպիտի դնենք դաշնակիցների վրայ»[112]: Այդուհանդերձ Եւրոպայի վրայ յոյսը այնքան մեծ էր, «որ Կարսում պարտուելը կամ յաղթելը չէր համարւում ճակատագրական Հայկական հարցի համար»[113]:

Մինչդեռ իրողութիւնն այն էր, որ պատմական այդ ժամանակաշրջանում «հայութեան մեծ մասի աչքերը յառած էին դէպի հիւսիս. փրկութիւնը Ռուսաստանից էր սպասւում»[114]:

ական բանակի հրամանատար Պեոտր Վրանգելի տրամադրութիւնը (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 400, փաստաթղթի ամբողջական շարադրանքը տե՛ս «Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920թթ. (Քաղաքական պատմութիւն). փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու», փաստաթուղթ թիւ 242, էջ 290): Ի դէպ, 1920 թ. յունիսին ՀՀ բանակի մուտքը Օլթի վերջնական նպատակ ունէր ափ դուրս գալ Տրապիզոնի շրջանում եւ հայոց՝ Սեւ ծով ելքի դրոյթը ամրագրել տալ մի քանի ամիս ետք Օսմանեան կայսրութեան հետ ստորագրուելիք խաղաղութեան դաշնագրում:

[111] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 72: Հրապարակուել է «Բանբեր Հայաստանի արխիւների» հանդէսում, 1971, թիւ 1, փաստաթուղթ թիւ 7, էջ 37: Ռուսերէն բնագիրը տե՛ս «Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920թթ. (Քաղաքական պատմութիւն). փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու», փաստաթուղթ թիւ 281, էջ 327:

[112] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 67:

[113] Հայկ Ասատրեան, «Վերանորոգչական խորհրդածութիւններ», «Ռազմիկ» կիսաշաբաթաթերթ, Սոֆիա, թիւ 113-120, 1938-1939: Արտատպուել է Հայկ Ասատրեանի «Վերանորոգչական շարժում (խորհրդածութիւններ)» գրքոյկում, «Ազգայնական ակումբի» հրատարակութիւն, Երեւան, 2002, էջ 13:

[114] Սիմոն Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Երեւան, 1993, էջ 521:

Բ. Կարսի անկման ռազմական պատճառները

Կարո Սասունին կատարում է հետեւեալ պատկերաւոր համեմատութիւնը. «Բանակը կնմանի լարուած մեքենայի մը, որու կանոնաւոր շարժման ի տես մարդ կիիանայ եւ ակնապիշ կդիտէ: Բայց երբ մէկ պտուտակը այդ հսկայ մեքենային ծախողի ու դուրս գայ, մեքենան կանգ կառնէ, կամ անոր մասերը իրար սեղմելով՝ կջախջախուին»[115]: Գրեթէ նոյնը գրում է նաեւ Ստ. Ղորղանեանը. «Կառավարութիւնը պետական կուրս չունէր, <...> ուր բարդ մեքենայի բոլոր մասնիկները մէկը միւսին լրացնելով, եւ մէկը առանց միւսի ոչինչ, կարող են միայն ստեղծել կառավարչական ապարատի ներդաշնակ ընթացքը»[116]:

Պետական վարչամեքենայի բնականոն եւ արդիւնաւէտ աշխատանքի համար կարեւոր են ոչ միայն բանակի ռազմական, այլեւ նրա ու հասարակութեան բարոյահոգեբանական բարձր յատկանիշների առկայութիւնը:

Իսկ ինչպիսի՞ն էին այդ որակները Հայաստանի առաջին Հանրապետութիւնում ընդհանրապէս եւ բանակում՝ մասնաւորապէս: Որո՞նք էին Կարսի անկման եւ անկախ, իրականում՝ կիսանկախ պետականութեան կործանման ռազմական պատճառները:

Բ. 1. Զուտ ռազմական պատճառներ եւ սխալներ

Բ. 1. 1. Ռազմական անպատրաստութիւնը

ՀՀ բանակը, յատկապէս Կարսի մարզում, ամիսներով «մարզուել էր» ալան-թալանով՝ յօգուտ իր հրամանատարների, մինչդեռ թուրքական բանակը վեց ամիս լրջօրէն եւ հոգեբանօրէն նախապատրաստուել էր պատերազմին:

Պատերազմին անպատրաստ լինելու փաստը հաստատում են շատ յուշագրողներ, որոնց թւում Սիմոն Վրացեանն[117] ու Կարո Սասունին[118]: ՀՀ ղեկավարութիւնը կարծում էր, որ բանակը զէնք-զինամթերքով, սննդով, հանդերձանքով, վառելանիւթով եւ փողով ապահովելը մարտունակ բանակ ունենալ է նշանակում՝ հիմնովին անտեսելով բարոյահոգեբանական գործօնը, որը Հայկական բանակում բաւականին ցածր մակարդակում էր[119]: 1918 թ. մայիսին հերոսական դիմադրութեամբ թուրքերին Ախուրեանի ձախ ափը շպրտած Հայկական բանակն ու ՀՀ հայ ողջ հասարակութիւնն ապրում էին պարտուողական հոգեբանութեամբ: Պետական բիւջէի ծախսային մասի մօտ 85 տոկոսը յատկացւում էր բանակի կարիքներին[120]: «Սպաներն ու զինուորական պաշտօնեաները ստանում էին լաւագոյն վարձատրութիւնը: Որբերին ու գաղթականութեանը յատկացուած ալիւրի, կաթի, հագուստի մի մասը տրւում էր զօրքին: Կառավարութիւնը աշխատում էր ըստ ամենայնի բաւարարել զօրքի պահանջները, եւ այնուհետեւ միայն մտածել ժողովրդի այլ կարիքների մասին»[121]: Բայց զինուորները մնում էին մերկ, քաղցած եւ անխնամ[122]:

Պատերազմին անպատրաստ լինելու տխուր փաստը վերաբերում էր կեանքի առհասարակ բոլոր ոլորտներին (տնտեսական, քաղաքական, դիւանագիտական եւ այլն), մասնաւորաբար բանա-

---

[115] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 6, էջ 85:

[116] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թ. 10: Շարադրանքն այսպէս է բնագրում: Ընդգծումը հեղինակինն է:

[117] Ըստ Ս. Վրացեանի՝ Հայաստանը «բոլորովին պատրաստ չէր այդ պատերազմին» (Սիմոն Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Երեւան, 1993, էջ 504. ընդգծումն իմն է - Գ. Ե.):

[118] Ըստ Կ. Սասունու՝ «Հայաստանի կառավարութիւնը <...> անպատրաստ էր թուրքերու կողմէ բացուած պատերազմի մը: <...> Ոչ ոք մտքէն կանցընէր, թէ քաղաքականապէս ճզմուած Տաճկաստանը Հայաստանի դէմ պատերազմական գործողութիւններու նախաձեռնութիւնը իր վրայ պիտի վերցնէր» (ՀԹՊ, «Հայրենիք» 1926, թիւ 5, էջ 75):

[119] Նոյն սխալն այսօր անում են Հայոց բանակի հրամանատարներն ու քաղաքական ղեկավարութիւնը՝ հիմնովին անտեսելով զինուորների մարտական ոգին բարձրացնելու ամենակարեւոր գործօնը՝ բանակում եւ հասարակութեան մէջ օրինականութեան, արդարութեան, կարգապահութեան եւ ամենայն վսեմ գաղափարների անվերապահ գերիշխանութիւնը: Բանակը հասարակութեան հայելին է, աւելին՝ այդ հասարակութեան անբաժան մասն է. այսինքն՝ հասարակութեան բարոյահոգեբանական մթնոլորտը գրեթէ նոյնութեամբ տիրում է տուեալ հասարակութեան բանակում: Ուրիշ կերպ չի էլ կարող լինել: Սա աքսիոմա է որեւէ հասարակութեան եւ նրա բանակի համար՝ բոլոր ժամանակներում:

[120] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 67: ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թթ. 194, 253: Նոյնը, գ. 18, թ. 39:

[121] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 67:

[122] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թ. 39:

կի ու հասարակութեան՝ պատերազմին հոգեբանական նախապատրաստութեանը: ՀՀ պարբերական մամուլը հեղեղուած էր թուրքերի ու նրանց արեւելեան ցեղակիցների հետ բարիդրացիութեան եւ նոյնիսկ բարեկամութեան մասին հրապարակումներով՝ բթացնելով թշնամու ճանաչման ժողովրդական զանգուածների եւ զինուորների ընկալումը:

Բ. 1. 2. Ռազմական պլանի եւ քարտէզների չգոյութիւնը

Հայկական բանակի հրամանատարութիւնն ու զօրաց (պաշտպանութեան) նախարարութիւնը, ի շարս իրենց համընդհանուր անփութութեան, անտեսել էին այս յոյժ կարեւոր ռազմական գործը: Յուշագրողների մեծ մասի վկայութեամբ՝ չկար ռազմական ընդհանուր յատակագիծ-պլան, որով առաջնորդուէր Հայկական բանակը յարձակողական թէ պաշտպանական մարտեր մղելիս: Բացակայում էր ներդաշնակութիւնը զօրքի տարբեր միաւորների գործողութիւնների միջեւ: «Սպայ Մկրտիչ Նաւասարդեան կպնդէ, թէ հայ-թրքական պատերազմի ամբողջ տեւողութեան ընթացքին, իրենք որեւէ ռազմական ծրագիր ստացած չէին իրենց հրամանատարութիւնէն որեւէ ճակատամարտի, նահանջի եւ այլքի համար»[123].

Անփութութիւն է դրսեւորուել նաեւ ռազմական քարտէզների հարցում: Դրանք պէտք է պարբերաբար փոփոխուէին՝ արտայայտելով վերջին պահի ռազմական իրադրութիւնը: Մինչդեռ ոչ միայն այդպիսի օպերատիւութիւն չի եղել, այլեւ վկայութիւններ կան, որ կա՛մ ռազմական քարտէզներ չեն եղել նոյնիսկ Կարսի ամրութիւնների զօրահրամանատար Փիրումեանի շտաբում, կա՛մ էլ դրանցից հասկացող սպաներ չեն եղել: Այդպիսի երեք օրինակ բերում է Ստ. Ղորղանեանը.

- Խմբապետներից Փիլոսը ճակատից տեղեկութիւններ բերում է Փիրումեանի շտաբ, «բայց աւելի քան կէս ժամ պէտք էր քարտէզ գտնելու համար»[124].

- Կարսի անկման նախօրեակին սպարապետ Նազարբէգեանը Երեւանից հեռագրով հրահանգ է տալիս գեներալ Փիրումեանին՝ յատուկ ուշադրութիւն դարձնել Վեզինքէօյի բարձունքների վրայ՝ այդ առթիւ փոխանցելով դրանց ծածկագիր համարները:

---

[123] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 36:

[124] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 12, թ. 16:

«- Այս ի՞նչ դիրք է, Վահան, հառաչելով հարցնում է գեն. Փիրումով իր շտաբի պետին:

- Սատանէն կիմանայ,- անհոգ պատասխանում է նախկին տիրացուն[125]: - Գնանք տուն, Դանիէլ-բէգ, այնտեղ կիմանանք»[126].

Ի լուր այս ռազմական անգրագիտութեան՝ յուշագրողն արձանագրում է. «Կարսի շտաբի պետը միշտ եղել է բարձր զինուորական ուսում ստացած մասնագէտ, եւրոպական լեզուներ իմացող, վարպետ ռազմական քարտէզի ընթեցանութեան մէջ եւ զինուորական գրականութեան հետ մօտ ծանօթ մարդ»[127], մինչդեռ Վահան Տէր-Առաքելեանը «պատերազմի ժամանակ մեր եկեղեցիներից մէկում դպիր, տիրացու էր»[128].

- Ռազմական պլանի եւ կապի բացակայութեան պատճառով գնդապետ Իշխանեանի հրամանատարած 7-րդ գունդը Կարսի անկման օրը գտնւում էր Կարսից արեւելք՝ մի քանի կիլոմետր հեռաւորութեամբ եւ չէր իմանում ի՞նչ անել[129], մինչդեռ նրան ռազմական ակտիւ գործողութիւններին ընդգրկելը կարող էր բեկումնային լինել:

Փիրումեանի շտաբը «փայլել» է անփութութեան այլ փաստերով: Ծաղրելով նրան եւ շտաբ բառը չակերտաւորելով՝ նահանգապետ Ղորղանեանը գրում է, որ նա «անկազմակերպ, առանց քարտէզների, առանց որեւէ կապի զօրակաեանների հետ, առանց սուրհանդակների, լրտեսների, տեղեկութիւնների, հերթապահ աւտոմոբիլների, առանձին յանձնարարութիւնների սպաների եւ առանց օգնական տեղեկատու (հետախուզական - Գ. Ե.) մարմնի նման էր աւելի մի անկեալանոցի եւ ոչ երբեք ինքնակալ հրամանատարական կայանի»[130].

Այդուհանդերձ Ղորղանեանը, հակասելով ինքն իրեն, վկայում է, թէ եղել է ռազմական պլան, որը «կազմուած էր շատ իմաս-

---

[125] Փիրումեանի շտաբի պետ, գնդապետ Վահան Տէր-Առաքելեանը սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանում, լաւ ձայն ունէր, Կոմիտաս վարդապետի սիրելի աշակերտներից էր: Զինուորական թերի կրթութիւն է ստացել Առաջին աշխարհամարտի ընթացքում: Նա հիանալի երգել է նոյնիսկ գերութեան մէջ՝ իր քաղցր ձայնով «գերելով» հայ գերի եւ թուրք յաղթական զինուորականներին...

[126] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 369-370:

[127] Նոյնը, թթ. 414-415:

[128] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 12, թ. 58:

[129] Նոյնը, գ. 11, թթ. 4-7:

[130] Նոյնը, գ. 14, թթ. 21-22:

տալից եւ մեծ ռազմական արժէք ունէր»: Դա նախատեսում էր, որ Դրոյի եւ գնդապետ Հասան-Փաշայեանի[131] զօրամասերը, ռազմաճակատի համապատասխանաբար ձախ (Արաքսի հովիտ) ու աջ (Ախուրեան) կողմերից պետք է շրջապատեն թուրքական զօրքը թիկունքից: «Եւ եթէ հայ սպայութիւնը համակուած լինէր իր պարտաւորութիւնների սրբութեամբ, Կարաբէքիր իր ամբողջ բանակով մեր պատուաւոր գերին կլինէր»[132]: Սակայն այս պլանը հիմնովին ձախողուում է փոխգնդապետ Ղոնդախչեանի ապիկարութեան պատճառով (այս մասին՝ յետագայ շարադրանքում):

Յղելով Ալեքսանդրապոլի հաշտութեան բանակցութիւնների ժամանակ թուրքական գրաւման բանակի բարձրաստիճան սպաներից ստացած տեղեկութիւնները՝ ՀՀ բանագնացներից Ստեփան Ղորղանեանը յայտնում է, որ «թիւրքաց հրամանատարը երկու բան շատ է սիրում – քարտէզ եւ հեռադիտակ... Քարտէզի առաջ նա նստում է ժամերով, ուսումնասիրում եւ իր ռազմական դասաւորումները անում, իսկ արշաւի ժամանակ նա ձեռքից վայր չէ թողնում հեռադիտակը...»: Յուշագրողն անմիջապէս աւելացնում է՝ ծաղրանքով. «Ճիշտ այնպէս, ինչպէս որ մեր Կարսի գեներալները...»[133]:

Բ. 1. 3. Ռազմական ոյժերի կենտրոնացման եւ խելամիտ (ռացիոնալ) օգտագործման սկզբունքի բացակայութիւնը կամ արհամարհումը

Հասկանալի է, որ թաթարա-բոլշեւիկեան յարձակումների պատճառով հանրապետական բանակի մի զգալի մասը ստիպուած էր գտնուել Սիւնիքում, Նախիջեւանի սահմանում, Դիլիջանի հատուածում[134] եւ ՀՀ մահմեդական հոծ զանգուած ունեցող բնակավայրերում[135], մինչդեռ Կարաբէքիրը ՀՀ բանակի դէմ հանել էր Արեւմտեան Հայաստանի գրաւեալ տարածքում (Արեւելեան Անատոլիա) գտնուող թուրքական բոլոր զօրքերը՝ ընդամէնը մէկ վաշտ թողնելով իր զօրակայանում՝ Կարինում: Սակայն ՀՀ զօրքերի մնացեալ հնարաւորութիւններն էլ չգործածուեցին խելամիտ ձեւով, ինչպէս պահանջում է ռազմական գիտութիւնը: Դրա լաւագոյն օրինակը Սեպուհի բրիգադի հետ պատահածն է: Գեներալներն ու գնդապետները, թշնամանքի հասնող ատելութիւն ունենալով Սեպուհի նկատմամբ, բաժան-բաժան էին թողել նրա հրամանատարած բրիգադը: Վերջինիս մէջ մտնող 7-րդ գունդը գտնուում էր Իգդիր-Սուրմալուի ճակատում, իսկ 8-րդը՝ Կարսի ճակատում (ընդ որում, վերջինիս գումարտակներն էլ տարբեր դիրքերում էին տեղակայուած[136]), բրիգադի մէջ մտնող Սմբատի կամաւորական խմբերը՝ Արդահանի շրջանում. նրանք իրարից լուր չունէին եւ ենթակայ էին տարբեր հրամանատարների: Պատերազմի առաջին շաբաթներին Սեպուհի բրիգադը, որպէս առանձին զօրամիաւորում, փաստօրէն գոյութիւն չունէր:

Այս սկզբունքն անտեսելու մէկ այլ օրինակ էր 7-րդ գնդի հնարաւորութիւնների չօգտագործումը, ինչպէս տեսանք «Ռազմական պլանի եւ քարտէզների չգոյութիւնը» ենթաբաժնում:

Բ. 1. 4. Ռազմական մանեւրի բացակայութիւնը

Ռազմական ոյժերի ոչ կենտրոնացուած վիճակը մեծապէս նուազեցնում է մանեւրելու հնարաւորութիւնները: Հայկական բանակի հրամանատարութեան սխալներից մէկն էլ ոյժերի ոչ համախմբման պայմաններում հոկտեմբերի 14-ի հակայարձակումը նախաձեռնելն էր, որն աւարտուեց անյաջողութեամբ, եւ որից յետոյ դասալքութիւնների, պարտութիւնների եւ նահանջների շղթան դարձաւ ոչ միայն անխուսափելի, այլեւ անկառավարելի, իսկ «Կարսի յանձնումը հեշտ ընթռնում դարձաւ»[137]: Եթէ Սեպուհի բրի-

---

[131] Աղբիւրներում նշւում է երկու ազգանունով՝ Հասան-Փաշայեան եւ Դասաբբաշեան:

[132] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 8, թթ. 1-2:

[133] Նոյնը, գ. 17, թ. 19:

[134] <Armenia – Political and Ethnic Boundaries 1878-1948>, p. 652.

[135] ՀՀ բանակի պարտութեան ռազմական բնոյթի պատճառների շարքում յուշագրող Վահէ Արծրունին նշում է «մեր ճակատին անհամեմատ մեծութիւնը (գրեթէ երկրի ամբողջ շրջապատը՝ չհաշուած ներքին ճակատը)» (Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 36): Այսօր եւս հայրենաբնակ հայութիւնը ունի նոյնքան մեծ ճակատ, մինչդեռ ՀՀ պաշտպանութեան նախարարի օգնական, ոչ հայախօս, Կոմկուսի շրջկոմի մի նախկին առաջին քարտուղար-գեներալ-քաղաքագիտութեան դոկտոր Հայկ Քոթանջեանի գլխաւորած խումբը պետութեան «Ազգային անվտանգութեան հայեցակարգ» կոչուող փաստաթղթում նոյնիսկ Թուրքիան ու Ադրբեջանը չի յայտարարում ՀՀ-ին թշնամի երկրներ...

[136] Այսպէս՝ 8-րդ գնդի երկրորդ գումարտակը ուղարկուած էր Արդահանի շրջան, այսինքն՝ Կարսի ռազմաճակատի ծայրագոյն աջ թեւը, իսկ առաջին գումարտակին հրամայուել էր զբաղեցնել Հաճի Խալիլ լեռան շրջակայքը, այսինքն՝ նոյն ռազմաճակատի ձախակողմեան ամենահեռաւոր հատուածը. տե՛ս ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 5 նոյեմբերի, էջ 2:

[137] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 6, էջ 87:

գադի միաւորները Իգդիրից եւ Դիլիջանից հասած լինէին Կարսի ռազմաճակատ եւ օգտագործուէին Կարաբէքիրի զօրքի թոյլ կէտերին հարուածելու համար, ՀՀ բանակի հակայարձակման ճակատագիրը, մեծ հաւանականութեամբ, այլ կլինէր: Հայկական հակայարձակման հիմնական թիրախը ռազմաճակատի կենտրոնական հատուածն էր, որտեղ թուրքերի դիրքերը ամենաուժեղն էին: Հայկական այս անյաջողութիւններին եւ բացթողումներին հակառակ՝ ռազմական գործի մեծ մասնագէտ Կարաբէքիրը նաեւ ռազմական մանեւրների ու ռազմական խաբէութեան հիանալի վարպետ էր: Օգտուելով Կարսից մինչեւ Անի (աւելի ճշգրիտ՝ Կարսի հարաւում Հաճի Խալիլ բարձունքից մինչեւ Ախուրեան) ձգուող մօտ 50 կիլոմետր տարածութեան պաշտպանութեան գրեթէ չգոյութիւնից, որը ռազմական «մեծ սխալ» էր[138], հոկտեմբերի վերջին օրերին իր ոյժերի մեծ մասը մանեւրելով ուղարկեց Կարսի արեւելեան կողմը՝ այսպիսով պաշարելով Կարսի ամրութիւններին ապաւինած հայկական զօրքը եւ, միաժամանակ, փակեց Կարս-Ալեքսանդրապոլ խճուղին ու երկաթուղագիծը: Այդ օրերին (հոկտեմբերի 27-ին եւ 28-ին), «թշնամու գլխաւոր ոյժերը կորսուած էին», եւ Կարսի հրամանատարութեան այդ օրերի «զեկուցումները կարելի է բնութագրել «փնտռտուք» բառով»[139]: Եւ միայն Հաճի Խալիլ, Մեծ Եահնի եւ Ուչլար բարձունքներում ու Վեզինքէօյում (Կարսի արեւելքում) գտնուող մի բուռ հայկական վաշտերի հերոսական դիմադրութիւնը փոքր-ինչ ուշացրեց թուրքական հիմնական ոյժերի առաջխաղացումը, բայց արդէն շատ ուշ էր իրավիճակը շտկելու համար: Մինչ ակադեմիական կրթութեամբ բարձրաստիճան զինուորականները՝ գեներալներ Արտեմ Յովսէփեանը, Դանիէլ-բէգ Փիրումեանը, Մովսէս Սիլիկեանը եւ վերջինիս շտաբի պետ, գնդապետ Ալեքսանդր Վեքիլեանը ռազմական հարուածի սխալ տակտիկա էին ընտրել, զինուորական տարրական կրթութիւն չունեցող Սեպուհն առաջարկում էր ճիշտ եւ ճիշտ այն տակտիկան, որն ընտրեց Կարաբէքիրը հոկտեմբերի վերջին օրերին: Սեպուհի մօտ ծառայած անանուն օրագրողը հոկտեմբերի 14-ին գրառել է նաեւ հետեւեալը. «Սեպուհը դեռ սկզբից դէմ էր այդպէս շուտափոյթ ընդհանուր յարձակման անցնելուն, նրա կարծիքով, ճակատից եթէ յարձակուելու լինենք, բնաւ չենք յաջողի, եւ այդպէս էլ եղաւ: Նա գտնում էր, որ մեր ուժեղ յարձակումները պէտք է կատարուեն թեւերից,

[138] Նոյնը, էջ 92:
[139] Նոյնը, թիւ 7, էջ 69:

մանաւանդ ձախից[140], որտեղ մենք անպատճառ պէտք է անցնենք թշնամու թիկունքը եւ այդպիսով ստիպենք նրան թուլացնել կենտրոնը եւ ապա հարուածել նրա կենդանի ոյժերին: Սակայն ինչ-ինչ պատճառներով հրամանատարութիւնը նախընտրել էր այլ կերպ որոշել ընդհանուր յարձակման ծրագիրը»[141]՝ յոյս ունենալով յաջողութեան հասնել ռազմաճակատի հենց կենտրոնական հատուածում:

Իր յուշերում Կարաբէքիրն ասում է, որ հայերի հետ իր նախորդ բախումների ժամանակ միշտ յարձակուել է կենտրոնից, սակայն Կարսի դէպքում որոշեց խաբել հայոց զօրքի հրամանատարներին՝ մոլորեցնելով նրանց նախորդ բախումների նոյն սցենարով եւ, երկրորդ, օգտուել իր ունեցած այլ առաւելութիւններից. «Իմ այս տեղերը (Կարսի շրջանը - Գ. Ե.) եւ Կարս բերդաքաղաքին հողերը թիզ առ թիզ ճանչնալս, հայոց տկար կէտերը գիտնալով, Կարսի վրայ փոխանակ ճակատէն յարձակելու, արեւելքէն յարձակիլս եղած է»[142]:

Բ. 1. 5. Տեղանքի առաւելութիւնները գնահատելու անկարողութիւնը

Այս առնչութեամբ մարտերի մասնակից Հայ Գնդունին նշում է խրամներ փորելու, գրաւած դիրքերը ամրացնելու, պաշտպանելու եւ դրանք անվտանգ դարձնելու մտահոգութեան բացակայութիւնը: Աւելին՝ նա նշում է «պատսպարուելու, թշնամիէն չնկատուելու եւ չխուզարկուելու համար էական նշանակութիւն վայելող վարժութեան եւ բծախնդրութեան պակասն ու ամբողջական բացակայութիւնը»[143] Հայկական բանակում:

Բ. 1. 6. Ռազմական հետախուզութեան եւ հակահետախուզութեան խայտառակ վիճակը

[140] Այսինքն՝ Կարսի հարաւից:
[141] Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», էջ 98-99:
[142] «Քեազըմ Կարաբէքիրի յուշերը Հայաստանի Հանրապետութեան վրայ թրքական յարձակումներուն մասին», «Զարթօնք», 1966 թ., 10 օգոստոսի, էջ 2:
[143] ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 3 նոյեմբերի, էջ 2:

Բոլոր յուշագիրները վկայում են այս մասին[144]՝ առհասարակ հայկական հետախուզութեան ու հակահետախուզութեան գործունեութիւնը բնութագրելով չափազանց խիստ ածականներով՝ «ողբալի», «անբաւարար», «մեր ամենաթոյլ կողմերէն մէկը»[145], «շատ ողբալի»[146], «անչափ անգոյն, անչափ ողորմելի»[147], հեգնական իմաստով՝ «բարձր, նուիրական հաստատութիւն»[148], իսկ նրա Կարսի բաժանմունքը, որը ղեկավարում էր գլխապետ Մեդվեդեւը, «մի ծաղր էր եւ ոչ լուրջ հաստատութիւն»[149]: Ուղղակի ապշել կարելի է՝ կարդալով հետեւեալ վկայութիւնը. «Արդահանի եւ Կարսի բնիկ թուրք երեւելիներէն ոմանք <...> պատերազմը չսկսած նոյնիսկ կայցելէին սահմանագլուխը պաշտպանելու կոչուած մեր գունդերու եւ այսպես գիտակ կպահուէին մեր բոլոր պետական-զինուորական բնոյթ կրող խնդիրներուն»[150]: Թուրքական հետախուզութեանը օգնում էին նաեւ ՀՀ տարբեր մասերում ցրուած մուսուլման բնակիչները: Միւս կողմից, ըստ Հայ Գնդունու, «Երեւանը ձեռք չէր առած եւ չէր առներ ոչ մէկ ազդու զէնք՝ թափանցելու թշնամի Թուրքիայի ծրագիրներուն եւ հաշիւներուն»[151]: Նոյն աղբիւրը յայտնում է, որ հայկական ռազմական հետախուզութիւնն ու հակահետախուզութիւնը «պարզապէս մոռցուած, անտեսուած էր հայկ. բանակին իրաւասու եւ պատասխանատու պետերէն»[152]: Այդ մարմինը «ոչինչ չգիտէր, նա զբաղուած էր ինտրիգներով եւ իր հաշիւներով, բայց ոչ պետական վսեմագոյն իմաստի պահպանութեամբ: <...> Մեր հրամանատարութիւնը ոչինչ չգիտէր, թէ ի՞նչ է կատարուում սահմանից այն կողմը, նա չգիտէր եւ երկրի տրամադրութիւնը դէպի ժամանակի վերապրումները»[153]: Այս մարմինը Երեւան ուղարկած իր գրութիւններով հերքում էր հետախուզական բնոյթի այն տեղեկութիւնները, որ ծեռք էր բերում Կարսի նահանգապետը Արդահանի հայկական իշխանութեան գաւառապետ Իբրահիմ Կադիմովի եւ նահանգի քուրդ երեւելիների միջոցով[154]:

Հայկական հետախուզութեան գրեթէ չգոյութեան պատճառով բարձրագոյն հրամանատարութիւնն ու գլխաւոր շտաբը մինչեւ պատերազմի աւարտը իրական պատկերացում չեն ունեցել թուրքական ոյժի եւ պլանների մասին[155]: Հայ Գնդունին յայտնում է, որ անձնապէս միշտ լսում էր Կարսի ռազմաճակատի գլխաւոր՝ կենտրոնական հատուածի անմիջական հրամանատար գեներալ Արտեմ Յովսէփեանի հետեւեալ տրտունջը. «Թշնամուց ոչ մի լուր չունեմ, չեմ իմանում թէ ի՞նչ է անում, ի՞նչ մտածում»[156]: Արտ. Բաբալեանը վկայում է, որ «մինչեւ վերջն էլ Թիւրքիայում գործակալներ չունեցանք»[157]: Այս պատճառներով «տիրում էր կատարեալ անտեղեակութիւն»[158]: Յատուկ ծառայութիւնները, որոնք պարտաւորուած են տեղեկութիւններ ապահովել քաղաքական ու զինուորական ղեկավարութիւնը, 1920 թ. աշնանը «թուրք-հայկական պատերազմի նախօրեակին, շատ աղօտ պատկերացումներ ունէին հենց այդ թուրքական բանակի թէ թուաքանակի, թէ պլան-

---

[144] Տե՛ս, օրինակ, ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թթ. 123-124:
[145] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 33, 71, 284:
[146] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 5, էջ 75:
[147] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թ. 53:
[148] Նոյնը, գ. 7, մաս 2, թ. 297:
[149] Նոյնը, գ. 6, թ. 17: Տարօրինակ է, որ պատմական գիտութիւնների թեկնածու Վանիկ Վիրաբեանը Հայաստանի առաջին Հանրապետութեան բանակի հետախուզութեանը նուիրուած իր աշխատութեան մէջ (Վանիկ Վիրաբեան, «Հայաստանի առաջին Հանրապետութեան յատուկ ծառայութիւնները 1918-1920 թթ.», Երեւան, 1998) դրական երանգներով է նկարագրում այս մարմնի աշխատանքը, մինչդեռ յուշագրութիւններն ու փաստաթղթերը վկայում են հակառակը, առնվազն հետախուզական մարմինների ղեկավարութեան անփոյթ մօտեցման մասին: Այդուհանդերձ Վ. Վիրաբեանը խոստովանում է, որ հայկական յատուկ ծառայութիւնները «ի վիճակի չեղան քիչ թե շատ շօշափելի առաւելութեան հասնել, հենց թէկուզ թուրքական յատուկ ծառայութիւնների (մասնաւորապէս հակահետախուզութեան) դէմ պայքարում» (էջ 21): Շատ մեղմ է ասուած... Ի՞նչ «առաւելութիւն». հայկական եւ թուրքական հետախուզութիւնների միջեւ համեմատական անցկացնելն իսկ ճիշտ չէ տուեալ ժամանակաշրջանի համար:
[150] ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 3 նոյեմբերի, էջ 2:
[151] Նոյն տեղում:

[152] Նոյն տեղում:
[153] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թթ. 125-126:
[154] Նոյնը, թթ. 124-126:
[155] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 53-54: Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 409, ծնթ. 29 (հեղինակ՝ Գեղամ Բաղալեան): ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 3 նոյեմբերի, էջ 2: Վանիկ Վիրաբեան, «Հայաստանի առաջին Հանրապետութեան յատուկ ծառայութիւնները 1918-1920թթ.», էջ 21: ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 4, էջ 61:
[156] ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 3 նոյեմբերի, էջ 2:
[157] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 53:
[158] Նոյնը, էջ 54:

ների եւ թէ առհասարակ շատ հարցերի վերաբերեալ»[159], Կարաբէքիրի զօրաբանակի կենտրոնի՝ «Էրզրումի աշխատանքները անծանօթ եւ գաղտնի կմնային հայ կառավարութեան համար»[160], վկայում է Կարօ Սասունին: Հակառակայս ամենի՝ Կարաբէքիր «երբեք քայլ մը չէր առներ <...> առանց իր հակառակորդի թոյլ կողմը եւ ամենաանպաստ որպէն ճշտելու»[161]:

Թուրքական հետախուզութիւնը հայկական միջավայրում գործել է համարեայ անարգել եւ մեծ արդիւնաւէտութեամբ: Արժանահաւատ աղբիւր տէր Կորիւն քահանայ Քոթանջեանը, որը Կարսից ամենավերջինը դուրս եկող հայերից է (գրաւուած քաղաքում մնացել է երկու տարի), վկայակոչում է թուրքական 9-րդ դիւիզիայի հրամանատար, գնդապետ Հիւսնի բէյի խօսքը. «Ձեր բոլոր ժողովներում խօսուած ճառերը եւ զինուոր[ական] գաղտնի որոշումները մեզ անմիջապէս տեղեկացնում էին մեր բարեկամ հայերն ու մոլոկանները»[162]: Հնարաւոր է, որ թուրք զինուորականը չափազանցնում է, սակայն նման բան ասելու որոշակի հիմքեր կային: Հայազգի բոլշեւիկները բացայայտօրէն կոչ էին անում հայկական պետութեան կործանման եւ լրտեսում էին ի վնաս սեփական ազգի ու պետութեան շահերի՝ յօգուտ «եղբայր», «ինտերնացիոնալիստ» թուրքերի: Կարաբէքիրի մօտ կային ուրացող հայազգի տականքներ, այդ թւում՝ նախկինում Հայ Կաթոլիկ եւ Հայ Առաքելական եկեղեցիների մի վարդապետ, որը մահմեդականութիւն էր ընդունել եւ Կարաբէքիրի առանձին թարգմանն էր դարձել[163], մի «հրէշ հայ դաւաճան»[164], որը «չարագործ ոստիկանի պաշտօն էր կատարում»[165]:

[159] Վանիկ Վիրաբեան, «Հայաստանի առաջին Հանրապետութեան յատուկ ծառայութիւնները 1918-1920թթ.», էջ 21:
[160] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 4, էջ 61:
[161] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 91:
[162] «Բանբեր Հայաստանի արխիւների», թիւ 1, 2006, էջ 107: Ըստ ականատեսս Գարեգին եպս. Յովսէփեանցի՝ քաղաք մտած ասկեարներն ու բաշիբոզուկները ամեն տեսակ այլանդակութիւն գործելիս խնայում էին իրեն՝ եկեղեցականի մօրուքն ընդունելով որպէս մոլոկան աղանդաւորի յատկանիշ եւ նոյնիսկ ասում էին, թէ «մոլականները մեր եղբայրներն են» («Բանբեր Հայաստանի արխիւների», 1989, թիւ 3, էջ 130):
[163] Նոյնը, էջ 104:
[164] Արտաշէս Ալեքսանդրեան, «Կարս 1920-21», էջ 62:
[165] «Ոգուն չապաւինելու արդիւնքը», էջ 49: Իր ուրացում-դաւաճանութիւնն առաւել շեշտելու համար «Հիդայաթ» (թուրքացուած արաբերէնով

Կարելի՞ էր հայկական շահերին նուիրուած հետախուզական մարմին ակնկալել այն դէպքում, եթէ Հայկական բանակի գլխաւոր շտաբի հետախուզական բաժինը (որի վրայ դրուել էին նաեւ հակահետախուզական պարտականութիւններ), ի թիւս գլխաւոր շտաբի այլ բաժինների, ստեղծել է ռուսական բանակի սպայ, սկզբնական շրջանում գեներալ Անտոն Դենիկինի ոչ պաշտօնական ներկայացուցիչ, գնդապետ Զինգեւիչը: Նա ողջ ՀՀ բանակի գլխաւոր շտաբը կազմաւորել էր Դենիկինի Կամաւորական բանակի նոյն մարմինների պատճէնումով (Դենիկինն էլ պատճէնել էր ռուսական ցարական բանակի համապատասխան մարմինները)[166], առանց հաշուի առնելու Հայկական լեռնաշխարհի տեղագրությունը, ժողովրդագրական կազմը, ՀՀ բնակչութեան եւ հայ զինուորի էթնոհոգեբանական եւ ռազմահոգեբանական առանձնայատկութիւնները եւ այլն[167]: Ուղղակի շշմել կարելի է՝ տեղեկանալով, թէ ՀՀ բանակի գլխաւոր շտաբի հետախուզական բաժինն իր տեղեկագրերը (աւելորդ է ասել, որ դրանք կազմւում էին ոչ պետական լեզուով՝ ռուսերէնով), պատրաստում էին երկու օրինակից, որոնցից մէկն ուղարկւում էր մինիստր-նախագահին (վարչապետին), երկրորդը՝ Դենիկինին... Եւ միայն 1920 թ. երկրորդ կէսին, երբ հայ-թուրքական փոքրածաւալ ընդհարումներն սկսուել էին ՀՀ բանակի՝ Օլթիի վրայ յարձակումով, եւ Դենեկինի Կամաւորական բանակն էլ Հիւսիսային Կովկասում իրարայաջորդ պարտութիւններ էր կրում Կարմիր բանակից, ՀՀ կառավարութիւնը փորձեց դենիկինեան հաւատարմութիւն ունեցող սպաներին մեկուսացնել «հետախուզական գործունէութիւնում անմիջական դերից, որը նրանք վարում էին տենդենցիոզ կերպով եւ յարմարեցնելով գլխաւորապէս Դենիկինի Կամաւորական բանակի շահերին»[168]:

նշանակում է «ճիշտ կրօնի ուղին ընտրած»), աշխարհական անունով՝ Թադեւոս, կրօնականով՝ Եմմանուէլ կոչուած այս տականքը նոյնիսկ խափանել է գերութիւնից Գարեգին եպս. Յովսէփեանցի փախուստը (նոյն տեղում): Այս ազգուրաց դաւաճանի ստորութիւնների մասին յաւելեալ տե՛ս Արտաշէս Ալեքսանդրեան, «Կարս 1920-21», էջ 67, 91-94, 103-104:
[166] Վանիկ Վիրաբեան, «Հայաստանի առաջին Հանրապետութեան յատուկ ծառայութիւնները 1918-1920թթ.», էջ 13:
[167] Աւելորդ չէ այստեղ նշել, որ Հայկական բանակի գլխաւոր շտաբի բոլոր բաժինները ղեկավարում էին... ռուս սպաներ:
[168] Վանիկ Վիրաբեան, «Հայաստանի առաջին Հանրապետութեան յատուկ ծառայութիւնները 1918-1920թթ.», էջ 14: Նոյն հեղինակը գրում է, որ «յատուկ ծառայութիւնները կազմել են Հայաստանի առաջին Հանրապետու-

Ի դէպ, «հայկական հետախուզութիւնն իր աւանդական ապիկարութիւնը ցոյց կուտար նաեւ հայ-ադրբեջանական ճակատին վրայ»[169]:

Մէկ այլ ողբերգական փաստ է այն, որ հատուկենտ դէպքերում երբ հայկական հետախուզութեանը յաջողւում էր ինչ-որ կարեւոր տեղեկութիւններ կորզել, քաղաքական ղեկավարութիւնը պատշաճ լրջութեամբ չէր վերաբերում դրանց[170]:

Ասուածից կարելի է ենթադրել, որ Հայկական բանակի սեփական երկու ինքնաթիռների արդիւնաւէտութիւնը ռազմական հետախուզութեան գործում բաւականին ցածր է եղել:

Բ. 1. 7. Աներեւակայելիօրէն յանցաւոր ներողամտութիւնը ապաշնորհ զօրահրամանատարների նկատմամբ: Ուշացած փոխարինումներ

Գնդապետ Նիկոլայ Ղորղանեանի ապիկար ղեկավարութեան պատճառով Կարսի ռազմաճակատի աջ թեւի անյաջողութիւններից յետոյ միայն հոկտեմբերի կէսին այդ տեղամասում նրան՝ փոխարինումը Սեպուհով այն էլ իր բրիգադի ընդամէնը մէկ մասով, բաւական ուշացած միջոցառում էր: Իսկ այդ միջոցին 15 օր (սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 5-ը) ռազմաճակատի աջ թեւը հրամանատար չի ունեցել[171]: Է՛լ աւելի յանցաւոր էր անընդհատ անյաջողութիւններ արձանագրող գեներալ Յովսէփեանի փոխարինումը գեներալ Ղազարեանով՝ հոկտեմբերի 28-ին, երբ կացութիւնը չափազանց բարդացել էր բերդաքաղաքի շուրջ: Եւ ի՞նչ, փոխանակ Յովսէփեանին ռազմական դատարանին յանձնելու՝ նրան նշանակում են շատ պատասխանատու պաշտօնի՝ Ալեքսանդրապոլի անկումից յետոյ դիմադրութեան նոր գիծ դարձած Արագածի ռազմաճակատի հրամանատար: Այստեղ եւս նա ձախողւում է, եւ նոյեմբերի կէսին նրան փոխարինում է մինչ այդ նրան ենթակայ գնդապետ Միրիմանեանը, որը շարունակում է մնալ չորրորդ գնդի հրամանատար: Յաջորդական ձախողութիւնների համար գեներալ Արտեմ Յովսէփեանը զօրաց նախարար Ռուբէնի հրահանգով միայն նոյեմբերի կէսերին կանչուել է Երեւան՝ դատուելու[172], սակայն չի պատժուել, եւ վերջինիս փոխարինած Դրոյի ցանկութեամբ ազատ է արձակուել[173]:

Ապաշնորհ բարձրաստիճան սպաների նկատմամբ աներեւելի ներողամտութեան դրսեւորումները սկսուել են շատ վաղ եւ արագ ընթացք ստացել մայիսեան խռովութիւնների աւարտից յետոյ: Դա է՛լ աւելի խայտառակ բնոյթ ստացաւ հայ-թուրքական պատերազմի օրերին: Այստեղ մեծ դեր էր խաղում հովանաւորչութիւնը՝ պայմանաւորուած սպաների կուսակցականութեամբ[174] (ինքնին

թեան ռազմաքաղաքական համակարգի անբաժան մասը: Հենց դրանով էր նաեւ Հայաստանը կազմակերպուած պետութիւն» (նոյնը, «Ամփոփում» վերջաբան, էջ 35): Եթէ այսպիսի՛ք էին այդ ծառայութիւնների աշխատանքի որակն ու արդիւնաւէտութիւնը, ապա ցաւով պէտք է հաստատել, որ ՀՀ-ն կազմակերպուած պետութիւն չի եղել, այլ ինքնահոսի թողնուած վարչական մի միաւոր, եւ բաւարար էր մի ուժեղ քամի, որպէսզի աւազի վրայ կառուցուած այն փլուզուէր: Է՛լ աւելի ցաւալի է, որ համանման երեւոյթների ականատես ենք այսօր՝ Հայաստանի երրորդ Հանրապետութեան մէջ (օրինակ՝ ՀՀ «Ազգային անվտանգութեան հայեցակարգ» կոչուող փաստաթուղթը հեղինակուել է ՆԱՏՕ-ի, այսինքն՝ նաեւ մեր ոխերիմ թշնամի Թուրքիայի էական աջակցութեամբ, մի փաստ, որից ՀՀ կեղծ ազգայնական դաշնակցա-հանրապետականները ոչ միայն չեն ամաչում, այլեւ... հպարտանում են), եւ մի քիչ տրամաբանող անհատի համար պարզ ու յստակ է նման իրավիճակի տխուր վախճանի անխուսափելիութիւնը:

[169] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 330:

[170] Նոյնը, էջ 70: Այս մասին բազմիցս վկայում է նաեւ Ստեփան Ղորղանեանը իր յուշերում՝ ՀՀ ղեկավարութեանը մեղադրելով իր ձեռք գցած հետախուզական բնոյթի տեղեկութիւնները անտեսելու կամ դրանց հաւաստիութեանը կասկածելու համար: Նոյնը հաստատում է նաեւ պատմաբան Վանիկ Վիրաբեանը՝ Հայաստանի առաջին Հանրապետութեան յատուկ ծառայութիւններին նուիրուած իր աշխատութիւններում:

[171] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 5, էջ 82:

[172] Նոյնը, թիւ 9, էջ 114:

[173] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 68:

[174] Օրինակ՝ Փիրումեանի շտաբի պետ, գնդապետ Վահան Տէր-Առաքելեանը, որը զինուորական ակադեմիական թերի կրթութիւն ունէր, գնդապետի ուսադիրներ եւ այս պաշտօնն ստացել է դաշնակցական լինելու համար. այս մասին տե՛ս նաեւ Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 58: ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 414-415: Կուսակցական հովանաւորութեան շնորհիւ էր նաեւ Մազմանեանը գնդապետի ուսադիրներ ստացել: Ամենավառ երեւակայութիւնից անգամ դուրս է, որ նոյնիսկ զինուորական ակադեմիական կրթութիւն ստացած անձը 25 տարեկանում գնդապետի աստիճան ստանայ, ինչպէս էր Մազմանեանի դէպքում: Այդ հասակում մարդ կարող է, իր քաջագործութիւնների համար նոյնիսկ ազգային հերոս հռչակուել, բայց չի կարող գնդապետի աստիճան ստանալ՝ ինչքան էլ տաղանդաւոր զինուորական լինի: Մի խօսքով՝ կոչումներն ու աստիճան-

ապօրինի եւ անբարոյ մի իրողութիւն), խնամի-ծանօթ-բարեկամ գործօնով[175] եւ, իհարկէ, կաշառքով: «Մեր առաջնորդներուն մէջ աւելի զօրաւոր էին յեղափոխական թափը եւ արենակցական կապը, քան թէ պետական կենսական շահերու ընթացքը»[176],- վկայում է դաշնակցական գործիչ Վահէ Արծրունին, որ 1920 թ. ապրիլից Կարսում էր: Անհեթեթ է նման պայմաններում խօսել բանակում կարգապահութեան մասին:

Մէջբերենք մի քանի օրինակ:

Ախուրեանի մօտ քուրդ ծիաւորների մի խմբի հանդիպելով՝ փախած եւ զինամթերքը թշնամուն թողած[177] փոխգնդապետ Ղոնդախչեանի դէմ թէեւ դատ յարուցուեց, «բայց մնաց անպատիժ եւ նշանակուեց նոր պաշտօնի»[178]:

ները կորցրել էին իրենց արժէքը: «Արժանաւորութիւններին անհամապատասխան աստիճանները, նսեմացնելով այդ աստիճանների իմաստը, անբարոյականացնում են եւ մարդկանց»,- իրաւացիօրէն գրում է Ստ. Ղորղանեանը (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 36): Մեր օրերում ես դիտւում է նոյն երեւոյթը, երբ ոմանց բացասական յատկանիշների համար, ՀՀ նախագահը, պաշտպանութեան նախարարը եւ այլք աջ ու ձախ կոչումներ եւ շքանշաններ են շնորհում՝ յաճախ բոլորովին անտեսելով իսկական արժանիներին, երբեմն էլ ժպրհելով այդպիսիներին կալանելու եւ բանտարկելու հրահանգներ տալ: Նոյն երեւոյթը համատարած է ՀՀ կեանքի այլ, մասնաւորաբար կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի ոլորտներում:

[175] Օրինակ՝ ապաշնորհ գեներալ Արտեմ Յովսէփեանի «գլխապետութեան մինչեւ զօրավարութիւն» առաջխաղացման գործում մեծ դեր են ունեցել գեներալ Նազարբէգեանն ու Արամ Մանուկեանը (Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 383), իսկ գնդապետ Միրզոեւի առաջխաղացման ու նրա յանցագործութիւնների պարտակման գործում՝ նրա անները՝ գեներալ Փիրումեանը (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 254):

[176] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 39: Այս տեսակէտից, գրեթէ տարբերութիւն չկայ առաջին եւ երրորդ հանրապետութիւնների միջեւ:

[177] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 26: Նոյնը, գ. 8, թթ. 3-6: Փախուստի ճանապարհին Ղոնդախչեանը չի մոռանում «հերոսաբար» գողանալ պատահած քրդերի ոչխարի հօտերը... (նոյնը, գ. 8, թ. 6):

[178] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 56: Ստ. Ղորղանեանը կարծում է, որ «փոխգնդապետի տեղը 24 ժամուայ ընթացքում ի կատար ածուած կախաղանն էր», «բայց հայկական դատարանը, սկզբից եւէթ մի ֆիկցիա, կորով չունեցաւ արդարադատութիւն կերտելու» (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 8, թ. 8): «Այդ ատեանները մի թիւրիմացութիւն էին մեր կառավարչական օղակների շարքում եւ ոչ

Գեներալ Փիրումեանի փեսան՝ գնդապետ Միրզոեւը, առանց կռուի փախչում է Ալեքսանդրապոլ՝ նախօրօք այնտեղ տեղափոխելով իր ունեցուածքը: Ռուբէնը չի հրամայում բանտարկել նրան[179]:

Որոշ դէպքերում էլ կատարւում էին չհիմնաւորուած եւ անարդարացի փոխարինումներ: Այսպէս՝ Առաջին գնդի հրամանատար գնդապետ Յարութիւնեանը «հեռացուած էր գնդի հրամանատարութիւնից քեմալիստների հետ պատերազմի ընթացքում», քանի որ «Կարսի տիրապետութեան օրից մեծ խոչընդոտ էր Փիրումով-Յովսէփեանի «նոր տնտեսական քաղաքականութեան»[180] դէմ»,- գրում է երբեմնի նահանգապետ Ստ. Ղորղանեանը[181]: Գեներալները գնդապետ Յարութիւնեանին ատելու եւս մէկ լուրջ պատճառ ունէին: Արդարեւ, մինչ իրենք մայիսեան խռովութեան օրերին «չէզոքութիւն» էին յայտարարել, Յարութիւնեանը հաւատարիմ էր մնացել իշխանութեանը եւ ակտիւօրէն մասնակցել խռովութեան տապալմանը, որի համար էլ քաղաքում ստեղծուած ժողովրդական Փրկութեան կոմիտէն նրան էր վստահել զօրքերի հրամանատարութիւնը նահանգում: Նոյն գեներալ Յովսէփեանը, 28 հոկտեմբերին իր փոխարինումից որպէսզի առաջ, ստորագրում է կարգադրութիւն, որով 8-րդ գնդի առաջին գումարտակի հրամանատարութիւնը հարիւրապետ Հայ Գնդունուց փոխանցում է հազարապետ Աղայեանին, ինչ է թէ՝ վերջինս աստիճանով աւելի բարձր զինուո-

---

օրէնքի սրբատեղի» (նոյնը, գ. 18, թ. 47): Կարծէք նաեւ երրորդ հանրապետութեան համար են ասուած այս դառը խօսքերը...

[179] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թթ. 39-40: Սա այն սպան է, որը գողանում էր իր գնդին յատկացուած սննդամթերքը, եւ 1919 թ. վերջին օրերին քիչ էր մնում նրա զինուորներն ապստամբէին: Հետաքննութիւնը հաստատել էր կողոպուտի փաստը, եւ, հակառակ իր աներոջ՝ գեներալ Փիրումեանի միջամտութեանը, գնդի հրամանատարութիւնից ազատուել էր: Այնուհանդերձ, կարճ ժամանակ անց, Միրզոեւը նշանակուեց Կարսի գնդերից մէկի հրամանատարի օգնական (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 254), այսինքն՝ «պատժուեց» ընդամէնը թեթեւակի պաշտօնազրկումով:

[180] Յուշագրողը այս հեգնական արտայայտութեամբ նկատի ունի Կարսի նահանգում գեներալների որդեգրած կողոպուտի քաղաքականութիւնը: Յուշագրութեան հեղինակման թուականներին (1920-ականների առաջին կէս), խորհրդային հանրապետութիւններում հռչակուել էր «Նոր տնտեսական քաղաքականութիւնը», որն առաւել յայտնի է ռուսերէն ՆԷՊ (Новая экономическая политика - НЭП) յապաւումով:

[181] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 28:

ական է եղել... Պաշտօնի յանձնման ձեւականութիւնները հազիւ աւարտած՝ սկսւում է թուրքական յարձակումը այդ գումարտակի պաշտպանած տեղամասում[182]:

Բ. 1. 8. Զինուորական բազմաստիճան ենթակայութիւնը եւ ռուսական շաբլոնի կապկումը

Ռուսական ցարական բանակի համար առաւել արդիւնաւէտ էր բազմաստիճան զինուորական ենթակայութեան սկզբունքը՝ հաշուի առնելով այդ բանակի ռազմական գործողութիւնների տեղագրական առանձնայատկութիւնները, ռազմաճակատների բազմահարիւր, երբեմն էլ հազարաւոր կիլոմետրանոց երկարութիւնը եւ այլ գործօններ, մինչդեռ Կարսի ռազմաճակատի թէ՛ տեղագրութիւնը եւ թէ՛ համեմատաբար փոքրութիւնը պարտաւորեցնում էին ռազմական հրամանատարութեան մէկտեղում, այն էլ՝ կարող, պատկառազդու, առինքնող, անձնական դրական օրինակ ծառայող ռազմահրամանատարի ձեռքում: Մինչդեռ այս հարցում թոյլ տրուեցին կոպիտ սխալներ: Առաջին՝ ռազմական գործողութիւնների կենտրոնական հատուածի հրամանատարն էր գեն. Արտեմ Յովսէփեանը, որի վերադասն էր Կարսի բերդապահ եւ ռազմաճակատի փաստական հրամանատար գեն. Դանիէլ-բէգ Փիրումեանը[183]: Վերջինիս անմիջական ղեկավարն էր ռազմաճակատի անուանական հրամանատար գեն. Մովսէս Սիլիկեանը, որի նստավայրը Ալեքսանդրապոլն էր՝ ռազմական գործողութիւնների թատերաբեմից շուրջ 70 կիլոմետր հեռաւորութեամբ[184]: Սիլիկեանի վերադասն էլ զօրքի գլխաւոր հրամանատար գեն. Թովմաս Նազարբէգեանն էր՝ Երեւանում: Այսպիսով՝ ստեղծուել էր քառաստիճան հրամանատարութիւն. մէկ մարմին՝ չորս գլխով: Յատկանշական է նաեւ այն, որ Սիլիկեանն ու Նազարբէգեանը ընդամէնը 1-2 անգամ են այցելել Կարս՝ պատերազմական գործողութիւնների ամբողջ

[182] Հայ Գնդունի, «Դրուագներ Կարսի կռիւներէն», «Պայքար» ամսագիր, 1931, սեպտեմբեր, էջ 80:

[183] Ի դէպ, ըստ լաւատեղեակ աղբիւրի, ՀՀ կառավարութեան՝ Կարսի ռազմաճակատ ուղարկած լիազօր, խնամատարութեան նախարար Ա. Բաբալեանի՝ «առաջինը իբր թէ պիտի ենթարկուէր երկրորդին, բայց մենք բնաւ այդ չնկատեցինք» (Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 56):

[184] Շտաբի հաստատումը Ալեքսանդրապոլում Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանեանը «ճակատագրական» սխալ է համարում. տե՛ս ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 362:

ընթացքում: Իրականում Սիլիկեանը ռազմական պլաններով չէր էլ զբաղւում, նրա փոխարէն դա անում էր իր շտաբի պետը՝ գնդապետ Ալեքսանդր Վեքիլեանը[185]: Սա եթէ մէկ կողմից՝ ռուսական ռազմարուեստի բազմաստիճան հրամանատարման սկզբունքի կապկում էր, միւս կողմից՝ դա կատարուել էր ինքնահաւան եւ իրար նկատմամբ նախանձով ու ատելութեամբ լցուած գեներալների փառասիրութիւնը բաւարարելու համար: Իւրաքանչիւր հրամանատար, իհարկէ, ունէր նաեւ իր շտաբը՝ բազմաթիւ սպաներով: Եթէ սրանց աւելացնենք այն, որ հեռագրական եւ հեռախօսային կապը յաճախ խզւում էր, երբեմն՝ տեւական ժամանակով, ապա պատկերը ամբողջական կլինի[186]: Նման պայմաններում անհնար կլինէր օպերատիւ ռազմական որոշումներ ընդունել, հրահանգներ արձակել ու դրանք տեղ հասցնել, ռազմական գործողութիւնները համակարգել: Շատ են վկայութիւնները, թէ ճակատի այս կամ այն զօրամիաւորումը տեղեակ չէր, թէ ի՞նչ է կատարւում թեւերում[187], նոյնիսկ հարեւան զօրամիաւորումներում[188]: Միւս սխալն այն էր, որ այս բոլոր զօրահրամանատարների միջեւ յարաբերութիւնները, մեղմ ասած, բարեացակամ չէին. տեւական նախանձ, փոխադարձ դաւեր (աւելի մանրամասն՝ յետագայ շարադրանքում): «Մինչդեռ մեր դիմաց մէկ կամք, մէկ հրամայող կար – Քեազիմ Կարաբէքիր փաշան»[189]:

Բ. 1. 9. Զօրակոչի բարձիթողի վիճակը

Զօրակոչի կարեւոր գործի նկատմամբ ՀՀ կառավարութեան մօտեցումը, ըստ Հայ Գնդունու, «մակերեսային եւ իրապէս վարժա-

[185] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 63:

[186] Ստ. Ղորղանեանը առանձնակի ուշադրութիւն է հրաւիրում այն փաստի վրայ, որ «Կարսի անկման դեռ նախընթաց օրից զօրքերի հրամանատարը ոչ մի հեռագրական կամ հեռախօսային կապ չունէր իր զօրամասերի հետ <...> Կապը կա՛մ խզուած էր, կա՛մ նրանից օգտուելու ցանկացող չկար <...> Երբ թիւրք հրոսակախմբերը լցուել էին արդէն քաղաք, զօրքերի հրամանատարին այդ մասին տեղեկացրին կողմնակի մարդիկ: Նորին գերազանցութիւնը ոչինչ չգիտէր, թէ ի՞նչ է կատարւում նոյնիսկ քաղաքում...» (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 10, թ. 43):

[187] Տե՛ս, օրինակ, Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 36:

[188] Տե՛ս նաեւ ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 96:

[189] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 56:

պետական» էր[190]: Սիմոն Վրացեանի գնահատումով՝ զօրակոչն ու առհասարակ թիկունքը «լաւ կազմակերպուած» չէին[191], իսկ ըստ Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի՝ այդ պատասխանատու գործը «մի այնպիսի շփոթ, մի այնպիսի քաոս էր, որի նմանը երեւակայել անգամ դժուար է»[192] եւ «գտնւում էր անշնորհք եւ ապիկար ադմինիստրացիայի ձեռքում»[193]: Զօրակոչը կատարւում էր «վայր ի վերոյ, առանց սիստեմի, տուեալների եւ առանց որեւէ պատասխանատուութեան»[194]: Թիկունքի պետ, գեներալ Միքայէլ Արէշեանը մի ապաշնորհ մարդ էր, զուրկ կազմակերպչական կարողութիւններից: Նա, «փոխանակ իրեն յանձնուած նոր-նոր ոյժերը կազմակերպելով ճակատն ուղարկելու, աւելի կքաջալերէր դասալքութիւնը դէպի Վրաստան»[195]: Բանակի Զօրակոչային վարչութիւնը գլխաւորում էր ռուս գնդապետ Մակավիեւը: Նահանգներում եւս ռուսների կամ հայութիւնից լրիւ ուծացած սպաների էր յանձնուել այս յոյժ կարեւոր միջոցառման իրականացումը: Նրանք եթէ նոյնիսկ բանիմաց եւ մասնագէտ լինէին այս հարցում, այնուամենայնիւ սրտացաւ չէին կարող լինել. Հայաստանի Հանրապետութիւնը ռուս սպաների հայրենիի պետութիւնը չէր, իսկ հայազգի սպաների հոգում ՀՀ-ը որպէս Հայրենիքի մի մաս կամ գոնէ, սեփական՝ հայրենի պետութիւն չէր ընկալւում: Սպայակազմի այս երկու ենթախմբերն իրենց հիւր էին համարում եւ սպասում էին ռուսական իշխանութեան վերստին յայտնուելուն տարածաշրջանում՝ անկախ գոյնից՝ սպիտա՞կ թէ կարմիր:

Զօրակոչն առաւել բաբելոնեան խառնակութիւն էր յիշեցնում, քան զինուորական կարգապահութեամբ մի միջոցառում: Զօրակոչի պլան գոյութիւն չունէր, իսկ եթէ կար, դրան անտեղեակ էր Կարսի նահանգապետը, որին յանձնարարուել էր զօրակոչի կազմակերպումը նահանգում[196]: Նահանգի զօրակոչը իրականացնելու կոչուած հայանուն, հայերէն ոչ մի բառ չիմացող գնդապետին «նոյնչափ էր հետաքրքրում հայկական գործը, որքան ինձ եւ ձեզ՝

[190] ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 29 հոկտեմբերի, էջ 2:
[191] Սիմոն Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Երեւան, 1993, էջ 508:
[192] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 155:
[193] Նոյնը, գ. 10, թ. 4:
[194] Նոյնը, գ. 6, թ. 94:
[195] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 292:
[196] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 94:

անցեալ տարուայ քամին»[197],- հեգնում է նահանգապետն իր յուշերում:

Բ. 1. 10. Հայ զինուորների՝ կանադական հրացաններին անբաւարար տիրապետելը

Թուրքական յարձակումից յետոյ յայտարարուած զօրակոչով «զէնքի տակ առնուած մարդոց գրեթէ մեծ մասը անտեղեակ էր հրացանի գործածութեան, զին. տարրական կրթութիւն ու վարժութիւն չէր տեսած», վկայում է առաջին գծում մարտնչած 8-րդ գնդի առաջին գումարտակի հրամանատար Հայ Գնդունին[198]: 1920 թ. աշնանը Մեծ Բրիտանիայի՝ ՀՀ-ին վաճառած կանադական հրացանները «բոլորովին անպէտ զէնքեր էին», իսկ հայ զինուորն ու զինակոչիկը դրանց գործածութեանը «չէր մարզուած հարկ եղածին չափ»[199], դրանց «վարժ չէր»[200]: Կարօ Սասունու կարծիքով՝ այդ հրացանները ծանր էին եւ կոշտ, նրանց արձակած փամփուշտների զգալի տոկոսը չէր պայթում, ինչը հոգեբանական վատ ազդեցութիւն էր թողնում զինուորների վրայ[201]: Միւս կողմից՝ «նոյնիսկ սպաներից ոմանք դեռ չէին թափանցել նոր զէնքի գործածութեան գաղտնիքներին, որպէսզի սովորեցնել կարողանային իրենց ենթարկեալ զինուորներին», վկայում է կամաւոր մարտական գործողութիւնների շրջան մեկնած Գարեգին եպս. Յովսէփեանցը[202]:

Բ. 1. 11. ՀՀ բանակի եւ պաշտպանութեան նախարարութեան ապաշնորհ ղեկավարութիւնը

Այս մասին գրում են գրեթէ բոլոր յուշագրողները: Զօրահրամանատարներին յուշագրողները բնութագրում են ամենաբացասական գնահատականներով՝ «անզգամ»[203], «դաւադիր, վախկոտ», նաեւ՝ «ընչաքաղց, եսասէր, նեղմիտ»[204], «կայսերական իդէալների երկրպագու, զաւեշտ, թիւրիմացութիւն»[205], «ապիկար,

[197] Նոյնը, գ. 7, մաս 2, թ. 165:
[198] ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 29 հոկտեմբերի, էջ 2:
[199] Նոյնը, 1932 թ., 8 նոյեմբերի, էջ 1:
[200] Սիմոն Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Երեւան, 1993, էջ 508:
[201] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 5, էջ 80:
[202] «Ոգուն չապաւինելու արդիւնքը», էջ 31:
[203] ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 5 նոյեմբերի, էջ 2:
[204] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 58, 384:
[205] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 10, թ. 31:

ստախօս, վախկոտ, ցեց»[206], «անընդունակ, ողորմելի», «ազգուրաց», «հրէշ», նաեւ հեգնանքով՝ «ասպետ, հերոս»[207]: Յուշագրողների մեծ մասը բարձրաստիճան հրամանատարութիւնը դասակարգում է երկու խմբակցութիւններում.

1. Հայ սպայութեան «հայրեր». սրանք ռուսներ էին կամ բացառապէս ու միայն ռուսերէն խօսողներ, երբեմնի ցարական բանակի սպաներ:

2. «Նորընծայ հայ սպաներ». սրանց մեծ մասը նախապէս եղել է «տիրացու, խանութպան, գործակատար» կամ, «լաւագոյն դէպքում, ծխական ուսումնարանի վարժապետ»: Սրանք ռուսների եւ ռուսախօսների միջավայրում տառապում էին ստորակայութեան բարդոյթով: Ըստ այս դասակարգման հեղինակի՝ Ստ. Ղորղանեանի՝ այս դասը «տքնում էր ռուսերէն խօսելու, բայց նա ռուսերէն միայն կոտրատում էր...»՝ «առաջ բերելով ռուսների մէջ միայն հեգնանք եւ միայն ծաղր»[208]:

Ներկայացնենք այս հրամանատարների ապաշնորհութեան ընդամէնը մէկ օրինակ:

8-րդ գնդի առաջին գումարտակի հրամանատար Հայ Գնդունին, որ հոկտեմբերի 28-ի՝ լոյս 29-ի գիշերը ներկայացել էր ռազմաճակատի կենտրոնի հրամանատարութիւնն ստանձնած գեներալ Ղազարեանին, իր յուշերում գրում է. «Զօրավարը դրութիւնը ըմբռնողի չէր նմաներ, անտարբերութեամբ կվարուէր մեր զեկուցումին հետ, նոյն իսկ կատարելապէս անուշադրութեան մատնելով իմ կտրուկ յայտարարութիւնս, որ թուրքերը հետեւեալ օրն իսկ եթէ ուզէին առաջ շարժիլ, եւ հայ բանակը չկարենար լուրջ դիմադրութիւն մը կազմակերպել, Կարսը կիյնար նոյն օրն իսկ»[209]:

---

[206] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 55, 57, 62: Այս բոլոր որակումները տրուել են գեներալ Արտեմ Յովսէփեանին: Նման յատկանիշներով անձի նշանաբանը եղել է... «Մեռնել կամ յաղթել»-ը (Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 90), որով իմաստազրկուել է ոգեղէն մեծ ներոյժ պարունակող այս նշանախօսքը:

[207] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 59, գ. 16, թ. 47, գ. 18, թ. 38, գ. 7, մաս 1, թ. 122:

[208] Նոյնը, մաս 3, թթ. 397-399:

[209] Հայ Գնդունի, «Դրուագներ Կարսի կռիւներէն», «Պայքար» ամսագիր, 1931, սեպտեմբեր, էջ 82: Սա այն գնդապետն է, որ Նժդեհից առաջ, իր՝ Սիւնիք մեկնելու համար որպէս նախապայման ՀՀ կառավարութիւնից պահանջել էր «կանխաւ աստիճանի բարձրացում եւ կրկնակի ամսական»

Ճիշտ հակառակ պատկերն էր թուրքական հրամկազմում: Բացի կարող եւ վճռական Կարաբէքիրից՝ նրա ենթակաները եւս աչքի էին ընկնում բարձր յատկանիշներով: Կարաբէքիրը յայտնում է, որ իր գնդապետներից Խալիդ բէգը՝ «շատ քաջ, յանդուգն» մի հրամանատար, Կարսի վրայ յարձակման «հրամանը տանող Քեազըմ բէգէն խնդրած է, որ 12-րդ բանակին հետ տեղը փոխուի եւ ամրութիւններուն վրայ ինք յարձակի»[210]: Քեազըմ բէգ մերժել է ընդառաջել՝ ինք ուզենալով առաջինը վայելել յաղթողի դափնիները:

Բ. 1. 12. Յոյսը Կարսի անառիկ ամրութիւնների եւ հարիւրաւոր թնդանօթների վրայ դնելը

Այստեղ մի անգամ եւս երեւում է պայքարելու ոգին թերագնահատելու կործանարար հետեւանքը: Այս ամրութիւնների վրայ իրենց յոյսն էին դրել շատերը՝ բարձր զօրահրամանատարներից մինչեւ ՀՀ քաղաքական վերնախաւն ու Կարսի բնակչութիւնը: Ըստ Ստեփան Ղորղանեանի՝ «հայ սրբերից յետոյ, նա (հայ ժողովուրդը - Գ. Ե.) հաւատում էր եւ Կարսի վիթխարի թնդանօթներին»[211]: Եթէ բացակայում է պայքարելու, դիմադրելու եւ յաղթելու ոգին, սրբերը, ամենաանառիկ ամրութիւններն ու վիթխարի թնդանօթներն իսկ անկարող են պարտութեան դառնութիւնը ճաշակել չտալու անպարտելի համարուած բանակներին[212]: «Եթէ

(Օննիկ Զարմունի, «Ցեղի հրամայականը», Երեւան, 2007, էջ 158), եւ ստացել էր...

[210] «Քեազըմ Կարաբէքիրի յուշերը Հայաստանի Հանրապետութեան վրայ թրքական յարձակումներուն մասին», «Զարթօնք», 1966 թ., 10 օգոստոսի, էջ 2:

[211] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 416:

[212] Բաւարար է ասել, որ ատոմական զէնք ունեցող չորս մեծ պետութիւններ խայտառակ պարտութիւն են կրել. ԱՄՆ-ը՝ Վիետնամում (վստահաբար պարտուելու է նաեւ Իրաքում եւ Աֆղանստանում), Խորհրդային Միութիւնը՝ Աֆղանստանում, Մեծ Բրիտանիան՝ իր գաղութներում, Ֆրանսիան՝ իր գաղութներում, մասնաւորաբար Ալժիրում: Ատոմային զէնք ունեցող Իսրայէլը 2006 թ. չկարողացաւ ծնկի բերել լիբանանեան «Հզբոլլահին»՝ շնորհիւ վերջինիս մարտիկների բարոյահոգեբանական կամային յատկանիշների: Հայոց նորագոյն պատմութեան մէջ եւս արձանագրուեց նման դրուագ. ադրբեջանցիների անառիկ ամրութիւն համարուած հայկական Շուշի քաղաքը հայ մարտիկները սրընթաց գրոհով ազատագրեցին 1992 թ. մայիսի 8-9-ին՝ շնորհիւ կռուելու եւ յաղթելու ան-

Կարադաղի ամրութիւններից մեր թնդանօթները միայն գործէին, ո՛չ միայն քաղաքը պաշտպանուած կլինէր, այլ նոքա (թուրքերը - Գ. Ե.) չէին կարող բերդին իսկ մօտենալ»,- գրում է Գարեգին սրբազանը[213]: Սակայն գերաշնորհ հայրը մոռանում է, որ թնդանօթները բանեցնում են մարդիկ, որոնք պէտք է աներեր հաւատք ունենան իրենց յաղթանակի նկատմամբ: Ապա թէ ոչ պարտութիւնը չպէտք է անակնկալ լինի որեւէ մէկի, առաւել եւս՝ «զինուորական բարձր իշխանութեան համար», ինչպէս Կարսի անկման դէպքում էր[214]:

Հրամկազմի մի մասը չէր էլ հաւատում Կարսի ամրութիւններին: «Նազարբէգեան կարծում էր, որ թշնամու ճնշման տակ, ստիպուած պիտի լինենք թողնել Կարսը եւ, պահպանելով կենդանի ոյժը, կարգի բերել մեր գնդերը, զինել, հագցնել եւ ապա չափուել թշնամու հետ»[215]: Նոյն կարծիքին է եղել նաեւ գլխաւոր շտաբի պետ գեներալ Յովհաննէս Հախվերդեանը: Կառավարութիւնը մերժում է այս առաջարկը՝ յուսալքութիւն չառաջացնելու համար: Կ. Սասունին ճիշտ է համարում Նազարբէգեանի առաջարկը եւ աւելացնում. «Կարսի բերդին եւ քարերուն վրայ յոյսը դնելը ամենէն մեծ սխալը եղած է»: «Կարսի բերդը եղաւ գլխաւոր պատճառը Կարսի աղէտալի անկման»,- եզրակացնում է Սասունին՝ աւելացնելով՝ «Կարսը առանց կռուի տալը զինուորական խելացիութիւն պիտի ըլլար», քանի որ 60 հազարանոց բանակի համար նախատեսուած «բերդը այդքան քիչ թուով զինուորներով անկարելի էր պաշտպանել»[216]: Սեպտեմբերի վերջի անյաջողութիւններից յետոյ գեներալներ Փիրումեան եւ Յովսէփեան եւս նոյն ամսի 29-ի գիշերային խորհրդակցութեան ժամանակ արտայայտուել են քաղաքի բնակչութիւնը պարպելու եւ նրան անմիջապէս քաղաքից դուրս հանելու օգտին՝ միաժամանակ աւելացնելով՝ «գիշերուայ ժամը 1-էն սկսեալ իրենք պատասխանատուութիւն չեն ստանձներ»[217]: Նման դասալիք հրամանատարները փոխանակ գնդակահարուելու, շարունակեցին իրենց գործը՝ ՀՀ-ն առաջնորդելով դէպի վերջնական կործանում...

Սակայն է՛լ աւելի վրդովեցուցիչ փաստն այն է, որ Կարսի ամրութիւնների նկատմամբ անփոյթ վերաբերմունք է դրսեւորել նոյնինքն բերդապահ նշանակուած գեներալ Փիրումեանը[218]: Հենց սկզբից միասնութիւն չկար այն հարցում, թէ հարկաւո՞ր է արդեօք Կարսը պահպանել որպէս բերդաքաղաք, թէ՞ ոչ: Կառավարութեանն ուղարկած իր զեկոյցում Կարսի հրետանու հրամանատար նշանակուած բուլղար գնդապետ Բաբաջանովը յայտնելով, թէ Կարսի «ամրացրած գօտիում աւելի քան 300 ծանր թնդանօթ եւ անթիւ ու անհամար ռազմամթերք» կար, որոնք «այսօր երեսի վերայ» էին թողնուած, երկու ընտրանքներից մէկնումէկն էր առաջարկում՝ կա՛մ եղածը վերակազմակերպել, կա՛մ որպէս բերդ հրաժարուել Կարսից՝ այն որպէս ռազմամթերքի պահեստ միայն պահելով»[219]: Ինչպէս շատ հարցեր, սա եւս թողնւում է անլոյծ եւ բարձիթողի: «Բերդը ե՛ւ գոյութիւն ունէր ե՛ւ ոչ: Բերդապահ կար, ինչպէս նաեւ հրետանիի պետ, բայց զօրք չկար»,- գրում է Կարսում ՀՀ կառավարութեան լիազօր ներկայացուցիչը[220]: Եւ միայն պատերազմն սկսուելուց յետոյ հապճեպ կերպով մի շարք կարգադրութիւններ են անում, որոնք երկար ամիսների անփութութեան պատճառով ստեղծուած ողորմելի վիճակը չէին կարող հաշուած օրերի ընթացքում յեղաշրջել յօգուտ հայերի: Հոկտեմբերի վերջին շաբաթը ի վերջոյ սկսում են կարգի բերել բերդի՝ «երեսի վերայ ընկած բազմաթիւ թնդանօթները», հեռախօսային եւ հեռագրական կապը վերականգնել ու այլ անհրաժեշտ աշխատանքներ կատարել[221], թնդանօթաձիգ սպաներ ճարել[222]:

Բ. 1. 13. Հայկական երկաթուղու խայտառակ վիճակը

Սա եւս կարելի է դասել ռազմական բնոյթի սխալների շարքը: Օրագրողը հոկտեմբերի 3-ին գրել է. «Նաւթ ու մազութ չունենալու պատճառով, մեր երկաթուղագիծը համայն Հայաստանում

սասան հաւատին ու դրանից բխած ոգուն: Արժէ յատուկ նշել, որ Կարսի եւ Շուշիի ամրութիւնների տեղագրութիւնը բաւական նման է:

[213] «Ոգուն չապաւինելու արդիւնքը», էջ 41:

[214] Նոյն տեղում:

[215] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 55:

[216] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 7, էջ 73-74:

[217] Նոյնը, թիւ 5, էջ 84:

[218] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 58:

[219] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 407:

[220] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 58:

[221] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 364:

[222] Նոյնը, թ. 367:

այս քանի շաբաթ է, որ ի սպառ կանգնել է: Այս է, որ մեր մէջքը ջարդում է: Եթէ մեր երկաթուղին բաներ, մենք ոչ մի թիզ հող չէինք զիջի թուրքերին[223]: Սա էլ հաղորդակցութեան նախարարի[224] անհեռատեսութեան արդիւնքն է: Նեղ օրուայ համար մեր երկիրը միշտ պէտք է անձեռնմխելի պաշար ունենայ զօրաշարժի համար, բայց այդ չի արուած»: Օրագրողը վրդովուած հարց է տալիս. «Այսպէս էլ անտարբերութիւն կլինի՞...» ու անմիջապէս աւելացնում. «Ինձ մնար, ես Ջամալեանին առաջին հերթին ռազմադաշտային դատարանի կյանձնէի»[225]:

Հայկական երկաթուղում կաշառքն ու կողոպուտը դարձել էին «բնական» երեւոյթներ: «Երկաթուղու ամեն մի կայան մի սատրապութիւն, «ինքնորոշուող» մի հաստատութիւն էր, ուր գնացքը պէտք է կանգներ եւ վճարեր իր մաքսը»[226]: Երկաթուղու Կարսի նահանգի հատուածում կողոպտում էին յատկապէս հարուստ թուրքերին: Նահանգապետը երկաթուղու ոստիկանապետին հեռացնում է աշխատանքից, բայց որոշ ժամանակ անց իմանում է, որ Երեւանից նրան նորից նշանակել են նոյն պաշտօնին[227]:

[223] Մենք համաձայն չենք օրագրողի այս գնահատականին, թէեւ չենք ժխտում երկաթուղու անգործութեան ռազմական եւ բարոյահոգեբանական բացասական ազդեցութիւնը:

[224] Բիւրո-կառավարութիւնում հաղորդակցութեան նախարարն էր Արշակ Ջամալեանը:

[225] Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», էջ 88: Միամիտ երիտասարդ, ի՜նչ դատարան, ի՜նչ բան... Ո՞վ կհամարձակուէր «աչքիդ վերեւում յօնք կայ» ասել իշխող կուսակցութեան՝ ՀՅԴ-ի ամենակարող Բիւրո-կառավարութեան անդամին: Նման համարձակին մաուզերիստ տղերքը անյապաղ համապատասխան «մշակման» կենթարկէին, ինչպէս այսօրուայ իշխանաւորների դէպքում դա անում են թիկնազօրների պարարտ, հաստավիզ եւ սափրագլուխ մարդանմանները...

[226] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 12, թ. 68: Փչացածութեան (կոռուպցիայի) նման երեւոյթներ եւս «բնական» են համարւում Հայաստանի երրորդ Հանրապետութեան տրանսպորտի ոլորտում, յատկապէս «Զուարթնոց» օդանաւակայանում՝ 1990-ական թուականներին:

[227] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թթ. 41-44:

Բ. 2. Ռազմահոգեբանական պատճառներ եւ սխալներ

Բ. 2. 1. Պատերազմին հոգեբանական անպատրաստուածութիւնը, թուրքական վտանգի թերագնահատումը եւ սեփական կարողութիւնների գերագնահատումը

Մեր համոզմունքով՝ սա Կարսի եւ դրան հետեւած ՀՀ անկման գլխաւոր գործօններից է: Որեւէ պատերազմի կամ նոյնիսկ դրա վտանգի նկատմամբ հոգեբանական անպատրաստութիւնն անխուսափելիօրէն առաջնորդում է մարտական ոգու թուլացմանը[228]: «Կառավարութեան ու պարլամենտի համար տաճկական վտանգ չկար, կամ այդ վտանգը սպառնալից չէր»,- գրում է նախարար Արտաշէս Բաբալեանը[229]: Դա ունի իր հոգեբանական բացատրութիւնը. ՀՀ-ն Կարսի մարզը ձեռք էր բերել հեշտութեամբ, առանց մեծ զոհողութիւնների՝ այն ստանալով բրիտանացիներից 1919 թ. ապրիլ-մայիսին: Իսկ ինչ ձեռք է բերւում հեշտութեամբ, ընդհանրապէս նրա իսկական արժէքը թերագնահատւում է, նմանապէս թերագնահատւում են այն կորցնելու վտանգն ու նշանակութիւնը:

Թուրքական վտանգի թերագնահատումն ուղեկցւում էր սեփական կարողութիւնների անհիմն գերագնահատումով, «որովհետեւ յաղթական էինք մեր անկախութեան առաջին օրերից իսկ», «լաւ զինուած եւ պարենաւորուած, Անդրկովկասում կռուողի հռչակ հանած, թուով գերազանց» բանակ ունէինք եւ «ուժեղ էինք Անդրկովկասեան միւս հանրապետութիւնների համեմատ»[230]: Ըստ Կարօ Սասունու՝ «Հայկական զինուորական անձնավստահութիւնը իր կարծեցեալ թուական առաւելութեան վրայ էր»[231]:

[228] Տե՛ս նաեւ Արարատ Յակոբեան, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմութեան փորձն ու դասերը», էջ 28:

[229] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 54: Տե՛ս նաեւ Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 35: Այս սխալն այսօր նոյնութեամբ կրկնում են Հայաստանի երրորդ Հանրապետութեան ղեկավարները:

[230] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 64-65: Նոյնը հաստատում է նաեւ Վահէ Արծրունին (Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 35): Այս արտայայտութիւնները եւս այսօր նոյնութեամբ կրկնում են ՀՀ քաղաքական եւ զինուորական ղեկավարները:

[231] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 6, էջ 89:

Ըստ Գարեգին եպս. Յովսէփեանցի արժանահաւատ վկայութեան, հայոց զօրքը «գրեթէ ամբոխից էր բաղկացած»[232]: Այդ զինակոչիկների մեծ մասը եկել էր գիւղերից, որտեղ աշնանային բերքահաւաքի եռուն շրջանն էր: Զօրակոչուած գիւղացի երիտասարդն ու հասուն տղամարդը չէին կարող չմտահոգուել օր առաջ տուն դառնալու, իրենց ընտանիքի ձմեռուայ պաշարն ապահովելու, մի քիչ էլ սեւ օրուայ համար խնայողութիւններ ունենալու բնական ու տրամաբանական խնդրով:

Զօրակոչին ներկայանում էին աղքատների եւ «տանիք» չունեցողների որդիները: Հովանաւոր ունեցող կամ կաշառք տուող երիտասարդների մի մասը փախչում էր արտասահման (մասնաւորաբար՝ Թիֆլիս), միւս մասը՝ տեղաւորւում էր սպաների մօտ՝ ռազմական գործողութիւններից հեռու[233]: Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանեանը եզրակացնում է, որ զօրահավաքը հավասարուել էր «ամօթալի սնանկութեան»[234]:

Ռազմահոգեբանական մէկ այլ կոպիտ սխալ էր նման յատկանիշներ ունեցող զօրակոչիկների միախառնումը մասնագիտացուած զօրամիաւորումներին, որի հետեւանքով զգալիօրէն նուազում էր վերջիններիս մարտունակութիւնը, նրանց եւս մղելով խուճապի:

[232] Գարեգին եպս. Յովսէփեանցի օրագիրը, «Բանբեր Հայաստանի արխիւների», 1989, թիւ 3, էջ 146:

[233] Նոյն երեւոյթը դրսեւորուեց նաեւ Հայաստանի երրորդ Հանրապետութիւնում, յատկապէս Արցախեան ազատամարտի տարիներին, երբ «պաշտօնեաների երեխաները կաշառքով բանակից ազատւում էին», իսկ բռնի զօրակոչից (մարդորսութիւն) ազատուելու համար կաշառքի չափը 500-3000 ամերիկեան դոլար էր (Աղասի Թադեւոսեան, «Սոցիալական վախի երեւոյթը. արմատները եւ ձեւերը Հայաստանում (1991-1998 թթ.)», «Անցումային շրջանի էքսոհոգեբանական փոփոխութիւնների առանձնայատկութիւնները Հայաստանում» (յօդուածների ժողովածու), «Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի» հրատարակութիւն, Երեւան, հոկտ. 1998, էջ 25, 30): Զօրակոչից ազատուելու կամ տաք անկիւններում զինծառայութիւնն «անցկացնելու» համար կաշառքի, նաեւ՝ խնամի-ծանօթ-բարեկամ-իշխանաւոր երեւոյթը շարունակւում է նաեւ այսօր՝ հիմնովին ոգեզրկելով հայոց յաղթական բանակի զինուորներին եւ կրտսեր սպայութեանը:

[234] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 10, թ. 4:

Բ. 2. 2. Հրամանատարութեան անգիտութիւնը կամ միտումնաւոր տգիտութիւնը զօրքի որակական արժէքը գնահատելիս

ՀՀ բանակի հրամանատարութիւնը կա՛մ չէր հետաքրքրւում զօրքում տիրող իրական վիճակով, կա՛մ անգիտանում էր դա, կա՛մ էլ նենգափոխում զօրքում տիրող բացասական յատկանիշները: Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանեանը դիպուկ նկատել է տալիս, որ զօրքն ու նրա հրամանատարութիւնը «երկու խորթ եւ իրար հակասող ու բացառող հատուածներ էին»[235]: Այս մասին չափազանց ուշագրաւ է Հայ ռամկավար կուսակցութեան ղեկավար, «Հայաստանի ձայն» թերթի խմբագիր, յետագայում ՌԱԿ-ի հիմնադիր-ղեկավարներից Արտակ Դարբինեանի վկայութիւնը: Նախքան Երեւանից հեռանալը, 1920 թ. աշնան սկզբին նա հանդիպում է վարչապետ Համօ Օհանջանեանին եւ իր դպրոցական ընկերոջը՝ զօրաց նախարար եւ երկրի փաստական դիկտատոր Ռուբէն Տէր-Մինասեանին ու նրանցից խնդրում տեղեկութիւններ՝ դրանք Հայ ռամկավար կուսակցութեան՝ Կ. Պոլսում կայանալիք Գ Ընդհանուր պատգամաւորական ժողովին ներկայացնելու համար: «Թէ Օհանջանեան եւ թէ Տէր-Մինասեան հաւաստիացուցին ինձ, թէ այդ (թուրքական յարձակման մասին շրջանառուող - Գ. Ե.) զրոյցները չափազանցուած են»: Ռուբէնն աւելացնում է. «Այսօր երբ Հայաստան եւ քեմալական Թուրքիա իրարու դէմ պատերազմական վիճակի մէջ կգտնուին, իրապէս չեմ գիտեր, թէ ի՞նչ է մեր բանակին քանակական եւ որակական ոյժը»[236]:

Բ. 2. 3. Համատարած անկարգապահութիւնն ու անպատասխանատուութիւնը ՀՀ բանակում

Իւրաքանչիւր գործի, առաւել եւս, բանակային գործի արդիւնաւէտութեան ու յաջողութեան հիմքերի հիմքը կարգապահութիւնն է: Հրամանների անվարան, «անվճռաբեկ պարտաւորութեամբ եւ ճշտութեամբ» կատարումը, յատկապէս ռազմական գործողութիւնների ժամանակ, ընդունուած չէր ՀՀ բանակում: Ամեն մէկը «սիրում էր միայն ճառել եւ միայն ընդ[դ]իմախօսել»[237]: Որպէս ՀՀ բանակի մեծագոյն թերութիւն՝ դա նշել է նոյնինքն Կարաբէքիրը՝ Կարսի անկումից յետոյ՝ ընդունելով քաղաքի որբանոցների

[235] Նոյնը, գ. 7, մաս 2, թ. 235:

[236] Արտակ Դարբինեան, «Հայ ազատագրական շարժման օրերէն», Բ տպագրութիւն, Երեւան, 2003, էջ 263:

[237] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 8, թ. 12:

ամերիկացի պատասխանատուներին եւ նրանց թւում իր հայկական ինքնութիւնը թաքցրած յուշագրող Վահէ Արծրունուն: Նա ասել է. «Հայկական բանակը, բացի նորելուկ ըլլալէ, ունի խախուտ հիմք: Լինելով յեղափոխական կուսակցութեան մը զինական ոյժը, չունի զինուորական անհրաժեշտ կարգապահութիւնը»[238]:

ՀՀ բանակի զինուորների, կրտսեր եւ միջին աստիճանի սպաների մեծ մասն իրեն գեներալ է պատկերացրել, եւ ստացած հրամանները կատարելու կամ չկատարելու իրաւունք է վերապահել ինքն իրեն: Տիրել է համընդհանուր անկարգապահութիւն: Հակառակ պատկերն էր թուրքական բանակում: Ուշագրաւ են Ալեքսանդրապոլի հաշտութեան բանակցութիւնների մեկնած Ստեփան Ղորղանեանի դիտարկումները. «Տաճիկ սպաները աւելի ենթակայ էին, քան թէ վաղեմի ռուս կայսերական սպան: Թիւրքաց շտաբի պետը, գնդապետ[239], կանգ էր առնում (Կարաբէքիրի աշխատասենեակի - Գ. Ե.) դռան առաջ, շէմքում, չվստահելով մի քայլ անգամ առաջ անելու»: Նա «հրամանատարի հետ խօսելիս, աչքերը չէր բարձրացնում անգամ...»[240]:

1920 թ. մայիսեան խռովութիւններից յետոյ իշխանութեան ղեկն ստանձնած Բիւրօ-կառավարութիւնը «ոյժ տուաւ բանակը մեծցնելուն, առանց համապատասխան չափով ուշադրութիւն դարձնելու անոր կարգապահութեան եւ օրգանական կազմակերպութեանը վրայ»[241]: Զինուորական կարգապահութիւնը խախտողները ոչ միայն խստագոյնս չեն պատժուել, ոչ միայն նրանց ներել են, այլեւ... նրանց նոր պաշտօնների են նշանակել կամ պարգեւատրել: «Մեր զինուորներն ու սպաները պատասխանատուութեան զգացում ու հասկցողութիւն չունէին»,- դառնութեամբ նշում է Հայ Գնդունին[242]:

---

[238] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 244: Թուրքական բանակը հայկականից իր կարգապահութեամբ էապէս տարբերուել է նոյնիսկ թալանի հարցում: Նոյն ականատես աղբիւրը վկայում է, որ ասկեարներին թոյլատրուած էր փող եւ հագուստ թալանել, սակայն խիստ արգելուած էր ռազմամթերքի եւ կծղակաւոր եւ սմբակաւոր կենդանիների թալանը, որը թուրքական կառավարութեան սեփականութիւնն էր համարւում (նոյնը, էջ 256):

[239] Խալիլ բէյը Կարաբէքիրի յանգոյն ստացել էր խստագոյն կարգապահութեամբ յատկանշուող գերմանական ռազմական բարձրագոյն ուսում. տե՛ս ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 369:

[240] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 16, թ. 23:

[241] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 47:

[242] ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 8 նոյեմբերի, էջ 2:


Դանանլու
Սեւանայ լիճ
Նոր Բայազէտ
Երեւան
Բէօյիւք Վեդի
Սարամսարի
Ալեքսանդրապոլ
Մուսա Գեղեցիկ
Աշտարակ
Էջմիածին
Իգդիր
Խնուրեան
Սուրմալու
Սարիղամիշ
Կարս
Սարուշատի շրջան
Զանգեզուրի շրջան
Նախիջեւան
Սարդարապատ
Սուրբ Գրիգոր
Սարիղամիշ
Սարդարապատ
Սարդարապատ
Սարդարապատ

Կարադաղի ամրութիւնները Կարսի բերդի համակարգում:
Առաջին պլանում՝ Կարս գետը:

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան մինիստր-նախագահ Ալեքսանդր Խատիսեանը սպարապետ Թովմաս Նազարբէգեանի (ձախին), գեներալ Արտեմ Յովսէփեանի (Խատիսեանի ձախին), գեներալ Դանիէլ-բէգ Փիրումեանի, սպաների ու խմբապետների հետ: Լուսանկարուած Խատիսեանի՝ Կարսի շրջան այցի ժամանակ, շատ հաւանաբար՝ Սարիղամիշում, Սպայից տան մուտքին (3 նոյեմբեր 1919):

Հայկական բանակի թնդանօթներ եւ թնդանօթաձիգներ:

Հայկական բանակի գնդացրորդներ:

ՀՀ խնամատարութեան նախարար
Արտաշէս Բաբալեան

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ.
Գարեգին Ա Յովսէփեանց

Վահէ Արծրունի

Կարօ Սասունի

Կարս. համայնապատկեր. առաջին պլանում՝
ս. Առաքելոց եկեղեցին
(ներկայումս վերստին վերածուած մզկիթի):

Սեպուհ

Գնդապետ Յովհաննէս Մազմանեան

Գեներալ-մայոր Արտեմ Յովսէփեանց

Մուստաֆա Քեմալ (ձախին) եւ
Քեազիմ Կարաբէքիր



Կարս. առաջին պլանում՝ Կարս գետը եւ
գետափնեայ խճուղին:

Օրինակ՝ Մայիսեան խռովութիւնների ժամանակ բոլշեւիկները գնդապետ Նիկոլայ Ղորղանեանին նշանակել էին իրենց շտաբի պետ, եւ նա «ենթարկուած էր խռովարարներուն»[243]: Խռովութեան ճնշումից յետոյ նրան ոչ ոք պատասխանատուութեան չկանչեց, եւ նրան վստահուեց Կարսի ռազմաճակատի աջ թեւը, ուր նա միայն անյաջողութիւններ արձանագրեց:

Գնդապետ Ղորղանեանը միակը չէր: Աւելին՝ Մայիսեան խռովութիւնների օրերին բոլշեւիկներին չյարող բարձրաստիճան սպաները փոքրամասնութիւն էին: Օրինակ՝ Ալեքսանդրապոլում, սպայութիւնը ճանաչել էր Ռազմայեղափոխական կոմիտէի իշխանութիւնը[244], իսկ Փիրումեանն իրեն ենթակայ գեներալ Արտեմ Յովսէփեանի եւ գնդապետ Վահան Տէր-Առաքելեանի հետ այդ օրերին չեզոքութիւն յայտարարեց եւ «անհոգ-անհոգ փողոցները չափչփեցին»[245]: Է՛լ աւելի արտառոց է հինգերորդ գնդի հրամանատար, ռուսախօս գնդապետ Շաղուբաթեանի պահուածքը Կարսում՝ մայիսեան խռովութեան ժամանակ: Նա այդ օրերին «հնարաւոր համարեց պսակուելու եւ ուրախանալու...»: Աւելին՝ «երբ խռովարարները կարմիր ցնցոտի դրոշակներով անցնում էին զօրանոցների մօտով, այդ նոր ամուսնացած գնդապետը, արտասուքը աչքերին, որպէս մի սրբութիւն հարկաւոր համարեց համբուրել

---

[243] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 4, էջ 83:

[244] Տարօրինակ է, որ Ս. Վրացեանը դա բացատրում է սպայութեան՝ «զօրքի ամբողջութիւնը փրկելու եւ ներքին կռիւների պատճառ չտալու» ազնիւ մղումով (Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Երեւան, 1993, էջ 422), մինչդեռ այդ սպայութեան դիրքորոշումը պայմանաւորուած էր մինչեւ ուղն ու ծուծը ապազգայնութեամբ, սեփական պետութեան նկատմամբ հաւատքի պակասով կամ, առնվազն, արհամարհանքով:

[245] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 42: Ստեփան Ղորղանեանը բերում է յոյժ կարեւոր մի վկայութիւն: Երբ 1920 թ. դեկտեմբերի 2-ի՝ լոյս 3-ի գիշերը Ալեքսանդրապոլի համաձայնագիրը ստորագրած ՀՀ պատուիրակութեան երեք անդամները, նոր իշխանութիւնների պահանջով, մի քանի օր անց պարտադրուած հեռանում էին արդէն խորհրդայնացած ՀՀ-ի սահմաններից, ճանապարհին գիշերում են Ղարաքիլիսայում, ուր նրանց մօտենում է տեղի յեղկոմի անդամ մի երիտասարդ՝ Ղազանչեան ազգանունով եւ յայտնում, որ Կարսի մայիսեան «խռովութիւնների կազմակերպիչներից մէկը ինքն էր» եւ թե «գեն. Փիրումով եւ գեն. Յովսէփեան անցել էին նոցա, խռովարարների կողմը» (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 10, թթ. 44-45):

իրանց այնչափ հարազատ այդ կարմիր ցնցոտին...»[246]: Եւ ի՞նչ, պատժուե՞ց այս ուրացող եւ անպատասխանատու սպան: Իհարկէ՝ ո՛չ: Յետագայում նրան տեսնում ենք Կարսի ռազմաճակատում, իր գնդի հետ «ամենաամօթ կերպով» փախչողների առաջին շարքում[247]...

Ամենուրեք «ապստամբութիւնը կատարուեցաւ զօրքի կողմէ», որի պատճառով էլ «Բիւրօ-կառավարութիւնը վստահութիւն չունէր կանոնաւոր զօրքին վրայ»[248]: Նոյն խռովութեան պատճառով «պետականութեան գաղափարը, որ առանց այն էլ ուժեղ չէր մեր նորաստեղծ ազգային բանակում, աւելի եւս թուլացաւ»[249]:

Ուշագրաւ է, որ բարձրաստիճան հրամկազմը եւս չի վստահել իր ղեկավարած զօրքին: Հայ ռամկավար կուսակցութեան՝ 1920 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Գ Ընդհանուր պատգամաւորական ժողովին իր ներկայացրած զեկոյցում ՀՌԿ երեւանաբնակ ղեկավարներից Արտակ Դարբինեանը յայտնում է, թէ Հայկական բանակի ղեկավարութեան կարծիքով՝ «այսօրուան մեր ազգային բանակին մէջ գտնուող զինուորներուն մեծ մասը այլեւս անպէտք դարձած է, յոգնած, դասալքութեան եւ անկարգապահութեան ենթարկուած»[250]:

Անպատասխանատուութեան եւ անկարգապահութեան ցայտուն օրինակ է ՀՀ բանակի հոկտեմբերի 14-ի հակայարձակումը, որը նախատեսուած էր արեւածագին, սակայն «գնդապետների եւ շտաբների անհոգութեան պատճառով»[251] սկսում է որոշուած ժամից երկու, Հարամ Վարդանի ամրութիւնների ուղղութեամբ գործող թեւում՝ 3.5 ժամ անց, իսկ աջ թեւի մի զօրամաս «իր թնդանօթներով երեք ժամ յետոյ հասած էր իրեն համար որոշուած վայրը»[252]:

Անպատասխանատուութեան մէկ այլ դասական օրինակ է խմբապետ Կնեազի արարքը. ստանալով ձախ թեւը հետախուզելու

[246] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թ. 21:
[247] Նոյն տեղում:
[248] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 46:
[249] Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Երեւան, 1993, էջ 426:
[250] Արտակ Դարբինեան, «Հայ ազատագրական շարժման օրերէն», Բ տպագրութիւն, Երեւան, 2003, էջ 257:
[251] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 57:
[252] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 5, էջ 84:

հրաման՝ «կէս ճանապարհից վերադարձել էր հանգստացուցիչ հաղորդագրութեամբ»՝ յայտնելով, թէ այդ թեւի վրայ թշնամի չկայ[253]:

Ահաւասիկ անփութութեան եւս մէկ արտառոց օրինակ: Հոկտեմբերի 22-ին Սեպուհի բրիգադի շտաբը հաստատւում է Կարսի նահանգի Ռադինովկա մոլոկանների գիւղի մի բնակարանում, ուր ապրում էր մի մոլոկան պառաւ՝ իր թոռան հետ: «Մեր հեռագրատան ծառայողներն ընդհանուր առմամբ խօսում են ռուսերէն, գրութիւնների մեծ մասը նոյն լեզուով է կատարւում եւ օ~, զարմանք, մոլոկան ընտանիքը նստած այստեղ լսում է ամեն բան»[254]: Եւ սա այն դէպքում, երբ մոլոկանների վերաբերմունքը դէպի ՀՀ-ն շատ թշնամական էր:

Իսկ յիմարութեան եւս մէկ «գլուխգործոց»: Չորրորդ գնդի հրամանատար, գնդապետ Դմիտրի Միրիմանեանի յանձնարարութեամբ սեպտեմբերի 13-ի՝ լոյս 14-ի գիշերը Կարաուրգան կայարանում՝ յառաջացեալ դիրքում, տեղի է ունենում հայ եւ թուրք սպաների միացեալ... խնջոյք, որպէսզի «հնարաւոր ըլլար գոնէ կոնեակի ազդեցութեան տակ տեղեկութիւններ կորզել տաճկական ներքին իրադարձութիւններուն մասին»: Հնչում են փոխադարձ «կեցցէ»-ներ եւ «ուռռա»-ներ, «գնդապետ Միրիմանեանի ստորադասները հոգեկան ամենամեծ հաճոյքով կոնեակի շիշերը կպարպէին որկրամոլ, այլ ծուղակէ չբռնուող թուրք սպաներուն կենացը»: Եւ ի՞նչ: Թուրք սպաների մեկնումից քիչ անց թուրք հետախոյզները թափանցում են քէֆի վայր եւ կոտորում շատերին, իսկ մի քանի ժամ անց սկսւում է թուրքական «չնախատեսուած» եւ «անակնկալ» յարձակումը[255], որին հետեւում է հայկական նահանջը՝ առանց լուրջ դիմադրութեան: Ամենից շուտ փախչում է գնդապետ Միրիմանեանը[256]... Ոչ ոք պատասխանատուութեան չի կանչւում այս այլանդակ վարքի համար...

[253] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 61:
[254] Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», էջ 101:
[255] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 83:
[256] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 350: Տե՛ս նաեւ նոյնը, թ. 352: Եւ ասել, թէ Միրիմանեանը քաջ եւ խիստ հրամանատարի համբաւ է ունեցել... (Գարեգին արք. Յովսէփեանց, «Կեանքիս ամենադժբախտ օրը եւ երջանկութեանս րոպէն». տե՛ս «Ոգուն չապաւինելու արդիւնքը», էջ 38):

Անպատասխանատուութիւնը համատարած է եղել նաեւ պետական ողջ համակարգում[257]:

Հետեւաբար լիովին իրաւացի է Կարսի երբեմնի նահանգապետը, երբ հաստատում է, որ «Կարսը ընկաւ ոչ պարտուած, նա զոհ դարձաւ մեր ոճրագործ անհոգութեան»[258]:

Բ. 2. 4. Դասալքութիւնը

Սա որեւէ բանակի ամենամահացու հիւանդութիւններից է, որեւէ հասարակութեան «ներքին թշնամին»[259], որի դէմ պէտք է պայքարել ամենայն խստութեամբ՝ ռազմական ատեանի վճռով բոլոր դասալիքներին դատապարտելով մահապատժի: Դրան հակառակ՝ դասալիքներն արժանանում էին իրենց հարազատների հոգածութեանը, նրանց միջոցով ձեւեր գտնում ծլկելու ռազմաճակատից, իսկ ճարպիկները եւ «ուժեղների» տղերքը ճողոպրում էին Թիֆլիս[260]: Ստ. Ղորղանեանը իրաւացի է, երբ դասալքութեան պատճառները դիտարկում է «կառավարչական ամբողջ սիստեմի» համատեքստում[261]: Այդ պատճառների մէջ առաջնայիններից էր կողոպտելու մոլուցքը (այս մասին՝ յետագայ շարադրանքում): Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանեանն իր յուշերում գրում է, որ ամեն տեղից, նոյնիսկ Օլթիի ուղղութեամբ շարժած զօրամիաւորումների հետ կապ չունեցող ամբողջ գնդեր դասալիք էին դառնում՝ Օլթի գնալու՝ թալանին մասնակցելու համար[262]:

Գործող բանակում դասալքութիւնը գրեթէ անշրջելի դարձաւ հոկտեմբերի 14-ի հակայարձակման անյաջողութիւնից յետոյ: Եւ ի՞նչ. փախչելիս «շատեր կլքէին ոչ միայն հրացանները, այլեւ փախուստը հեշտացնելու համար կհանէին նոյնիսկ ամերիկեան կօշիկները»[263]: Դասալքութիւնը կանխելու եւ հաւանական դասալիքներին վախեցնելու համար Կարսի հրապարակներից մէկում կախաղան է դրւում: Սակայն դա էլ չի ազդում, քանի որ գեներալ Փիրումեանը ռազմական ատեանի նախագահ է նշանակում իր փեսայ, փոխգնդապետ Միրզոեւին, որը 9-10 ամիս առաջ արատաւորուել էր ֆինանսական զեղծարարութեան համար. իւրացրել էր իր գնդի զինուորներին յատկացուած սննդամթերքի մի մասը: «Այդ դատարան չէր, ի հարկէ, այդ մի նախատինք էր, մի ծաղր իրաւակարգի, որ... բնորոշում էր բարքերը եւ մեր ժամանակը...»,- դառնութեամբ արձանագրում է Կարսի երբեմնի նահանգապետն իր յուշերում[264]:

Դասալքութիւնն աներեւակայելի չափերի հասաւ մանաւանդ Կարսի անկման օրից սկսեալ: «Զօրքի բարոյական կորովը բաւականին ընկած է. զօրավարներից սկսած մինչեւ հասարակ զինուորը ոչ միայն դիմադրելու, առաջխաղալու յոյս չունեն, այլեւ հաւատացած են, որ այլեւս ամեն բան վերջացել է,- գրում է ականատես վկան հոկտեմբերի 31-ին,- Բաբելոնեան խառնակութիւն էր տիրում»[265]: Հազարաւոր դասալիքներին ՀՀ իշխանութիւնները չեն պատժում: Ի տես այս խայտառակ իրավիճակի՝ ափերից դուրս ելած Սեպուհն անձամբ գնդակահարում է երկու դասալիքի, որոնցից մէկը բախտի քմահաճոյքով ողջ է մնում, քանի որ ատրճանակից փամփուշտ դուրս չի գալիս[266]:

Դասալքութիւնը համակել էր նաեւ քաղաքացիական իշխանութիւններին: Իր յուշերում Շիրակի նահանգապետ Կարօ Սասու-

---

[257] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 12, թ. 77:

[258] Նոյնը, գ. 7, մաս 3, թ. 421:

[259] Գարեգին արք. Յովսէփեանցի արտայայտութիւնն է. տե՛ս նրա «Մեր թշնամիները» («Էջմիածին» շաբաթաթերթ, 4 հոկտեմբերի 1920, թիւ 12, էջ 181-183) եւ Ալեքսանդրապոլում գրուած «Ներքին թշնամին» յօդուածները (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 93, թթ. 20-21). տե՛ս «Ոգուն չապաւինելու արդիւնքը», էջ 75-80: Վերջինիս մէջ հեղինակը գրում է, թէ «մեր աչքում տաճիկն աւելի բարձր է իբրեւ թշնամի, քան այդպիսի ներքին թշնամին՝ դասալիքը» (նոյնը, էջ 78):

[260] Այստեղ արժէ նշել, որ ՀՀ այսօրուայ պաշտպանութեան նախարարի օգնական, պետական լեզուին անգիտակ գեներալ-մայոր Հայկ Քոթանջեանի երկու որդիները ՀՀ բանակում «ծառայել» են փափուկ պայմաններում, գտնւում են ՀՀ սահմաններից դուրս՝ օտարների ծառայութեան մէջ, իսկ նրանց գեներալ հայրն արժանացել է ՀՀ ազգային անվտանգութեան հայեցակարգի հեղինակային խումբը ղեկավարելու պատուին: Նման բացասական յատկանիշներով անձի մասնակցութեամբ ստեղծուած փաստաթուղթը վստահութիւն կարո՞ղ է ներշնչել հայութեանը...

[261] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 167:

---

[262] Նոյնը, թթ. 265-266:

[263] Նոյնը, մաս 3, թ. 376:

[264] Նոյնը, թթ. 375-380:

[265] Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», էջ 109:

[266] Նոյնը, էջ 110:

նին, առանց ամօթ զգալու, արդարացնում է նման վարքագիծը[267]: Նա եւ Ալեքսանդրապոլի քաղաքապետ Պարոյր Լեւոնեանը «թիւրքերի դեռ Ախուրեան չհասած եւ առանց կառավարութեան թոյլտուութեան լքել են իրենց դիրքերը եւ հեռացել»[268]: Այդուհանդերձ «արտակարգ դատարանը, իւր վերջին նիստում քննելով Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Պարոյր Լեւոնեանի ու վարչութեան անդամների պաշտօնալքման գործը[,] գտել է նրանց արդար»[269]:

Պ. Լեւոնեանի, Կ. Սասունու եւ Ալեքսանդրապոլի դասալիքների «արդարացումը» եզակի դէպքեր չէին: Դասալիքները ոչ միայն չէին պատժւում, այլեւ յաճախ նոր պաշտօնների էին նշանակւում[270]՝ էլ աւելի ապականելով ու անբարոյականացնելով հասարակական ընդհանուր մթնոլորտը:

Բ. 2. 5. Զօրքի բարոյալքումը անհարկի նահանջներով

Պատերազմին անպատրաստ լինելու հետեւանքներից մէկն էլ անիմաստ եւ ռազմական անհրաժեշտութիւնից չբխող շարունակուող նահանջն էր, որը տեւեց մինչեւ սեպտեմբերի վերջը. կանգառը Կարսի մատոյցներում էր: Այս ժամանակահատուածում թուրքական զօրքի հետ լուրջ ընդհարումներ տեղի չունեցան: Սակայն այդ նահանջներն էլ աւելի բարոյալքեցին զօրքը:

Բ. 2. 6. Հայկական եւ թուրքական էթնոհոգեբանական եւ ռազմահոգեբանական առանձնայատկութիւնների անտեսումը

Սա ռազմարուեստի կարեւորագոյն գործօններից է, որը հայկական կողմը հիմնովին անտեսել է հայ-թուրքական պատերազմում: Ցարական բանակին սովոր ռուս եւ ռուսախօս բարձրաստիճան հրամանատարները հայոց բանակի զինուորին վերաբերուել են իբրեւ ռուսների, մինչդեռ, պայմանաւորուած ազգային յատկանիշներով, հայ եւ ռուս զինուորներն ունեն որոշակի տարբերութիւններ: Ընդհանուր առմամբ հայ զինուորը յարձակման ժամանակ համարձակ է եւ թշնամու ոյժն արհամարհող[271]: Իր կարգին՝ թուրք զինուորը աւելի չարքաշ է մարտական գործողութիւնների ժամանակ, քան հայը: Մէկ այլ յատկանիշ (որը նկատի է ունեցել գեներալ Սիլիկեանը, բայց դրա հետ հաշուի չեն նստել). եթէ հայ զինուորին, մարտական գործողութիւնների ժամանակ ստիպում են սպասել (մանաւանդ անհարկի կամ չտրամաբանուած), նա «շուտով կորովազուրկ» է լինում[272]:

Գ. Կարսի անկման բարոյահոգեբանական պատճառները

Այս բաժնում բերուող պատճառներն ու կատարուող դատողութիւնները ճիշտ են ոչ միայն ՀՀ բանակի, այլեւ ՀՀ պետական վարչամեքենայի եւ պետութեան հայազգի հասարակութեան համար[273]: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Արդարեւ, որեւէ երկրի բանակ այդ պետութեան համակարգի անբաժան եւ կարեւոր մասն է եւ արտացոլում է այդ պետութեան ու նրա հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող ամենատարբեր յարաբերութիւնները, մասնաւորաբար բարոյական եւ հոգեբանական ոլորտներում:

---

[267] Ներքին գործերի նախարար Ռուբէն Տէր-Մինասեանը հեռագրով պահանջել էր, «որ թուրքերը քաղաքը գրաւելու պարագային, իրենց պաշտօնի գլուխը պէտք է մնան քաղաքագլուխը, վարչութեան անդամները, շրջանային ինքնավարութեան նախագահը եւ վարչութեան անդամները. միայն նահանգապետը արտօնուած էր հեռանալ քաղաքէն»: Այս հեռագիրը քննարկւում է Ալեքսանդրապոլում, նոյեմբերի 1-ի երեկոյեան, «եւ այդ տեղ գտնուած կառավարութեան անդամներն ու գործիչները գրեթէ միաձայնութեամբ որոշեցին, որ վեր[ը] յիշուած պատասխանատու պաշտօնեաները իրաւունք ունին հեռանալու, նկատի ունենալով թրքական բարբարոսութիւնները» (ՀԹՊ, 1926, թիւ 8, էջ 93): Սա եւս ապացոյց է այն բանի, թէ ոչ միայն բանակում, այլեւ քաղաքացիական վարչամեքենայում կարգապահութիւնը նուազագոյնից ցածր էր:

[268] «Ժողովուրդ», թիւ 182, 1920 թ., 9 նոյեմբերի, էջ 2, «Քրոնիկոն» սիւնակը:

[269] «Ժողովուրդ», թիւ 192, 1920 թ., 24 նոյեմբերի, «Քրոնիկոն» սիւնակը, ենթավերնագիր՝ «Պարոյր Լեւոնեանի արդարացումը»:

[270] Օրինակ՝ Կարսի անկումից հաշուած րոպէներ առաջ քաղաքից փախած նահանգապետ Ստ. Ղորղանեանը նոյեմբերի սկզբին նշանակուեց ներքին գործերի նախարարի օգնական, իսկ երկրորդ կէսին՝ Կարաբէքիրի հետ հաշտութեան բանակցութիւնների համար Ալեքսանդրապոլ մեկնած ՀՀ պատուիրակութեան անդամ:

[271] Այս եզրակացութեանը յանգել ենք պատմութեան ընթացքում հայ զինուորի մղած մարտերի մեր դիտարկումներից:

[272] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 6, էջ 83:

[273] Տարբեր ժամանակահատուածներում ՀՀ ազգաբնակչութեան մինչեւ երկու երրորդը եղել է հայազգի, իսկ օտարազգիների մէջ մեծ տոկոս են կազմել ռուսները, թուրքերը, ադրբեջանցիները, քրդերն ու եզդիները, Կարսի նահանգում՝ նաեւ յոյները:

Առանձնապես չենք անդրադառնայ Հայկական բանակում եւ ընդհանուր առմամբ Հայաստանի առաջին Հանրապետութիւնում բոլշեւիկեան քարոզչութեան աւերիչ ազդեցութեանը: Այս մասին շատ է գրուել մեր պատմագրութեան մէջ՝ յաճախ չափազանցելով այս ազդակի իսկական ներգործութեան տարողութիւնը:

Հասարակութեան կառուցուածքը նման է մարդու օրգանիզմին: Մարդու վրայ ամեն ակնթարթ միլիոնաւոր վնասակար միկրոօրգանիզմներ են յարձակւում: Եթէ մարդու դիմադրողականութիւնը հզօր է, նա անվնաս է դուրս գալիս պայքարից, մինչդեռ թուլութեան պարագային ոչ վտանգաւոր միկրոօրգանիզմներն իսկ կարող են անգործութեան, հաշմանդամութեան եւ նոյնիսկ մահուան մատնել մարդուն: Իսկ հասարակութեան դիմադրականութեան հզօրութեան հիմքը ոգեղէնութիւնն ու բարոյականութիւնն են:

Մեր կարծիքով՝ բոլշեւիկեան քարոզչութիւնը (իր հիմնական երկու ազգակործան բաղադրիչներով՝ հայոց միակ փրկութիւնը Խորհրդային Ռուսաստանին կցուելու եւ թուրքերին ու ադրբեջանցիներին «եղբայր» ճանաչելու դրոյթներով) չէր կարող յաղթել հայկական հասարակութեանը, եթէ նրա մարմինն ունենար մեծ դիմադրողականութիւն ու վարակուած չլինէր բարոյական եւ հոգեբանական բազմաթիւ ախտերով, որոնցից կարեւորագոյնները ներկայացնում ենք ստորեւ:

Գ. 1. Հայերի՝ կռուելու եւ յաղթելու կամքի բացակայութիւնը եւ թշնամու՝ այդ յատկանիշների գերազանցութիւնը

Այս յոյժ կարեւոր գործօնը նշում են բոլոր յուշագրողներն ու փաստաթղթերի հեղինակները՝ առանց բացառութեան, թեեւ իւրաքանչիւրը դա կատարում է տարբեր հնչողութեամբ: Ոչ միայն ՀՀ բանակը, այլեւ հայութիւնն ընդհանրապէս «կռուիլ չուզելու եւ չտոկալու հիւանդութեամբ մը վարակուած» էր[274], մինչդեռ «բարոյական ոյժը կամ կորովը գլխաւորագոյն զէնքն է զօրքին, կռուի դաշտին վրայ յաղթական ըլլալու համար»[275]: «Հայ զօրքը վտանգին սէրը չէր ճաշակած»[276], «Հայ ղեկավարները Սպարտայի վարդապետութիւնը լսեր էին, առանց, սակայն, անոր հոգեբանութեանը թափանցելու»[277]: Հայ զինուորը չէր յաղթել մահուան վախը: Գերագոյն զօրահրամանատար գեներալ Նազարբէգեանը «լաւատեսներէն չէր Հայաստանի ապագայի մասին»[278]: Սիլիկեանի շտաբի պետ, գնդապետ Վեքիլեանը խոստովանում էր, թէ «հայ զինուորականութիւնը հաւատք չունէր թուրքերը յաղթելու»[279]: Ինչպէ՞ս ունենար, եթէ տեւաբար ալան-թալանով վարակուած լինելով, «նա (ՀՀ բանակը - Գ. Ե.) ինքն էլ կորցրել էր իր հաւատը դէպի իր կարողութիւնը»[280]: Իսկ Հարամ Վարդանի ամրութիւնների պաշտպանութեան հրամանատար գնդապետ Փերվերդիեւն իր զօրամասերին օրերով բացատրում էր, թէ «ի՞նչ ճանապարհներով պէտք է հեռանալ, փախչել, երբ թշնամին գալու լինի...»: Կարսի նահանգապետն այդ մասին տեղեկացնում է Փիրումեանին, որը քննութիւն կատարելով պարզում է, թէ «Փերվերդիեւ արբած էր, նա յայտնի արբեցող է, եւ ես նորան մի երկու օրով պատուիրեցի բանտարկել...»[281]:

Կռուելու կամքի բացակայութեան առումով ուշագրաւ է մի թուրք գերի վաշտապետի խոստովանութիւնը Սեպուհին, թէ թուրքական հրամանատարութեան՝ իր յաղթանակի նկատմամբ հաւատքի հիմքերից էր այն, որ «ձեր զօրքը ո՛չ թէ չէր կրնար դիմանալ մեզ, այլ պիտի չկռուէր մեր դէմ»[282]: Այսինքն՝ թուրքերը հայ զինուորի մարտական կարողութիւնները չէին թերագնահատում, սակայն լաւատեղեակ էին երկրում ու յատկապէս բանակում տիրող բարոյահոգեբանական վիճակին, եւ պահը յարմար էին համարում ծնկի բերելու հայութեանը: Կարաբէքիրը իր յուշերում շատ է գրում այն մասին, թէ չափազանց դժուարութեամբ կարողացաւ համոզել միլլի շարժման ղեկավարութեանը (որը կենաց-մահու կռիւ էր մղում Փոքր Ասիայի ափ ելած ու դէպի Անատոլիայի խորքերն առաջացող յունական բանակի դէմ եւ անյետաձգելի կարիքն ունէր Կարաբէքիրի տրամադրութեան տակ գտնուող զինոյժին եւ ռազմամթերքին)՝ ՀՀ-ի դէմ պատերազմն սկսելու ճիշտ պահի հարցում: Մարտական ոգի կոչուող բարոյահոգեբանական հզօր զէնքը նա հիանալիօրէն գործածեց: Կարսի անկման նախօրէին՝ իսլամական

---

[274] ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 29 հոկտեմբերի, էջ 2:
[275] Նոյնը, 1 նոյեմբերի, էջ 2:
[276] Նոյնը, 8 նոյեմբերի, էջ 1:
[277] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 90:

[278] Նոյնը, էջ 380:
[279] Նոյնը, էջ 33:
[280] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 306:
[281] Նոյնը, մաս 3, թ. 370: ՀՀ բարձրաստիճան սպաների զգալի տոկոսը նաեւ հարբեցողութեամբ էր աչքի ընկնում. այս սովորոյթը «յիշատակ» էր ցարական բանակից:
[282] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 291:

ուրբաթին, նա դիմել է կիսամերկ ու թերսնուած իր զօրքին[283] եւ, ցոյց տալով Կարսի վրայ իշխող Կարադաղի ամրութիւնները, խոստացել քաղաքի գրաւման դէպքում նրանց թողնել քաղաքի հայ բնակչութեան սնունդն ու հանդերձանքը:

«Հոկտեմբերի առաջին օրերին» Կարս ուղեւորուած Գարեգին եպս. Յովսէփեանցը[284], գիշերով հասնելով քաղաքի երկաթուղու կայարանը, այնտեղ ծանօթանում է «ժողովրդական կարծիքների եւ ճնշուած տրամադրութեան հետ: Երկմտութեան եւ մասամբ յուսալքութեան ոգին փռել էր իւր թեւերը ժողովրդի բացասական հոգեբանութեան վրայ: Ոմանք չէին քաշւում ասելու, թէ այս պատերազմը պիտի վերջանայ մեր պարտութեամբ»[285]: Նոյն յուշագրողը քիչ անդին դառնութեամբ արձանագրում է. «Ազգերի պատմութեան մէջ դժուար է գտնել այնպիսի խայտառակ պարտութիւն, ինչպէս մերն էր այդ օրերին: Միայն թաթարների արշաւանքների ժամանակ պատահել են այսպիսի անհասկանալի երեւոյթներ, ընդդիմութեան կատարեալ բացակայութիւն թշնամու դէմ»[286]: Անկման օրը Կարսում գերի ընկած նախարար Արտաշէս Բաբալեանն էլ նոյնն է վկայում. «Դիմադրութիւն չեղաւ. վիրաւորներ եւ սպանուածներ (հայ - Գ. Ե.) զօրքից չկային: Տաճիկներից վիրաւորուած էին հինգ ասկեար միայն»[287]: Մինչեւ հոկտեմբերի 30-ի ուշ երեկոն թուրքական մի գումարտակ եւ քուրդ ձիաւորներն են գրաւուած պահել քաղաքը[288]: Ժողովրդի հոգեկան վիճակը յայտարարելով «անկայուն»՝ Ս. Վրացեանը յայտնում է, որ նա «իրեն սպառնացող

[283] Բոլոր յուշագրողները հաստատում են Կարս մտած թուրք ասկեարների եւ քուրդ բաշիբոզուկների այս վիճակը: Նրանց առաջին գործն էր, կոտորածն սկսելուց առաջ, մերկացնել հայերին եւ նրանց հագուստը հագնել:

[284] Գարեգին արք. Յովսէփեանց, «Կեանքիս ամենադժբախտ օրը եւ երջանկութեանս րոպէն», «Ոգուն չապաւինելու արդիւնքը», էջ 27: Մեր հաշւումներով՝ արքեպիսկոպոսը քաղաք պէտք է հասած լինի հոկտեմբերի 10-ի՝ լոյս 11-ի գիշերը (նոյնը, էջ 18):

[285] Նոյնը, էջ 28: Ժողովրդի եւ բանակի պարտուողական հոգեբանութեամբ վարակուած լինելու մասին տե՛ս նաեւ նոյնը, էջ 37-39: ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 5, էջ 83:

[286] Գարեգին արք. Յովսէփեանց, «Կեանքիս ամենադժբախտ օրը եւ երջանկութեանս րոպէն», «Ոգուն չապաւինելու արդիւնքը», էջ 41:

[287] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 62:

[288] Նոյն տեղում:

ահաւոր վտանգի դիմաց անկարող եղաւ բաւարար կամք եւ վճռականութիւն ցոյց տալ»[289]: Կռուելու կամքի հարցում միակ բացառութիւնը Սուրմալուի երկրորդական նշանակութեան ճակատն էր, որի հրամանատարն էր ժողովրդի ու բանակի սիրած առաջնորդը՝ Դրօն: Այստեղ զօրամիաւորումները հերոսական դիմադրութիւն ցոյց տալիս թուաքանակով գերազանցող թշնամուն: Այս ճակատում «կամաւոր կռուողները սրբազան պատերազմի մը շունչովը տոգորուած էին»[290]: Հաշուի առնելով այս հանգամանքը՝ սկսել էին զրոյցներ շրջել Դրոյին գլխաւոր հրամանատար կամ գոնէ Կարսի ճակատի հրամանատար նշանակելու մասին[291]:

Տեղին է նորից մէջբերել Հայ Գնդունու դիպուկ հաստատումը. «Իրենց կոչումին բարձրութիւնը չգիտցող մեր մտաւորականներն ու գլուխները՝ Հայկական բանակին ռազմական դիրքերու վրայ կրած պարտութենէն առաջ, այո՛, սաղմնաւորեր եւ պատրաստեր էին Կարսի անկումն ու գրաւումը: Ուրիշ խօսքով, **Կարսը, հայկ. թիկունքին մէջ հոկտ. 30-էն աւելի կանուխ ինկած էր անարժան եւ դաւաճան ղեկավարներուն ձեռքով**»[292].

Գ. 2. Անառողջ մթնոլորտը զինուորական բարձրաստիճան հրամանատարների եւ պաշտպանութեան նախարարութեան յարաբերութիւններում

Վերեւում արդէն գրել ենք Սեպուհ-զօրահրամանատարներ հակամարտութեան մասին, որի ընդամէնը մէկ օրինակն է Սեպուհի բրիգադի ոյժերի կոտորակումը պատերազմի սկզբնական շրջանում: Սեպուհի «հետ էին հայրենասէր սպայութեան եւ զօրքին սիրտն ու հոգին»[293], մինչդեռ ուսադիրներ կրող գեներալների ու գնդապետների համար նա «խորթ զաւակ» էր[294], «աչքի փուշ»[295]. վերջիններս նրան, Դրոյին, Անդրանիկին, Սմբատին եւ միւս հայդուկներին արհամարհանքով «խմբապետ» էին կոչում, «ռուսերէն

[289] Սիմոն Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Երեւան, 1993, էջ 521:

[290] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 6, էջ 97: Ոգու գործօնում առաջնորդի դերի մասին տե՛ս քիչ անդին:

[291] Նոյն տեղում:

[292] ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 10 նոյեմբերի, էջ 2. ընդգծումն իմն է - Գ. Ե.:

[293] Նոյնը, 5 նոյեմբերի, էջ 2:

[294] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 66:

[295] Նոյնը, գ. 6, թ. 45:

կտրատելով» նրանց անուանում «Սեպուհ-Մեպուհ», «Սմբատ-Սըմբատ»[296], եւ որոնց գոյութիւնը, իրենց համոզմամբ, «անհամապատասխան [էր] արդիական պետութեան մը կենսական շահերուն եւ պահանջներուն, զայն կհամարէր տեսակ մը դիտմամբ ստեղծուած հակադիր ոյժ զինուորականութեանը»[297]: «Բարձր զինուորականութիւնը, զօր. Նազարբէգեանի գլխաւորութեամբ, չէր տաներ Սեպուհի եւ Դրոյի <...> նման ոչ կանոնաւոր եւ ոչ ուսեալ զինուորականները»[298], թշնամական վերաբերմունք ունէր «դէպի նախկին յեղափոխական հերոսներն ու ռազմիկները»[299], չորրորդ բրիգադը համարում էր «աւազակախումբ»[300]: Սեպուհը, իր կարգին, չէր վստահում զօրահրամանատարներին[301]: Գեներալներն ու գնդապետներն անընդհատ դաւեր էին նիւթում Սեպուհի դէմ՝ աշխատելով որքան հնարաւոր է նրան հեռու պահել ռազմական գործողութիւնների բեմից: Փիրումեան-Սեպուհ տարաձայնութիւնը «մէկ կողմէ՝ բնական զարգացումն էր» Փիրումեան-նահանգապետ Ղորղանեան հակամարտութեան, «եւ միւս կողմէ՝ անուրանալի փաստն այն անհամերաշխութեանը, որ սկիզբէն ի վեր գոյութիւն ունէր մեր կամաւոր ռազմիկներուն եւ սպայութեանը միջեւ»[302]: Սեպուհի նկատմամբ այս անյարգալից մօտեցումը բարոյազրկում էր այն ժողովրդին, որը Սեպուհին ազգային հերոս էր համարում:

Թալանի բաժանման հարցում եւ այլ խնդիրներում անհամաձայնութիւնների պատճառով գեներալներ Փիրումեանի եւ Յովսէփեանի յարաբերութիւնները լաւ չէին[303]: Վերջինս «աններելի չափով» ատում էր եւ դաւեր էր լարում իր անմիջական ենթականերից՝ չորրորդ գնդի հրամանատար գնդապետ Միրիմանեանի հետ[304], ինչպէս նաեւ կռուում էր գնդապետ Յարութիւնեանի հետ[305]: Վերջինս, որ ազգային ու պետական մտածողութեան եւ զինուորական պարտաճանաչութեան տարրեր ունէր, առաջին գնդի հրամանատարն էր. գեներալները նրա նկատմամբ տհաճ զգացումներ էին տածում եւ «նորան միշտ Կարսում էին պահում»[306]: Փիրումեանին Կարսի բերդապետ են նշանակում, երբ այդ օրերին զօրաց նախարարի օգնական, գեներալ Սիլիկեանը բացակայում էր Երեւանից: Վերադառնալով մայրաքաղաք՝ նա «շատ սուր եւ շատ անախորժ բացատրութիւն» է տալիս զօրաց նախարար, գեներալ Արարատեանին եւ սպարապետ Նազարբէգեանին՝ բողոքելով բերդապետի բարձր կոչմանը չհամապատասխանող Փիրումեանի նշանակման դէմ՝ դա համարելով «ցաւալի մի թիւրիմացութիւն»[307]: Սիլիկեանը կարծում էր, որ Փիրումեանը մի գումարտակի կամ էլ, «ամենաշատը, մի գնդի հրամանատար կարող է լինել եւ ոչ երբեք աւելի»[308]: Որոշում է չեղեալ յայտարարել Փիրումեանի բերդապետ

---

[296] Նոյնը, գ. 7, մաս 3, թ. 386: Բացի զինուորական ակադեմիական կրթութիւն ունենալու կամ չունենալու հանգամանքից՝ այս արհամարհանքն ունի նաեւ հոգեբանական բացատրութիւն: Այս հայդուկները ազգային-ազատագրական պայքարի ֆիդայական շրջանում դարձել էին ազգային խորհրդանիշ, իսկ ապազգային հրամանատարները, որ հոգեբանօրէն չէին նոյնացել հայ ազգին, աւելին՝ ժխտում էին կամ, առնուազն, արհամարհում որպէս հայ ազգի խորհրդանիշ ընկալուող ամեն բան (լեզու, պետութիւն եւ պետական խորհրդանիշներ [հիմներգ, զինանշան, եւ այլն], անձեր եւ այլն): Ազգային խորհրդանիշները անձնական եւ ազգային «հոգեբանական խտացումներ են» (Ալբերտ Նալչաջեան, «Էթնիկական հոգեբանութիւն», էջ 173), իսկ զօրահրամանատարների մեծ մասի հոգեբանական խտացումը ռուսական էր:

[297] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 379: Սեպուհ-բարձրաստիճան զինուորականներ հակամարտութեան մասին յաւելեալ տե՛ս ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 70, մաս 3, թ. 338: ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 5, էջ 82: Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», էջ 96:

[298] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 5, էջ 82:

[299] Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», էջ 96:

[300] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 70:

[301] Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», էջ 94:

[302] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 149:

[303] Սիմոն Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Երեւան, 1993, էջ 508:

[304] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 90: Յատկանշական է գլխաւոր հրամանատար Նազարբէգեանի խոստովանութիւնը, որ գեներալներ Յովսէփեանն ու Փիրումեանը միջնորդում էին Միրիմանեանին՝ «այդ երկչոտ եւ անպէտք սպային... գեներալի աստիճան տալու: Երբ յանդիմանեցի դորա համար գեներալ Յովսէփեանին, վերջինս խոստովանուեց, որ իրանք ուզում էին գէթ այդ միջոցով ազատուել այդ գնդապետից...» (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 353):

[305] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 22:

[306] Նոյնը, գ. 7, մաս 2, թ. 267:

[307] Նոյնը, մաս 3, թթ. 356, 392: Նոյնը, գ. 12, թ. 58:

[308] ՀՀ բանակին նախորդած Հայկական կորպուսում հրամանատար, գեներալ-մայոր Սիլիկեանի տեղակալն է եղել գնդապետ Դանիէլ-բէգ Փիրումեանը:

նշանակումը: Սակայն վերջինս «ուխտագնացութիւն է կատարում Երեւան, դէպի Աստղերի պալատը[309], «ընկերական շրջանները» եւ դրութիւնը դիւթիչ ձեւով փոխւում է», ու նա մնում է իր նոր պաշտօնում: Սիլիկեանը շատ բուռն կերպով բողոքում է եւ նորից ընդհարւում Նազարբէգեանի հետ[310]: ՀՀ անկումից յետոյ Նազարբէգեանը Թիֆլիսում խոստովանել է Ստեփան Ղորղանեանին, թէ զօրաց նախարար Ռուբէն Տէր-Մինասեանը «շատ անգամ անում էր իր կարգադրութիւնները առանց սպարապետի գիտութեան, եւ ես շատ անգամ բոլորից ուշ էի իմանում զինուորական նորութիւնները»: Օրինակ՝ Նազարբէգեանը Փիրումեանի գեներալ-լեյտենանտութեան աստիճան ստանալու մասին իմացել է «post factum»[311]:

Իր հերթին՝ գեներալ Փիրումեանը, նրա շտաբի պետ, գնդապետ Տէր-Առաքելեանը եւ շտաբի աւագ սպայ, փոխգնդապետ Աւշարովը «շարունակ կռւում էին իրար հետ, հայհոյում իրար...»[312]: Փիրումեանը եւ Կարսի ամրութիւնների հրետանու պետ գնդապետ Բաբաջանովն «իրարու տակ փորելու եւ իրարու տապալելու» հարցում մրցում էին[313]: Գեներալներն ու գնդապետները աւարի բաժանման հարցերում (այս մասին՝ յետագայ շարադրանքում) անընդհատ տարակարծութիւններ ունենալով, միշտ իրար էին ամբաստանում եւ իրար հայհոյում[314]: Հոկտեմբերի 28-ին գեներալ Յովսէփեանին փոխարինած գեներալ Ղազարեանի գալուստը Փիրումեանը տհաճութեամբ է ընդունում[315]: Ղազարեանը երբ մեկնում

[309] Ստեփան Ղորղանեանն իր յուշագրութեան մէջ յաճախ է յիշատակում Երեւանում գտնուող «Աստղերի պալատը», «այդ աներեւոյթ ոյժը», որ «անջատ կառավարութիւնից եւ պարլամենտից, տնօրինում էր երկրի բախտը» (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 392-393): Մեր կարծիքով՝ նա նկատի ունի մասոնական կազմակերպութիւնը: Վտարանդիութեան մէջ, Խատիսեանին կտեսնենք մասոնական Մեծ վարպետի՝ 33-րդ աստիճանով, իսկ Վրացեանին՝ 18-րդ աստիճանով:

[310] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 392-393:

[311] Նոյնը, թ. 354:

[312] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 22: Արժէ նորից յիշեցնել, որ Վահան Տէր-Առաքելեանը ժամանակին եղել է Կոմիտաս վարդապետի աշակերտը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանում եւ հաւանաբար հոգեւորական դառնար, եթէ Առաջին համաշխարհային պատերազմը չբռնկուէր:

[313] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 430:

[314] Նոյնը, գ. 6, թթ. 22-24:

[315] Դրա պատճառն այն էր, որ բարձրաստիճան զինուորականութեան կողպուտի մասին նահանգապետի բողոքագրերի իսկութիւնը ստուգելու

է Յովսէփեանի կայանը, այնտեղ ռազմական քարտէզ չի գտնում՝ ապացոյցը իրենց գործի նկատմամբ սպաների համատարած անպատասխանատուութեան (այս մասին գրել ենք ռազմական պատճառների բաժնում): Այս փաստն արձանագրող Ստ. Ղորղանեանը յայտնում է, որ Ղազարեանն «առանց այդ ռազմական քարտէզի, ինքը Նապոլէոն (էլ լինէր - Գ. Ե.)՝ ոչինչ չէր կարող անել»[316]:

«Սպաների եւ զինուորների փոխյարաբերութիւնը շատ մասերում մտերմական չէր»[317]. ինչպէ՞ս լիներ, եթէ «հրամանատար կազմը շահագործում է[ր] մեր շարքային զինուորութիւնը իր անձնական օգուտների համար: Այդ մթնոլորտում հասարակ զինուորը չէր կարող պետական դաստիարակութիւն ստանալ, նա տեսնում էր մեծերի օրինակը եւ իրան էլ, ի հարկէ, չէր մոռանում... Այդ առանցքում խօսք չէր կարող լինել զինուորական կորովի, գաղափարի մասին: Պետականութիւնը, հայրենիքը, ազգային պատուախնդրութիւնը արդէն խորթացած, երանաւոր ուրուականներ էին»[318]: Մի խօսքով՝ ՀՀ բանակում տիրում էին ռուսական բանակից ժառանգուած «դեդովշչինայի» այլանդակ բարքերը[319]:

համար զօրաց նախարար գեներալ Արարատեանը 1919-ի ամառը որպէս քննիչ Կարս էր ուղարկել Ղազարեանին, որը հաստատել էր բողոքների հաւաստիութիւնը (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թթ. 67-68), թէեւ «ոչ ոք այդ թալանի հերոսներից դատի չտրուեց, եւ բոլորը մնացին իրանց տեղերում» (նոյնը, մաս 2, թ. 291):

[316] Նոյնը, գ. 6, թ. 32:

[317] Սիմոն Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Երեւան, 1993, էջ 508:

[318] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թթ. 304-305:

[319] Այսօր եւս այդ բարքերը շարունակում են գոյատեւել ՀՀ բանակում: Այդ այլանդակութիւնը ՀՀ քաղաքական եւ զինուորական ղեկավարութիւնը, ՀՀ գլխաւոր ու ռազմական դատախազութիւնները եւ այլք անուանում են «ոչ կանոնադրական յարաբերութիւններ»...

Այս տեսակէտից ուշագրաւ են հանրային քաղաքականութեան փորձագէտ, պատմական գիտութիւնների թեկնածու Աղասի Թադեւոսեանի դիտարկումները: Ըստ նրա՝ երրորդ հանրապետութիւնում «գողական» գործելաոճը «դարձաւ ներբանակային «կարգուկանոնի» հաստատման ձեւը՝ սպայական կազմի, զինուորական կազմի եւ նշուած երկուսի միջեւ փոխյարաբերութիւնները կարգաւորելիս»: Հեղինակի՝ ՀՀ բնակչութեան, մասնաւորաբար զօրացրուած զինուորականութեան շրջանում անցկացրած հարցախոյզը ցոյց է տուել, որ ՀՀ բանակում «գերակշռողը ոչ թէ կանոնադրական, այլ «գողական» ոճն է, ինչից ազատուելու միակ ելքը, շատերի կարծիքով, «կռուած տղերքից» բանակի սպայական կազմը

Գ. 3. Թշնամանքի հասնող հակամարտությունը Կարսի նահանգի քաղաքացիական եւ ռազմական իշխանությունների միջեւ

Սա եւս նշում են բոլոր յուշագիրները[320]: Մի կողմից՝ Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի եւ միւս կողմից՝ բերդապետ, գեներալ Դանիէլ-բէգ Փիրումեանի, ռազմածակատի կենտրոնական հատուածի հրամանատար գեներալ Արտեմ Յովսէփեանի ու նրանց ենթակայ գնդապետների եւ մաուզերիստների խմբերի միջեւ յարաբերությունները չափազանց լարուած էին: Փաստօրէն նահանգում երկիշխանություն էր: Այս հակամարտությունն ունէր բազմաթիւ պատճառներ, որոնցից գլխաւորներն են ալան-թալանի նկատմամբ գեներալների ու նրանց ենթակաների մեծ ախորժակն ու դրան՝ նահանգապետի խիստ հակառակությունը[321], եւ, երկրորդ, նահանգի մուսուլման (թուրք, քուրդ, կարափափախ եւ այլն) բնակչութեան նկատմամբ զինուորականների եւ նահանգապետի վարած տրամագծօրէն հակառակ քաղաքականությունը: Նահանգապետը վարում էր այլազգիներին, մասնաւորաբար քրդերին սիրաշահելու քաղաքականություն[322], մինչդեռ գեներալները, կողմնակից լինելով այլազգիների նկատմամբ կոշտ քաղաքականութեանը[323], իրականում հետապնդում էին մահմեդականներին կո-

---

զտելն է»՝ բանակը համալրելով սպայական յատուկ պատրաստություն անցած սպաներով (Աղասի Թադեւոսեան, «Սոցիալական վախի երեւոյթը. արմատները եւ ձեւերը Հայաստանում (1991-1998 թթ.)», «Անցումային շրջանի էթնոհոգեբանական փոփոխությունների առանձնայատկությունները Հայաստանում» (յօդուածների ժողովածու), «Ռազմավարական եւ ազգային հետազօտությունների հայկական կենտրոնի» հրատարակություն, Երեւան, հոկտ. 1998, էջ 25):

[320] Տե՛ս, օրինակ, Սիմոն Վրացեան, «Հայաստանի Հանրապետություն», Երեւան, 1993, էջ 508: Գարեգին արք. Յովսէփեանց, «Կեանքիս ամենադժբախտ օրը եւ երջանկութեանս ոոպէն», «Ոգուն չապաւինելու արդիւնքը», էջ 34: Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 59: Ստ. Ղորղանեանի յուշագրությունն ամբողջութեամբ (ՀԱԱ, ֆ. 477):

[321] Տե՛ս, օրինակ, ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 114:

[322] «Հայաստանի ոչ մի շրջանում հայ-մահմեդական յարաբերությունները այնքան լաւ չէին, որքան Կարսում»,- վկայում է Սիմոն Վրացեանը («Հայաստանի Հանրապետություն», Երեւան, 1993, էջ 392): Դրանում իր մեծագոյն ներդրումն է ունեցել նահանգապետ Ստ. Ղորղանեանը:

[323] Ալեքսանդր Խատիսեան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», «Հայրենիք», 1925, թիւ 6, էջ 50-51: Մեր կարծիքով՝ Կարսի անկման եւ առաջին հանրապետության կործանման քաղաքա-

ղոպտելով հարստանալու անառողջ նպատակներ: Փիրումեանը պահանջում էր իրեն նշանակել գեներալ-նահանգապետ եւ իրեն ենթարկել քաղաքացիական վարչությունը, մի բան, որին բացարձակապէս դէմ էր նահանգապետ Ղորղանեանը[324]: Զինուորականների գործողությունների պատճառով նահանգում թագաւորում էին կամայականություններն ու բռնությունները: ՀՀ կառավարությունը փոխանակ Ալեքսանդր Մակեդոնացու յանգոյն լուծելու Կարսի նահանգում իշխանության երկուութեան այս գորդեան հանգոյցը, բաւարարւում էր լսելով երկու կողմերի՝ միմեանց նկատմամբ բողոքները եւ... հարցի վճռումը մատնում բարձիթողի, հակառակ նրա, որ 1920 թ. մայիսեան դէպքերից յետոյ Կարս մեկնած Նիկոլ Աղբալեանի գլխաւորած խորհրդարանական յանձնաժողովը, ի տես այդ անբնական յարաբերությունների, կառավարությունից պահանջել էր փոխել խնդիրներ յարուցած բոլոր զօրահրամանատարներին եւ նահանգապետին[325]:

կան պատճառների շարքում երկրորդական դեր չի խաղացել հանրապետության՝ իր ազգային փոքրամասնությունների նկատմամբ յստակ քաղաքականություն չունենալու փաստը: Դրանից օգտուել են ամեն տեսակի պատեհապաշտները: Օրինակ՝ Կարսի գեներալները նահանգի յոյներից կազմել էին կամաւորական խմբեր, որոնք «մասնագիտացել էին» թուրքական եւ քրդական գիւղերի թալանման գործում (տե՛ս, օրինակ, ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 456-458), մի հանգամանք, որն իր բացասական դերն ունեցաւ նահանգում ազգամիջեան յարաբերությունները սրելու հարցում: Այս խնդրին աւելի մանրամասն անդրադարձել ենք մեր «Հայ-քրդական յարաբերությունները Կարսի նահանգում 1919-1920 թուականներին» ուսումնասիրության մէջ («Մերձաւոր Արեւելք. պատմություն, քաղաքականություն, մշակոյթ (յօդուածների ժողովածու)», ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտ, Երեւան, 2002, էջ 158-169): Այստեղ արժէ նշել, որ անկախության հռչակումից աւելի քան 15 տարի անց ՀՀ-ն այսօր եւս չունի օրէնք կամ յստակ հայեցակարգ իր ոչ հայազգի քաղաքացիների նկատմամբ տարուելիք քաղաքականության մասին:

[324] Ալեքսանդր Խատիսեան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», «Հայրենիք», 1925, թիւ 6, էջ 51: Նահանգում 1919 թ. մայիսին՝ հայկական գերիշխանության հաստատումից անմիջապէս յետոյ, շատ կարճ ժամանակահատուած նահանգում հաստատուել է զինուորական իշխանություն, եւ գեներալ Արտեմ Յովսէփեանը նշանակուել է գեներալ-նահանգապետ (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 230): Յովսէփեան-Ղորղանեան հակամարտության պատճառներից մէկն էլ դա էր (նոյն տեղում):

[325] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 197, թթ. 3-4:

Գեներալներ-Կարսի նահանգապետ հակամարտութիւնն ուղեկցւում էր երկկողմանի բանսարկութիւններով, դաւերով եւ նահանգում անիշխանութեան խորացմամբ: Այս հակամարտութեանը մասնակցում էր նահանգի ՀՅԴ կառոյցը, որի անդամների մի մասը նահանգապետի կողմն էր, միւսը՝ զինուորականների. նահանգի ՀՅԴ կենտրոնական կոմիտէի անդամ, քաղաքագլուխ Նորիատեանը պաշտպանում էր զինուորականներին, քանի որ «յենուելով իր կուսակցական կոչման վերայ, մեծ ախորժակ ունէր Կարսի նահանգապետ դառնալու»[326]: Այս կուսակցականներն ու զինուորականները, դուրս գալով իրենց իրաւասութիւններից, խառնւում էին նահանգի եւ, առհասարակ, ՀՀ-ի քաղաքացիական, վարչական, տնտեսական ու կադրային գործերին, ինչի դէմ նահանգապետը անընդհատ բողոքում էր[327]: Այս հակամարտութիւնը, իր ծանր հետեւանքներով, շարունակուեց նոյնիսկ պատերազմական գործողութիւնների ամբողջ ժամանակահատուածում[328] եւ ճակատագրա-

[326] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 180:

[327] Նոյնը, գ. 14, թթ. 1-2: Նոյնը, գ. 7, մաս 3, թթ. 394-396: «Կուսակցական (ՀՅԴ - Գ. Ե.) գերագոյն մարմինը չկարողացաւ պետական դաստիարակութիւն մտցնել իր մեծ կուսակցութեան շարքերը»,- ցաւով արձանագրում է Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանեանը իր յուշերում (նոյնը, գ. 14, թ. 2: Տե՛ս նաեւ նոյնը, գ. 2, թ. 5), չհասկացաւ, որ «հայդուկային սիստեմը տեղ չունի կառավարչական կազմում» (նոյնը, գ. 10, թ. 9): Նա բերում է արտառոց մի փաստ. Արդահանում գնդապետ Մազմանեանը ինքնագլուխ կերպով պատերազմական դրութիւն է հաստատում, եւ միայն նահանգապետի բողոքից յետոյ զօրաց նախարարը բեկանում է գնդապետի այդ հրամանը: Այդուհանդերձ «գնդապետը մնաց իր տեղում եւ շարունակում էր գնդապետի ուսադիրների տակ պարապել իր տնտեսութեամբ, թալանով, առեւտրով, բայց ոչ պետական եւ զինուորական գործով» (նոյնը, գ. 7, մաս 2, թ. 275): Այսքանից յետոյ կարելի՞ է ասել, որ Կարսի անկման նախօրեակին, ինքնասպանութեամբ վերջ տալով իր կեանքին, Մազմանեանը քաւած եղաւ իր բազում մեղքերը... Համակարծիք ենք պատմաբան-հրամանատար Բագրատ Ուլուբաբեանի տեսակէտին. «Դաւաճանութիւնն առհասարակ անհնար է քաւել նոյնիսկ անձնազոհութեամբ» (Բագրատ Ուլուբաբեան, «Արցախեան գոյապայքարը», Երեւան, 1994, էջ 286): Իսկ Մազմանեանը դաւաճանել էր հայ սպայի պատիւը՝ թալանելով ի՛ր իսկ Հայրենիքը՝ նրա ազատագրուած տարածքներին վերաբերուելով իբրեւ թշնամու տարածքի...

[328] Գարեգին արք. Յովսէփեանց, «Կեանքիս ամենադժբախտ օրը եւ երջանկութեանս րոպէն», «Ոգուն չապաւինելու արդիւնքը», էջ 34: Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 59:

կան ու աղիտաբեր եղաւ թէ՛ քաղաքի հայութեան եւ թէ՛ առհասարակ հայ ժողովրդի ու հայկական պետականութեան համար[329]:

Գ. 4. Քաղաքական եւ ռազմական պատկառազդու առաջնորդ-հրամանատար(ներ)ի բացակայութիւնը

Հայ զինուորականութեանը պատկառանք չէր ներշնչում գերագոյն հրամանատար, գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբէգեանի անձը: Նա «նորաստեղծ Հայաստանի պահանջներուն բաւարարութիւն տուող մարդը չէր»[330], նա «աւելի շոյող ֆիկցիա էր, քան թէ ցանկալի իրականութիւն - գեներալ Նազարբէգով թագաւորում էր, բայց ոչ կառավարում»[331]: «Մեզ պակասում էր մի իշխանալից հրամանատար միայն եւ հայ քաջերը պատրաստ կլինէին կրակը նետուելու», եւ այդ զօրահրամանատարի սրի հետեւից «Հայկական բանակն անձնուրաց կերթար»[332]: Ըստ գեներալ Սիլիկեանի՝ Նազարբէգեանն «առհասարակ իր եսը չունէր եւ միայն յարմարւում էր եւ բոլորի հետ համաձայնւում...»[333]:

Այս գործօնի առնչութեամբ Հայ Գնդունին խոր վրդովմունքով գրում է. «Քանի մը տասնեակ վարժապետներ եւ ասոնց մէջ ամենէն աւելի «ճարպիկները», դաւադիրները, սուտ հերոսներն ու կեղծ յեղափոխականները կկարծէին նախարար, վարչապետ, մեծամեծ ժողովներու նախագահներ եղած ըլլալ»: Նրանք չգիտէին եւ, աւելի դատապարտելին, չէին էլ ուզում սովորել «այն բոլոր բաները, որոնք անհրաժեշտ էին, անխուսափելի էին երկիր եւ ժողովուրդ կառավարելու համար»[334]: Չկային «ոտքի կանգնած բազ-

[329] Ալեքսանդր Խատիսեան, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», «Հայրենիք», 1925, թիւ 6, էջ 51: Արարատ Յակոբեան, «Հայաստանի խորհրդարանը եւ քաղաքական կուսակցութիւնները 1918-1920», Երեւան, 2005, էջ 274:

[330] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 381:

[331] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 16, թ. 41:

[332] Նոյնը, գ. 6, թ. 82: Տե՛ս նաեւ նոյնը, գ. 7, մաս 3, թ. 357:

[333] Նոյնը, գ. 7, մաս 3, թ. 393:

[334] ԿԱՊ, «Մարտկոց», 10 նոյեմբեր 1932, էջ 2: Արդեօք նոյնը չէ՞ նաեւ այսօր, երբ Արցախեան ազատամարտին մասնակցութիւն չունեցածներ կամ համեստ ներդրում ունեցածներն արժանանում են գեներալական ուսադիրների, զանազան ու զարմանազան շքանշանների եւ պարգեւատրումների, իսկ նահրիյունանեաններ եւ քաղաքական դաւերի շնորհիւ՝ պատգամաւորական եւ նախարարական աթոռների: Նոյնը տիրում է նաեւ ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ, առհասարակ, կեանքի բոլոր

մութիւնն օգտագործող, կամքերը կռող-կոփող վայրկեանի ղեկավարները»[335], հրապարակում երեւացող զօրահրամանատարները «ոչ մի բարոյական հեղինակութիւն չէին ներկայացնում հայ զինուորի աչքում: <...> Գաղափարական, ազգային նոյնիսկ հեռաւոր սկզբունքների մասին խօսելն անգամ աւելորդ» էր[336]: Պատերազմում եւ խաղաղութեան մէջ յաղթելու համար հայ ժողովուրդը կարիքն ունէր, եւ ունի այսօր եւս, համազգային միասնութեան[337], իսկապէս (եւ ոչ թե խօսքով կամ պաշտօնաձգտող կեղծաւորների շեփորած) գաղափարապաշտ, հայրենասէր, հեռատես եւ պատկառազդու քաղաքական եւ զինուորական առաջնորդների: Ոչ միայն բանակի անձնակազմը, այլեւ հասարակ ժողովուրդը չէր հաւատում իր զօրահրամանատարների կարողութիւններին եւ յարգանք

ոլորտներում. գիտութիւնների թեկնածուն եւ գիտութեան մէջ համեստ ներդրում ունեցածը դառնում է Գիտութիւնների ազգային ակադեմիայի ինստիտուտի տնօրէն, նորաթուխ դոկտորը կամ ազգային պատմագրութիւնն ու ինքն իրեն վարկաբեկած պատմաբանն «ընտրւում» է ակադեմիկոս, Ազգային ժողովի դարպասից ներս սողոսկած դատարկաբան պատգամաւորը՝ քաղաքական գիտութիւնների դոկտոր եւ այլն: Ողբերգութիւնը սակայն հենց այն է, որ սրանք հաւատում են կամ հաւատալ են ձեւացնում, որ իրենք իսկապէս արժանի են այն պաշտօններին եւ կոչումներին, որոնք շնորհուել են ոչ թէ իրենց դրական, այլ բացասական յատկանիշների համար: Այս անբնական երեւոյթը նկատի ունենալով 2006 թ. վերջին օրերին մի հեռուստաելոյթի ժամանակ էթնոհոգեբան, հոգեբանական գիտութիւնների թեկնածու Ալբերտ Նալչաջեանը ՀՀ-ն ախտորոշեց որպէս «կեղծ հեղինակութիւնների երկիր»: Նոյնպիսին է եղել նաեւ Հայաստանի առաջին Հանրապետութիւնը՝ յատկապէս իր կործանման նախորդած ամիսներին:

[335] ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 6, էջ 97:

[336] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 252:

[337] Յատկանշական է, որ մինիստր-նախագահ (վարչապետ) Ալեքսանդր Խատիսեանը յայտարարում էր, թէ «Հայաստանը 40 հազար կամ 60 հազար զօրք ունի եւ կարօտ չէ արեւմտահայութեան կամ արտասահմանի զանգուածային զինուորագրութեան» (ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 10 նոյեմբերի, էջ 2): ՀՀ ղեկավարութեան մեծ մասի նման մտայնութի՞ւնն էր, թէ՞ սփիւռքահայութեան հայրենասիրութեան պակասը, որ սփիւռքը «յուզուած ականատեսը եղաւ մեր զօտեմարտին»,- հարց է տալիս Կարօ Սասունին (ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 11, էջ 112): Նոյնը կրկնուեց Արցախեան ազատամարտի ընթացքում, որին մասնակցած սփիւռքահայերի թիւը կարելի է հաշուել երկու ձեռքի մատների վրայ...

չունէր նրանց նկատմամբ[338]: Ջանազան պատճառներով, յատկապէս ՀՀ ղեկավար դէմքերի անհամապատասխան գործունէութեան հետեւանքով, արեւմտահայ գաղթականութիւնը երկրում իրեն խորթ էր զգում: « «Հայաստանի հանրապետութիւն» խօսքն էլ ընդունելի չէր շատերի համար, եղածը սոսկ «Արարատեան Հանրապետութիւն» էր»: «Այդ «Հանրապետութեան» մէջ դեռ շատ բանից՝ օրէնքներից ու լեզուից սկսած մինչեւ ներքին կարգերը, մինչեւ հանրային կենցաղն ու բարքերը՝ ռուսի հոտ էր բուրում: Արեւմտահայութեան մտքին ու զգացմունքներին խորթ էր այդ, անհարազատ»[339]:

Հայութեանը, մասնաւորաբար Կարսի նահանգի ռազմական ու քաղաքացիական իշխանութիւնների պառակտուածութեանը հակառակ Հայաստանի Հանրապետութեան դէմ արշաւող թուրքական բանակն ունէր քաղաքական եւ զինուորական մէկ ղեկավար՝

[338] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 381: Ժողովրդի մեծ մասը չէր հաւատում նաեւ իր քաղաքական ղեկավարներին:

[339] Սիմոն Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», Երեւան, 1993, էջ 269-270: Այսօր եւս նոյն խայտառակ վիճակն է Հայաստանի երրորդ Հանրապետութիւնում, այն փոքր տարբերութեամբ, որ ռուսերէնի եւ ռուսական բարքերի կողքին հայկական արժէքների դէմ ՀՀ-ում լրջօրէն մրցակցում են անգլերէնն ու եւրո-ամերիկեան բարքերը, եւ շատ անգամ յստակ չէ, թէ ՀՀ-ն հայկակա՞ն, թէ՞ մի այլ բնոյթի պետութիւն է: Բաւարարուենք՝ մէջբերելով ընդամէնը մէկ օրինակ: 1991 թ. սեպտեմբերի 21-ին իր անկախութիւնը հռչակած պետութեան մէջ, որի պետական ՄԻԱԿ լեզուն հայերէնն է, պետական բազմաթիւ հիմնարկներում տիրապետում է ռուսերէնը. նոյն պետութեան սահմանների հատման ժամանակ պետական դրոշմակնիքը ամբողջ 14 տարի եղել է բացառապէս ռուսերէնով, ընդ որում, մինչեւ 1998-ը՝ «Ռոսսիա, Երեւան» խայտառակ բովանդակութեամբ, այնուհետեւ՝ «Արմենիա, Երեւան» նշումներով, եւ միայն 2005 թ. աշնանն են հայոց տառերը յայտնուել այդ դրոշմակնիքի վրայ (այդ տարիներին ՀՀ սահմանը հատել են օրնիբուն ազգային արժէքներից բարբառող «մտաւորականներ» եւ այլազան չափ ու կշռի եւ ոլորտների բիւրաւոր գործիչներ՝ լռելով այդ ամօթալի երեւոյթի հանդէպ...): Եւ ասել, թէ վերջին 9 տարիներին ՀՀ կառավարութիւնը ղեկավարել է ինքն իրեն նժդեհեան եւ ցեղակրօն յայտարարած վարչապետը, պարզապէս հայհոյանք է մեծ հայորդու յիշատակին... Այսօր եւս ամենասարսափելի այլանդակութիւններն ու ապազգային-հակազգային քայլերը կատարւում են հանրապետա-դաշնակցական կեղծ ազգայնական, իրականում՝ ազգայնականութեան գաղափարը հիմնովին վարկաբեկած իշխանութիւնների օրօք, նրանց կողմից կամ, առնուազն, նրանց հովանաւորութեամբ:

38 տարեկան, գերմանական զինուորական ակադեմիական բարձրագոյն կրթութիւն (որը յատկանշւում է կարգապահութեան եւ ռազմական հոգեբանութեան նկատմամբ խստագոյն մօտեցումով) ստացած, Առաջին աշխարհամարտին մեծ փորձառութիւն ձեռք բերած, «ընդունակ եւ լուրջ զօրավար»[340], պատկառազդու մէկ անձ՝ Քեազիմ Կարաբէքիր փաշան, որն իր անձի մէջ միաւորում էր նաեւ այլ կարեւոր որակներ՝ քաղաքագէտն ու դիւանագէտը, ռազմական գործիչն ու թուրքական ազգային գաղափարախօսութեան՝ համաթուրքականութեան գաղափարակիրն ու դրա անձնական պայծառ օրինակը: Նա նաեւ հմուտ հոգեբան էր, եւ իր այս հմտութիւնն ի գործ էր դնում թէ՛ իւրայինների եւ թէ՛, մանաւանդ, հակառակորդի նկատմամբ[341]: Հայոց միջավայրում այդ օրերին նման թուրք ղեկավարին կարող էր հակակշռել միայն Գարեգին Նժդեհը, որոշ վերապահութեամբ՝ նաեւ Սեպուհը: Սակայն Նժդեհը զբաղուած էր Սիւնիքում, իսկ Սեպուհին մեկուսացրել էին ռազմական հրամանատարներն ու նրա նկատմամբ ոչ պակաս նախանձ տածող զօրաց նախարար եւ պետութեան ու ՀՅԴ բիւրոյի փաստական դիկտատոր Ռուբէն Տէր-Մինասեանը:

Առաջնորդի անձնական օրինակը շատ վարակիչ է մասնաւորաբար արտակարգ իրավիճակներում, օրինակ՝ պատերազմի ժամանակ: Մինչ Կարաբէքիր անձնապէս էր առաջնորդում իր զօրքերը, հեռադիտակը ձեռքին հետեւում ռազմական գործողութիւններին եւ տեղում օպերատիւ որոշումներ ընդունում ու հրամաններ արձակում, հայոց բանակի հրամանատարութիւնը նստում էր փափուկ բարձերի վրայ՝ Երեւանում, Ալեքսանդրապոլում կամ Կարսի ձորում տեղակայուած շտաբի շէնքում (որտեղից «երկնքի մի կտոր տեսնելու հնարաւորութիւն ունէր միայն»[342]) եւ ոչ թէ քաղաքին իշխող Կարադաղի ամրութիւններում, որտեղից հեռադիտակով կարելի էր հետեւել գործողութիւններին[343]: Փիրումեանը «շատ քիչ անգամ Կարսէն դուրս եկաւ իրեն յանձնուած շրջանին եւ դիրքերուն ու ամրութիւններուն ծանօթանալու»[344]: Այսքանը բաւարար չէր կարծէք, ճակատագրական օրերին նա աւտովթարի հետեւանքով կոտրել էր ոտքը եւ պառկում էր ձորի շտաբի շէնքում:

[340] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 17, թ. 22:

[341] Դրա վառ ապացոյցներից է Ալեքսանդրապոլի բանակցութիւնների ժամանակ նրա պահուածքը: ՀՅ պատուիրակութեան անդամ, Կարսի երբեմնի նահանգապետ Ստեփան Ղորղանեանին բարոյապէս եւ հոգեպէս ճնշելու համար ցուցադրաբար եւ «վեհանձնօրէն» ժամանակաւորապէս նրան է տրամադրում նահանգապետի՝ աւար ինկած ու Կարսից Ալեքսանդրապոլ բերուած աւտոմեքենան եւ անկողինը, իսկ նրա՝ հրամանատարական սեղանին դրուած էր նահանգապետի գրենական պիտոյքը, վերջին օրը ճաշ է մատուցում հայ պատուիրակներին... նահանգապետի տան սպասքով... (ՀԱԱ, ֆ. 477, գ. 16, թթ.17-19): Հայ բանագնացներին հոգեպէս սպանելու համար Կարաբէքիրն իր ներկայացրած համաձայնագրի նախագիծ-վերջնագրին կցել է մի յուշագիր, որի բովանդակութիւնը վրիպել է հայ պատմագրութեան ուշադրութիւնից: Այնտեղ թուրք հրամանատարը, ի շարս այլ բաների գրել է, թէ հայերը սեփական ոչինչ չունեն. չունեն... սեփական պատմութիւն, մշակոյթ, նոյնիսկ՝ երաժշտութիւն, երգ ու պար, սեփական ճաշատեսակներ. դրանք բոլորը վերցրել են... իրենցից՝ թուրքերից: Նման հանգամանքները նկատի ունեն, երբ ասում են. «Յաղթողներին չեն դատում:

[342] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 68:

[343] Այս մասին տե՛ս, օրինակ, Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 68: ԿԱՊ, «Մարտկոց», 1932 թ., 8 նոյեմբերի, էջ 2: ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 368: Ուշագրաւ է այն փաստը, որ արդէն գերութեան մէջ Կարաբէքիրի շտաբի պետ Խալիլ բէյը, երբ հարցնում է Սիլիկեանի շտաբի պետ Վեքիլովին, «թէ ո՞ր դիրքերից էիք դուք, գեներալ Փիրումովի հետ վերջին օրերը դիտում ռազմաբեմը», նա պատասխանել է՝ «Կարսի ամրութիւնների վերայ»-ից: «Մենք Կարաբէքիր փաշայի հետ այդպես էլ կարծում էինք»,- հեգնել է թուրք սպան (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թ. 368):

[344] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 383: Նոյնը հաստատում է նաեւ Ստ. Ղորղանեանը: Հետեւաբար հիմնազուրկ է պատմաբան Յարութիւն Թուրշեանի կարծիքը, որ Փիրումեանը «այն զինուորականներից չէր, որոնք ապահով հեռաւորութիւնից են ղեկավարում կռիւը: Դանիէլ-բէգն անմիջապէս մեկնում է կրակի առաջին գիծը, սակայն աւտոմոբիլային աղէտ է տեղի ունենում, որի հետեւանքով կոտրւում է նրա ոտքը» (Յարութիւն Թուրշեան, «Սարդարապատի հերոսը (Դանիէլ-բէգ Փիրումեան) (1863-1922)», «Բանբեր Հայաստանի արխիւների», 1969, թիւ 1, էջ 179): Թուրշեանը հիացած է Փիրումեանի անձով, որին անուանում է «վճռական ու քաջ գնդապետ», «հերոս» եւ այլն: Չժխտելով հանդերձ Դ. Փիրումեանի իսկապէս մեծ ու հերոսական դերակատարութիւնը Սարդարապատի ճակատամարտում, ցաւօք, հաստատում ենք, որ նա չմնաց հերոսին վայել իր բարձրութեան վրայ, բարոյական ահաւոր անկում ունեցաւ՝ իր հետ անկման տանելով իրեն վստահուած Կարսն ու ՀՅ-ն:

Գ. 5. Ալան-թալանի մոլուցքը ՀՀ քաղաքական ղեկավարութեան միջավայրում եւ Կարսի նահանգի կանոնաւոր ու անկանոն զօրամիաւորումներում

Այս մասին հարիւրաւոր վկայութիւններ կան բոլոր հեղինակների յուշագրութիւններում[345], յատկապէս նահանգապետ Ստ. Ղորղանեանի անտիպ յուշերում, ինչպէս նաեւ արխիւային փաստաթղթերում: Թալանի հարցում իր անձը վարկաբեկել էր Սարդարապատի հերոսամարտի համար «մեր դարաշրջանի Վարդան Մամիկոնեան»[346], «Վարդան Սպարապետ»[347] հռչակուած, գեներալ Դանիէլ-բէգ Փիրումեանը[348]: Այս ոլորտում յատկապէս «փայլում» էր գեներալ Արտեմ Յովսէփեանը, որը պատերազմական գործողութիւնների օրերին աւելի շատ զբաղուած էր իր թալանը ապահով տեղ հասցնելու հարցով, քան զօրամիաւորումների հրամանատարութեամբ[349]: Իր վկայութիւնը վերագրելով ժողովրդին, Գարեգին արք. յայտնում է, որ «նորան «թալանչի» եւ «անասունների վաճառական» էին անուանում, որ թուրք եւ քուրդ տարրերից յափշտակելով նրանց անասունները, որպէս խռովարարների պատժելու պատրուակով, վաճառում էր Վրաստանի վերայ»: Սակայն այդ զինուորները կարիքը չունէին այդպիսի «զրոյցներ» լսելու, քանի որ իրենց մի մասը եւս պարտադրաբար, ոմանք էլ՝ սիրայօժար մասնակցել են այդ կողոպուտներին, մի մասն էլ յօգուտ սեփական անձին իւրացնելով[350]: Ընդ որում, զինուորները տնային

[345] Տե՛ս, օրինակ, Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», էջ 93:

[346] Բանաստեղծ Նաիրի Զարեանը Փիրումեանին այդպէս է որակել Սարդարապատի հերոսամարտի 50-ամեակին նուիրուած հանդիսութեան ժամանակ:

[347] Գարեգին արք. Յովսէփեանց, «Կեանքիս ամենադժբախտ օրը եւ երջանկութեանս րոպէն», «Ոգուն չապաւինելու արդիւնքը», էջ 29:

[348] Գեներալ Դանիէլ-բէգ Փիրումեանը տիպիկ օրինակն է այն հերոսի, որը, չդիմանալով գայթակղութիւններին, հեշտութեամբ ընտրում է անբարոյականութեան ուղին եւ այդ ճանապարհով ընթանում դէպի սեփական անձի եւ սեփական ազգի կործանում: Այստեղ արժէ յիշել Նժդեհի իմաստուն միտքը. «Կեանքում դժուար է հերոսանալը, բայց աւելի դժուար է հերոս մնալը, իսկ է՛լ աւելի դժուար՝ հերոս մեռնելը»:

[349] Այս մասին տե՛ս ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 5, էջ 87:

[350] Նոյն երեւոյթը տեղի է ունեցել նաեւ Արցախեան ազատամարտի ընթացքում եւ դրանից յետոյ, երբ հայանուն բաշիբոզուկներ, ազատագրուած տարածքները համարելով թշնամու տարածք, անխնայ կողոպտում

իրերը կողոպտելուց յետոյ սկսում էին հնձել հարուստ արտերը եւ թոյլ չտալ, որ «աւելի սոված հայ գիւղացիութիւնը գէթ մասամբ օգտուէր ծրիաբար ձեռք անցած այդ հսկայական հարստութիւնէն»[351]: Յուշագրողը դիպուկ նկատել է տալիս. «Հոգեբանական այս դրութեան մէջ հայ զինուորը ո՛չ ընդունակ էր կռուելու եւ ո՛չ ալ իր կացութեանը մասին վճիտ գաղափար մը ունենալու»[352]: Կողոպուտի հարցում, «ըստ աստիճանների, հրամանատարական կազմը բաժանել էր իրար մէջ «ազդեցութիւնների զոնաները», եւ ամեն մէկը գծել էր իր տնտեսական իրաւասութեան սահմանը», նկատել է տալիս նահանգապետ Ղորղանեանը[353]:

Թալանել են նոյնիսկ պետական պաշտօնեայ, ՀՀ բանակի Օլթի մուտքից յետոյ այնտեղ գաւառապետ նշանակուած քուրդ էզօ բէգի 800 գլուխ ոչխարի հօտը՝ նրա երկու հովիւներին սպանելով[354]: 1920 թ. ամառուայ ընթացքում Կարսից մինչեւ Օլթի տարածքի թուրքական եւ քրդական գիւղերը «ենթարկւում էին սիստեմատիկ թալանի ու բռնութեան»[355]: Այս մասին Կարսի նահանգապետը տեղեկացրել է Երեւան եւ առաջարկել թողնը պետակա-

էին հայոց Հայրենիքում ադրբեջանցիների թողած հարստութիւնները: Այդ թալանչիների մի մասը, գեներալ Յովսէփեանի նման, այսօր էլ զարդարուած է գեներալական ուսադիրներով ու կարմրերիզ շալվարով, իր անձի շուրջը հերոսի դափնիներով պարուրուած առասպելներ է հիւսել տալիս, արժանանում ՀՀ նախկին ու ներկայ նախագահների առատաձեռն շնորհներին, միջամտում պետութեան քաղաքական, վարչական ու յատկապէս տնտեսական կեանքին՝ իր «մեծ» «ներդրումն» ունենալով ՀՀ այսօրուայ հասարակութեան անբարոյականացման գործում՝ դուռը լայն բանալով մեր յետագայ կործանման համար: Ըստ Աղասի Թադեւոսեանի՝ մերօրեայ ՀՀ բանակում «սպայական հեղինակութիւնների մէջ գերիշխող են անգրագիտութիւնը եւ «ախպերութիւնը» » (Աղասի Թադեւոսեան, «Սոցիալական վախի երեւոյթը. արմատները եւ ծեւերը Հայաստանում (1991-1998 թթ.)», «Անցումային շրջանի էթնոհոգեբանական փոփոխութիւնների առանձնայատկութիւնները Հայաստանում» (յօդուածների ժողովածու), «Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի» հրատարակութիւն, Երեւան, հոկտ. 1998, էջ 25):

[351] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 199:

[352] Նոյն տեղում:

[353] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 272:

[354] Նոյնը, թթ. 265, 269-271:

[355] Նոյնը, թ. 277: Օլթիի շրջանում եւ ընդհանրապէս Կարսի նահանգում թալանի եւ դրան՝ զինուորականութեան մասնակցութեան մասին յաւելեալ տե՛ս ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թթ. 303-304, մաս 3, թ. 312:

նացնել: Առաջարկը յարուցել է կողոպուտով յղփացած բարձրաստիճան հրամանատարների թշնամանքը: Մի խօսքով՝ ինչպէս մերօրեայ ՀՀ-ում, գերիշխել է «մեր դէմ խաղ չկայ» լկտի կարգախօսը՝ բռնաբարելով օրինականութիւնն ու, առհասարակ, պետականութեան, բարոյականութեան, արդարութեան եւ այլ վսեմ գաղափարները:

Ալան-թալանին «եռանդագին» ակտիւութիւն է ցուցաբերել առաջին գնդի հրամանատար, գնդապետ Յովհաննէս Մազմանեանը: Քաջ եւ հայրենասէր սպայի համբաւի տիրացած այս զինուորականը գեներալ Արտեմ Յովսէփեանի աջ բազուկն էր թալանի գործում[356] եւ յօգուտ նրան ու սեփական անձի կատարում էր սպային ոչ վայել արարքներ: Այդ գործում նրան մեծապէս օգնում էին այսպէս կոչուած «կամաւորները»՝ ձիաւոր մաուզերիստները[357]:

Ամենաթողութիւնն ու սանձարձակութիւնը հասել էին ամենավառ երեւակայութիւնից անդին: Նման մի օրինակ է բերում Կարսի երբեմնի նահանգապետն իր յուշերում. «Գեներալներից մէկը, որ սիրում էր ժամերով ուղիղ գծով խօսել Երեւանի իր բարեկամների հետ օրուայ նորութիւնների մասին եւ այդպիսով զբաղեցնել իր պատմութիւններով հեռագրական միակ գիծը, գեներալի [եւ] Աստղերի Պալատի մի անդամի միջեւ տեղի է ունենում հետեւեալ բանախօսութիւնը – N ջան, ասում է գեն. Փիրումով, քեզ շատ եմ կարօտել, ե[՞]րբ ես գալու Կարս, թալանի քո բաժինը պահել եմ...»: Ղորղանեանը յայտնում է, որ եթէ նոյնիսկ դա կատակ էր, ապա գոնէ չպէտք է արուեր «հրապարակաւ, Երեւանի եւ Կարսի հեռագրատան բազմաթիւ պաշտօնեաների ներկայութեամբ», որի հետեւանքով այս խօսակցութիւնը «մի ժամից յետոյ բերանից բերան էր անցնում թէ՛ Կարսում եւ թէ՛ Երեւանում...»[358]:

Թալանում էին ոչ միայն մահմեդականների ունեցուածքն ու պետական հարստութիւնը, այլեւ, զինուորական կարիքների անուան տակ, բարձրաստիճան սպաները կողոպտում էին Կարսի

[356] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 6, թ. 34: Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 59, 62:
[357] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 59:
[358] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 10, թթ. 39-40: Նկատի ունենալով այն փաստը, որ այս զրոյցից յետոյ գեներալ Նազարբէգեանի պահանջով սկսուած հետաքննութիւնը մնացել է անհետեւանք, յարգելով հանդերձ անմեղութեան կանխավարկածի դրոյթը, հակուած ենք կարծելու, որ Փիրումեանի խօսակիցը պատերազմական նախարար, գոռոզ Ռուբէն Տէր-Մինասեանն էր:

ամրութիւններում ցարական կառավարութեան կուտակած հսկայաքանակ գույքը[359]: Թալանն այնպիսի ծաւալ էր ընդունել, որ Կարսի անկումից մի շաբաթ առաջ, երբ որոշում են կարգի բերել բերդի ամրութիւնները, պարզւում է, որ նրանք զուրկ են էլեկտրականութիւնից ու ջրից, հեռախօսային եւ հեռագրական սարքերից, հետեւաբար նաեւ կապից թէ՛ միմեանց հետ, թէ՛ բերդի շտաբի ու հրետանու հրամանատարի հետ[360]: Գողացուել էին նաեւ... աւտոմեքենաները եւ Թիֆլիսում վաճառուել[361]: Դրա հետեւանքով պատերազմի օրերին «Կարսի Հայկական բանակը տրանսպորտ չունէր», եւ գեներալները ստիպուած դիմել են նահանգապետին, որպէսզի նրա աւտոմեքենայով փամփուշտ հասցուեր ռազմաճակատի զօրամասերին...[362]

Հայկական բանակի Օլթի մուտքից յետոյ թալանն այնպիսի համատարած բնոյթ է կրել, որ Կարսի նահանգապետն իր յուշերում հառաչում է. «Եւ ո՞ւմ դէմ ես պէտք է կռուէի, ամբո՞ղջ Հայկական բանակի»...[363]

Կողոպուտներին մասնակից զինուորականները չէին պատժւում: Երբ թալանն ահռելի չափեր է ընդունում ու հետաքննութեամբ հաստատւում, Նազարբէգեանը խստօրէն հրամայում է վերջ տալ դրան, բայց ոք ոք չի ենթարկւում սպարապետի հրամանին: Որեւէ ազդեցութիւն չի գործում նոյնիսկ Փիրումեանին դատի տալու Նազարբէգեանի սպառնալիքը: Աւելին՝ Փիրումեանը դրանից յետոյ ստանում է աւագ զօրավարի (գեներալ-լեյտենանտ) աստիճան...[364]

Թալանի հարցում գեներալներին ու գնդապետներին մեծ «օժանդակութիւն» են մատուցել մաուզերիստներն ու նրանց խմբապետները, որոնք Հայրենիքի պաշտպան «կամաւորականների» անուան տակ յայտնուել էին Կարսի մարզում ու կցուել այս կամ այն սպային. «Գրեթէ ամեն մի սպայ ունէր իր <...> «խումբը» »[365]: Նրանք զբաղուել են ոչ միայն թալանով, այլեւ բռնաբարութիւններով եւ սպանութիւններով: Կողոպուտի հերթական արշաւից վե-

[359] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 50:
[360] Նոյնը, թ. 51: Տե՛ս նաեւ նոյնը, մաս 3, թ. 365:
[361] Նոյնը, գ. 7, մաս 1, թ. 61: Տե՛ս նաեւ նոյնը, մաս 3, թ. 364:
[362] Նոյնը, մաս 1, թ. 64:
[363] Նոյնը, մաս 2, թ. 276:
[364] Նոյնը, թթ. 243-244, 251:
[365] Նոյնը, թ. 262:

ռադառնալով Կարս՝ նրանք «հիւրանոցներում վատնում էին շատ մեծ գումարներ՝ հիւրասիրելով գեներալներին», ովքեր «այդ զեղխութեան ընդմիջումներում թուղթ խաղալով, տանում եւ տարուում էին միլիոններ...»[366]: Խմբապետների մէջ իրենց բաշիբոզուկութեամբ յատկապէս «փայլել» են Փիլոսն ու Մուրադխանը[367]: Այս հրոսակախմբերը մեծապէս նպաստել են նաեւ կանոնաւոր զօրքի մէջ անկարգապահութեան տարածմանը: Նրանք ճակատից փախչողների առաջին շարքում էին[368]: Խմբապետներ Փիլոսի եւ Մուրադխանի տղերքը չէին խորշում պատերազմի օրերին իսկ կողոպտելու Կարսի իրենց հայրենակիցների բնակարանները[369]: Կողոպուտով զբաղուել են Սմբատի՝ համեմատաբար չվարկաբեկուած ձիաւոր կամաւորներն անգամ[370]:

Խմբապետների ղեկավարած կամաւորականներին հիանալի է բնութագրել Սեպուհի բրիգադում ծառայած անանուն յուշագրողը: Նրանց նա համարում է «սրիկայ», «որոնք միայն թալանի եւ բռնաբարութեան համար են գալիս ռազմաբեմ, չափից դուրս շռայլ են եւ անհասկացող: <...> Նրանք մեր ամենավտանգաւոր պահին իսկոյն դուրս են գալիս մեր սահմանները պաշտպանելու, անպայման զգալի կերպով թեթեւացնում են մեր ծանր դրութիւնը, բայց դրա հետ միասին այնքան անկարգութիւն, թալան եւ բռնաբարութիւններ են անում, որ եթէ նրանց շահն ու օգուտը կշռելու լինենք, տակը միայն տխուր յիշողութիւններ են մնում»[371]: Այս տարրին հիանալիօրէն է բնութագրում մէկ այլ յուշագրող՝ Վահէ

[366] Նոյնը, թ. 283: Այսօր պատկերը գրեթէ նոյնն է, այն տարբերութեամբ, որ զեխութեան ու բախտախաղի վայրերի շարքում են նաեւ Մոսկուան, Լաս Վեգասն ու յատկապէս ոմանց պաշտած Մոնտէ Կարլօն՝ իրենց խաղատներով ու անառականոցներով...

[367] Յուշագրողների մեծ մասը յիշատակում է այս ստահակներին. տե՛ս, օրինակ, Գարեգին արք. Յովսէփեանցի օրագիրը, «Բանբեր Հայաստանի արխիւների», 1989, թիւ 3, էջ 131:

[368] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 62:

[369] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 131-132:

[370] Նոյնը, էջ 154: Ռազմական գօտում մաուզերիստների անօրինականութիւնների մասին յաւելեալ տե՛ս Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», էջ 31, 83: Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 31, 124, 156:

[371] Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», էջ 31:

Արծրունին. « «Մավզերիստ»ներուն ինիսունինը տոկոսը, չունենալով ո՛չ զինուորի կարգապահութեան գիտակցութիւնը եւ ո՛չ ալ պետական պաշտօնեայի մտածողութիւնը, անհամեմատօրէն աւելի լայն ասպարեզ տուաւ իր կենդանական բնազդին, քան միւս դասերը...»: Մի քանի տող յետոյ նա շարունակում է. ««Մավզերիստ»ներու թալանի ախորժակը ո՛չ չափ ունէր եւ ո՛չ սահման, ո՛չ կարգ գիտէր եւ ո՛չ ժամանակ: Հերիք էր, որ առիթ մը ներկայանար հարստանալու, անձնական վրէժ լուծելու եւ կամ պղտոր ջուրին մէջ ձուկ որսալու՝ անոնք մի՛շտ պատրաստ էին»[372]: Հենց այդ «հայրենասէր»-բաշիբոզուկները՝ Փիլոսը, Մուրադխանը, Աբգարը եւ իրենց տղերքը առաջինն են փախել Կարսի ռազմաճակատի Բէգլի Ահմէդի հատուածից սեպտեմբերի 29-ի թուրքական յարձակման առաջին իսկ ժամին[373]: «Մեր կամաւորները բուն կռուի պահուն կգերադասէին թիկունքը թալանելով զբաղուիլ, քան թէ իրենց պարտականութիւնը կատարելով մտահոգուիլ»[374]: Ժողովուրդը նմաններին վերաբերում էր «թէ՛ որպէս դասալիք եւ թէ՛ որպէս հին թալանչի»[375]:

Մի խօսքով՝ թալանի մոլուցքով վարակուել են շատ շատերը՝ զօրահրամանատար, սպայ, զինուոր, կամաւոր, պետական ծառայող, շարքային քաղաքացի, «նոյնիսկ կեդրոնի համազգային պատասխանատուութիւն ունեցողներէն որոշ թուով անձեր»[376]: Նրանք «մխրճուեցան թալանի, կողոպուտի եւ բռնաբարութեան տիղմին մէջ եւ ա՛լ անկարող եղան դուրս գալ անկէ, մինչեւ որ հայկական անկախութիւնն ալ իրենց հետ ցեխին յատակը տարաւ»[377]:

[372] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 31:

[373] Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», էջ 83:

[374] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 156:

[375] Նոյնը, էջ 124: Մեր կարծիքով՝ երրորդ հանրապետութեան առաջին տարիներին մաուզերիստներին նմանակում էին (նոյնիսկ արտաքին տեսքով՝ բեղ-մօրուք, փնթի հագուածք ու խօսուածք եւ այլն), այսպէս կոչուած, «ասֆալտի ֆիդայիները»: Վերջիններիս որոշ գործառոյթները յետագայում անցան մերօրեայ պարարտ, հաստավիզ եւ սափրագլուխ թիկնապահների խաւին:

[376] Նոյնը, էջ 152: Մեր կարծիքով՝ ակնարկը վերաբերում է Ռուբէն Տէր-Մինասեանին: Տե՛ս նաեւ նոյնը, էջ 29, 256:

[377] Նոյնը, էջ 73:

Թալանում էին ոչ միայն բնակչութեանը, այլեւ օտարերկրացիների եւ պետական հաստատութիւնները[378], նոյնիսկ... մէկը միւսին. «Գողը գողէն կգողանար եւ Աստուած ինք երկնքին մէջ կզարմանար»[379],- հառաչում է յուշագրողը: Թալանի «հոգեբանութիւնը կարճ ժամանակեն ստացած էր տեսակ մը բնական երեւոյթ»[380]: Յուշագրողը «թալանի անզուսպ հակումը» համարում է «Կարսի ճակատի ծախորդութեանց խոշորագոյն դրդապատճառներէն մէկը»[381], մի գնահատական, որի հետ լիովին համաձայն ենք, այն յաւելումով, որ թալանը հիմնական դեր խաղաց զօրքի եւ հասարակութեան բարոյական անկման է՛լ աւելի խորացման գործում: Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանեանն ամբաստանում է ռազմական երեք նախարարներին՝ գեներալներ Հախվերդեանին եւ Արարատեանին եւ Ռուբէն Տէր-Մինասեանին, որ, լաւատեղեակ լինելով հանդերձ Կարսի բերդում տիրող անբարոյական մթնոլորտին, կա՛մ աչք էին փակում դրա առաջ, կա՛մ էլ նոյնիսկ հովանաւորում այդ անբարոյականութիւնը՝ «նկատի առնելով կուսակցութիւնը եւ նորա խնամիութիւնը», օրինակ բերելով Ռուբէնի ցանկութեամբ Փիրումեանին գեներալ-լեյտենանտի աստիճանի շնորհումը[382]: «Այլասերուել էր հասարակական մթնոլորտը եւ մարդիկ բթացել էին ոչ միայն դէպի պետական, հասարակական պատիւը, այլեւ դէպի իրանց անձնական պատուասիրութիւնը, <...> խախտուել էին տարրական հասկացողութիւնները, մարդկանց մէջ բթացել էր պարտաճանաչութեան զգացմունքը»[383],- դիպուկ նկատել է տալիս Ստ. Ղորղանեանը: Իսկ մարդկային հասարակութեան մէջ որեւէ նիւթական կործանմանը նախորդում է բարոյական անկումը:

Թալանին «ջանադրաբար» մասնակցել են նաեւ Կարսի ու Ալեքսանդրապոլի դաշնակցական կոմիտէների անդամները՝ Կարսի նահանգի կենտրոնական կոմիտէի անդամ եւ քաղաքագլուխ,

[378] Օրինակ՝ Ալեքսանդրապոլից նահանջելիս հայոց բանակի զինուորները, այլոց շարքում, կողոպտել էին «Սագօ» ընկերութեան եւ ֆինանսական նախարարութեան շէնքերը: Սա կողոպուտ էր, քանի որ կատարուել է ոչ թէ բարիքները եւ պետական գոյքն ու փաստաթղթերը թշնամուն չթողնելու նպատակով, այլ, խառնակութիւնից օգտուելով, դրանք սեփականացնելու մոլուցքով:

[379] Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 256:

[380] Նոյնը, էջ 29:

[381] Նոյնը, էջ 152: Տե՛ս նաեւ նոյնը, էջ 29, 255-256:

[382] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 3, թթ. 422-423:

[383] Նոյնը, մաս 1, թթ. 57-58:

«քրդերի գիւղերից բուրդ փախցնող» Նորհատեանի գլխաւորութեամբ[384]: Իսկ ֆինանսների նախարարութեան բարձրաստիճան պաշտօնեայ Տիգրան Աղամալեանը «բաւարարուել է» կողոպտելով պետական ունեցուածքը՝ աղահանքերը՝ այդ «գործին» լծելով դասալիք զինուորների[385]: Ուշագրաւ է, որ Կարս մտնելուց յետոյ թուրքերը նոյեմբերի առաջին օրերին հրապարակաւ կախաղան են հանել յիշեալ երկու թալանչիներին[386]:

Գ. 6. Գաղափարական-բարոյական ահաւոր անկումը բանակում, պետական վարչամեքենայում եւ ՀՀ հասարակութեան մէջ

Կարսի նահանգապետը գրել է իր յուշերում. «(Բանակում - Գ. Ե.) գաղափարական, ազգային նոյնիսկ հեռաւոր սկզբունքների մասին խօսելն աւելորդ էր, եւ այդ առանցքում մենք չէինք կարող ազգայնացնել զօրքը, չէինք կարող պետական կրթութիւն տալ զօրքին եւ, հետեւապէս, չունեցանք այն ոյժը, որ պետական գաղափարի մարմնացումն է»[387]: Նա կարծէք նաեւ այսօրուայ համար է գրել հետեւեալ տողերը. «Գաղափարը, սրբութիւնը եւ իդէալները կարծես իջել էին իրանց հմայիչ բարձրութիւնից, ուր մարդիկ ծաղրում էին իրանց ամենանուիրական հաւատալիքները եւ ուր

[384] Նոյնը, թ. 93, մաս 2, թթ. 241-242:

[385] Նոյնը, մաս 1, թթ. 31-38: Տե՛ս նաեւ Վահէ Արծրունի, նշ. աշխ., էջ 157:

[386] Կ. Սասունին նրանց «նահատակ» է անուանում (ՀԹՊ, «Հայրենիք», 1926, թիւ 7, էջ 76): Այս բնութագրմանը բացարձակապէս համաձայն չենք: Թալանչի անբարոյականը չի կարող «նահատակ» անուանուել, անգամ եթէ թշնամին է նրան պատժում:

[387] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 2, թ. 252: Այսօրուայ ՀՀ բանակում եւս վիճակը մխիթարական չէ: ՀՀ պաշտպանութեան նախարար Սերժիկ Սարգսեանն ու զօրահրամանատարները գանգատւում են, թէ բանակ են զօրակոչւում նորահաս երիտասարդներ, որոնք ոչ մայրենի լեզուն գիտեն, ոչ էլ հայոց պատմութիւնը: Թւում է, թէ գոնէ այդ դժգոհողներն իրենք պէտք է փայլէին յիշեալ ոլորտներում: Սակայն ՀՀ մերօրեայ գեներալների մի մասն իր մայրենի լեզուին չի տիրապետում, մի մասն էլ խօսում է անգրագէտ «հայերէնով»: Իսկ նոյն պաշտպանութեան նախարարը, որը բանասիրական բարձրագոյն կրթութիւն ունի, 2006 թ. գարնանը հրապարակաւ յայտարարեց. «Աղդամը երբեք հայկական չի եղել»: Ճակատագրի հեգնանքով, ելոյթից օրեր անց Աղդամից հիւսիս-արեւելք յայտնաբերուեցին Արցախի Տիգրանակերտի աւերակները... Լաւ կլինէր, եթէ պարոն գերնախարարը, նժդեհական ՀՀԿ (sic!) խորհրդի նախագահն ու հանրապետութեան հաւանական նախագահացուն մի քիչ աւելի խորութեամբ իմանար հայ ժողովրդի պատմութիւնը եւ Հայաստանի սահմանները...

չկար (ճիշտը՝ «չկային» - Գ. Ե.) այլեւս ամօթ, պատկառանք եւ ազգային այն մեծ կորովը եւ տրամադրութիւնը, որ կրթել է սերունդներ եւ պատմութիւն ստեղծել...»[388]: Նա աւելացնում է. «Այդ մթնոլորտում չէր (ճիշտը՝ «չէին» - Գ. Ե.) կարող զարգանալ ու ամրանալ կառավարչական հմայքը ու համարումը, այդ պրեստիժը օրէցօր ընկնում, թուլանում էր եւ իր հետեւից տանում իրաւակարգը, որի փլուզումը ե՛ւ ակներեւ էր ե՛ւ անխուսափելի»[389]:

Գ. 7. Բարբարոսական վերաբերմունքը Հայրենիքի ազատագրուած տարածքների նկատմամբ

Հայոց Հայրենիքը սրբութիւն է, հայութեան բոլոր սերունդների համայնական սեփականութիւնը: Հետեւաբար նրան պէտք է վերաբերուել երկիւղածութեամբ, իսկ նրա ազատագրուած տարածքներին՝ առանձնայատուկ սիրով: Այս սկզբունքը ոչ միայն չյարգուեց Կարսի նահանգում եւ 1920 թ. ամառը ՀՀ բանակի՝ Օլթիի շրջանի ազատագրած տարածքներում, այլ, ընդհակառակը, դրանց վերաբերուեցին որպէս թշնամու տարածքի՝ սրանից բխող

[388] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 18, թ. 79: Այսպէս՝ անպատկառութիւնը հասել էր այն աստիճանի, որ Կոտայքի շրջանում գիտական աշխատանքներ կատարող, Սարդարապատի ճակատամարտի «Ղեւոնդ Երէց» պատուանուանն արժանացած Գարեգին եպս. Յովսէփեանցին եւ նրան ուղեկցող ճարտարապետ Եղիազարեանին դաժանօրէն ծեծում են Կոտայքի շրջանի Գէօյքիլիսա գիւղի հարբած կոմիսարը եւ նրա «թայֆան», ինչ է թէ՝ սրբազանը ցանկացել է հետազօտել գիւղի հին եկեղեցին՝ առանց իրենցից արտօնութիւն խնդրելու: Աստուծոյ օծեալն ու անարգուած եկեղեցականը ներում է խուժանին (Մաշտոցի անուան Մատենադարան, Գարեգին Յովսէփեանցի ֆոնդ, թղթապանակ թիւ 91, վաւերագիր էջ 49ա, 50ա, 50բ: «Ժողովուրդ», թիւ 167, 1920 թ., 6 հոկտեմբերի, «Քրոնիկոն սիւնակ, ենթավերնագիր՝ «Գեղեցիկ օրինակ»): Այս անամօթութիւնը տեղի է ունեցել 1920 թ. սեպտեմբերի 26-ին, երբ թշնամու հորդաները համարեայ անարգել յառաջանում էին Կարսի ուղղութեամբ:

[389] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 2, թ. 21: Աղասի Թադեւոսեանի՝ 1998 թուականին անցկացրած հարցախոյզը ցոյց է տուել, թէ ՀՀ «հասարակութեան 90 տոկոսից աւելին նոյնացնում է պետական եւ յանցագործ հեղինակութիւններին» (Աղասի Թադեւոսեան, «Սոցիալական վախի երեւոյթը. արմատները եւ ծեւերը Հայաստանում (1991-1998 թթ.)», «Անցումային շրջանի էթնոհոգեբանական փոփոխութիւնների առանձնայատկութիւնները Հայաստանում» (յօդուածների ժողովածու), «Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի» հրատարակութիւն, Երեւան, հոկտ. 1998, էջ 25):

յանցաւոր հետեւանքներով: «Կարսի նահանգը լցուեց բախտախնդիրներով միայն, պատահական մարդկանցով, որոնք շտապում էին միայն կեղեքել եւ փախչել»[390]: Այս տարածքներում զինուորականներն ու խմբապետների մաուզերիստ տղերքը վարեցին «այրած հողի» քաղաքականութիւն. կողոպուտը, բռնաբարութիւնները, սպանութիւնները եւ ամեն տեսակ վայրենութիւնները չափ ու սահման չունէին եւ դրսեւորուում էին իրենց ողջ «պերճութեամբ»: Բաւարար է ասել, որ ընդամենը երկու ամսուայ ընթացքում Կարսի նահանգապետը արձանագրել է զինուորականների գործած 75 ոճիր[391]:

Գեներալներն ու գնդապետները այդ տարածքներին վերաբերուեցին որպէս սեփական ագարակի՝ բռնանալով ոչ միայն մահմեդական բնակչութեան, այլեւ իրենց նախկին բնակավայրերը վերադարձող չափազանց փոքրաքանակ հայութեան վրայ[392]:

Հայրենիքի նկատմամբ նման վերաբերմունքը անբարոյականութեան գագաթնակետն է, աններելի յանցանք՝ բոլոր ժամանակների համար...

Ելնելով վերոշարադրեալից ու հետեւեալ փաստերից, որ՝

1. գեներալներ Փիրումեանը եւ Յովսէփեանը 1920 թ. մայիսի բոլշեւիկեան խռովութեան օրերին անցել էին խռովարարների կողմը՝ «չէզոքութեան» անուան տակ,

2. գեներալ-մայոր Արտեմ Յովսէփեանին ու գնդապետ Դմիտրի Միրիմանեանին բոլշեւիկները ոչ միայն Ռեազան չաքսորեցին 1921 թ. յունուարին՝ ՀՀ սպայութեան հետ, այլ նոյն թուականի փետրուարին իրենց ծառայութիւնները մատուցին Կարմիր բա-

[390] ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թթ. 145-146:

[391] Նոյնը, մաս 2, թ. 285: Այդ ոճիրների մասին յաւելեալ տե՛ս նոյնը, մաս 3, թթ. 329-333:

[392] Կարսի նահանգապետը յայտնում է, որ նահանգից միայն դուրս էին տանում եւ նոյնիսկ չէին մտածում նահանգը ոտքի կանգնեցնելու եւ զարգացնելու մասին (ՀԱԱ, ֆ. 477, ց. 1, գ. 7, մաս 1, թ. 18: Տե՛ս նաեւ նոյնը, մաս 3, թ. 421): Այս տեսակէտից՝ Արցախեան ազատամարտում էլ դրսեւորուեցին նման երեւոյթներ, մասնաւորաբար ազատագրուած Քաշաթաղի շրջանում: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանն է՛լ աւելի հեռուն գնաց՝ հայոց Հայրենիքի արեւելեան ազատագրուած տարածքները մի քանի տարի առաջ համեմատելով ոչ աւել ոչ պակաս... զուգարանի հետ՝ հայ հանրութեանը իբր բացատրելու համար «օկուպացուած» օտար բառի նշանակութիւններից «զբաղուած» իմաստը:

նակին՝ դէպի Լոռի, Թիֆլիս ու ապստամբած Երեւան արշաւանքների ժամանակ, որի համար էլ նրանք շքանշանների արժանացան (համաձայն ենք Ստ. Ղորղանեանի հետ, թէ «աւելի ցայտուն դաւաճանութիւն եւ աւելի այլանդակ հոգեբանական տեսիլ չի կարող ստեղծել ամենավառ երեւակայութիւնը անգամ»[393]),

3. վերոյիշեալ երկուսը շարունակեցին ծառայել Կարմիր բանակին (Միրիմանեանը հասաւ իր մուրազին՝ գեներալական ուսադիրների),

4. Ստեփան Ղորղանեանի այն վկայութիւնը, թէ Կարսի բոլոր առումների ժամանակ մեծ դեր է խաղացել կաշառքի դիմաց քաղաքի յանձնումը՝ պաշտպանական ձեւական կռիւներից յետոյ[394] (Սէյմի ղեկավար Ակակի Չխենկելու հրահանգով գեներալ Նազարբէգեանի հրամանատարած Հայկական կորպուսը 1918 թ. ապրիլի 12-ի կէսօրին քաղաքը համարեայ առանց դիմադրութեան թողել էր թուրքերին),

հակուած ենք վարկածի կարգով ենթադրելու, որ Կարս բերդաքաղաքի 1920 թ. հոկտեմբեր 30-ի յանձնումը եւս կատարուել է ՀՀ բանակի ղեկավարութեան մի մասի, որոշակիօրէն՝ ռազմաճակատի կարեւորագոյն հատուածների հրամանատարներ Յովսէփեանի ու Միրիմանեանի, դաւաճանութեան հետեւանքով[395]: Այստեղ արժէ յիշեցնել, որ հայ հասարակութեան մէջ առ այսօր յամառօրէն շրջում են լուրեր, թէ Արծուաշէնն ու Շահումեանի շրջանը 1990-ականների սկզբին ադրբեջանցի թշնամուն յանձնուեցին դաւաճանական գործարքի հետեւանքով[396]:

[393] Նոյնը, գ. 18, թ. 38:

[394] Տե՛ս նաեւ նոյնը, գ. 7, մաս 3, թ. 416:

[395] Դմիտրի Միրիմանեանը, 1919 թ. մարտից մինչեւ 1920 թ. մայիսը ՀՀ ռազմական նախարար, ՀՀ բանակի, ապա Կարմիր բանակի գեներալ Քրիստափոր Արարատեանը եւ բոլշեւիկներին ծառայելուց հրաժարուած գեներալ Մովսէս Սիլիկեանը 1937-ին յայտարարուեցին «ժողովրդի թշնամի» եւ մի քանի այլ սպաների հետ նոյն թուականի դեկտեմբերի 10-ին գնդակահարուեցին Նորքի ձորում. տե՛ս Гайк Айрапетян, Триумф и трагедия генерала Силикова, Новое время, еженедельник, Ереван, 25 сентября 2002г., с. 3 [Հայկ Հայրապետեան, «Գեներալ Սիլիկովի յաղթանակն ու ողբերգութիւնը», «Նովոյէ վրեմիա» շաբաթաթերթ, Երեւան, 2002 թ., 25 սեպտեմբերի, էջ 3 (ռուսերէն)]:

[396] Տե՛ս այդ դէպքերի ներքին ծալքերին շատ մօտիկից ծանօթ Դնեպրիկ Բաղդասարեանի յուշերը, «Դիմակայութիւն», Երեւան, 1998, էջ 144-151:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ամփոփելով՝ մէկ անգամ եւս հաստատում ենք, որ ռազմական եւ մանաւանդ բարոյահոգեբանական այսպիսի բազմաթիւ սխալների թէկուզ մի մասը բաւարար կլինէր՝ կործանման տանելու հայկական Կարսն ու Հայաստանի Հանրապետութիւնը: Նման իրավիճակում պարտութիւնն անխուսափելի պիտի լինէր, իսկ յաղթանակը՝ ամեն տեսակ օրինաչափութիւնների կոպիտ եւ անտրամաբանական խախտում[397]:

Կարսի 1920 թ. խայտառակ պարտութեան ու դրան հետեւած Հայաստանի առաջին Հանրապետութեան կործանման ներքին բազմաբեւեռ պատճառները ներկայացնելուց ու վերլուծելուց յետոյ յանգում ենք հետեւեալ եզրակացութիւններին.

1. Կարսում ընդհանրապէս հայութեան ու մասնաւորապէս Հայոց բանակի պարտութիւնը օրինաչափ էր եւ անխուսափելի, **տրամաբանական եւ բնական հանգուցալուծումը հայութեան «հաւաքական դաւաճանութեան»**[398]: Բանակներն ու ժողովուրդները

[397] Համանման բարոյահոգեբանական անկման պատճառով յունական բանակը խայտառակ պարտութիւն կրեց թուրքերից՝ 1922 թ. եւ «Կարսը» թուրքերը կրկնեցին Իզմիրում՝ 1922 թ. սեպտեմբերին: Այս զուգահեռը դիպուկ նկատել է Բէյրութի «Նայիրի» շաբաթաթերթի խմբագիր, գրող Անդրանիկ Ծառուկեանը: Թերթի ԺԵ տարուայ (1968 թ. - Գ. Ե.) 45-50 միացեալ համարների փոխարէն լոյս տեսած բացառիկ համարում նա վերահրատարակել է Կարսի անկման մասին Արտաշէս Բաբալեանի եւ Գարեգին արք. Յովսէփեանցի յուշագրութիւնները (համապատասխանաբար՝ էջ 8-14 եւ 15-19)՝ իւրաքանչիւրին կցելով ընդարձակ խմբագրական: Այնուհետեւ տպագրել է Մարտիրոս Սարեանի (չշփոթել աշխարհահռչակ գեղանկարչի հետ - Գ. Ե.) «Իզմիրի աղէտը» յուշագրութիւնը (էջ 20-27): Յուշագրողը նշում է, որ յունական բանակը թուրքական դիրքերի դէմ յանդիման ժամանակն անցկացնում էր անգործութեամբ, խաղուպարով, երաժշտութեամբ, հարբեցողութեամբ եւ այլ զուարճութիւններով (նա մոռացել է կամ չի ցանկացել նշել թալանն ու բռնաբարութիւնները - Գ. Ե.), եւ յաւելում. «Իսկապէս ողբերգական էր յոյն բանակին եւ յոյն ժողովուրդին վիճակը Իզմիրի մէջ, եւ կարգ մը նմանութեան եզրեր ունէր մեր Կարսի ու Արդահանի բանակին, Հայաստանի եւ հայ ժողովուրդի դառնադէտ պարտութեան սեւ ճակատագրին հետ» (էջ 27):

[398] Անդրանիկ Ծառուկեան, խմբագրական ներածական խօսք Արտաշէս Բաբալեանի «Կարսի անկումը» յուշագրութեան վերահրատարակման

համեմատում են իրենց ոգեղէն ու գաղափարական եւ դրանցից բխող բարոյահոգեբանական յատկանիշներով: Բանակի մարտունակութիւնը որոշւում է ո՛չ բանակի թուակազմով, ո՛չ մարտական պատրաստուածութեամբ (զինտեխնիկային տիրապետելով), ո՛չ էլ մարտական տեխնիկայի արդիականութեամբ ու դրանով հագեցուածութեան աստիճանով: Այդ ամենն անհրաժեշտ են, բայց ո՛չ բաւարար: **Բանակը նախ եւ առաջ ոգի է, մարտակա՛ն ոգի**, որը սնւում է ազգի ոգուց: Եթե ոգին չկայ կամ թոյլ է, պարտութիւնները հնարաւոր կամ նոյնիսկ անխուսափելի են դառնում: **Ոգեղէն, գաղափարական, բարոյական եւ հոգեւոր անկումը անպայմանօրէն եւ անխուսափելիօրէն առաջնորդում է ֆիզիկական (նիւթական) անկման:**

2. **Ազգի եւ ազգային պետութեան պահպանման ու հզօրացման յոյսը պէտք է դնել միայն եւ միայն ազգի սեփական կարողութիւնների վրայ՝** դրանք ծայր աստիճան կենտրոնացնելով ու շաղախելով վեհագոյն գաղափարներով եւ ղեկավարների անձնական դրական օրինակներով:

Կարսի ու Հայաստանի առաջին Հանրապետութեան անկմանն ու կործանմանը նախորդած արատաւոր երեւոյթներից շատերն առկայ են նաեւ Հայաստանի երրորդ հանրապետութեան մէջ, ՀՀ զինուած ոյժերում[399] եւ հայ հասարակութեան կեանքում՝ եր-

առքիւ, «Նայիրի», ժԵ. տարուայ (1968 թ.- Գ. Ե.) 45-50 միացեալ համարների փոխարէն լոյս տեսած բացառիկ համար, էջ 8:

[399] Արցախեան ազատամարտի հերոս, Շուշիի ազատարար, գեներալ-մայոր Արկադի Տէր-Թադեւոսեանը վկայում է, որ Արցախեան ռազմաճակատներում, յատկապէս Մարտակերտի հատուածում 1992 թ. երկրորդ կէսի հայկական պարտութիւնների հիմնական պատճառներն են քաղաքական հակամարտութիւնը ՀՀՇ եւ ՀՅԴ կուսակցութիւնների միջեւ, Շուշիի ազատագրումից եւ Լաչինի միջանցքի բացումից յետոյ առաջացած բերկրաթմբիրն (էյֆորիա) ու կարգապահութեան անկումը զինուած ոյժերում, ռազմամթերքի վատնումն ու զէնքի գողութիւնը, ռազմական եւ քաղաքական հետախուզութեան «մեծ ծախողութիւնը», մարտական ոգու անկումն ու խուճապը: Նա զգուշացնում է. «Մենք չպէտք է մեր սխալները կրկնենք եւ մենք մեզ թուլացնենք՝ մեր ռազմական գերազանցութեան գիտակցութեան պատճառով». Аркадий Тер-Тадевосян, Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), (Արկադի Տէր-Թադեւոսեան, «Արցախում մարտական գործողութիւնների վերլուծումը (յուլիս 1991-յուլիս 1992 թթ.)»), «Ռազմավարութեան եւ անվտանգութեան

բեմն է՛լ աւելի մեծ տարողութիւններով, քան առաջին Հանրապետութեան վերջալոյսի օրերին: Հետեւաբար նոր անկումն ու կործանումը կդառնան անխուսափելի, եթէ վայրկեան առաջ չձերբազատուենք բացասական երեւոյթներից եւ տրամագծօրէն չշրջենք կացութիւնը[400]:

Սոյն ուսումնասիրութեամբ փորձեցինք ներկայացնել ու վերլուծել Կարսի եւ Հայաստանի առաջին Հանրապետութեան անկումները՝ գաղափարական, ռազմահոգեբանական, սոցիալ-հոգեբանական եւ այլ «ներքին» պատճառների տեսանկիւններից: Այս «ներքին» պատճառների համալիր եւ է՛լ աւելի խորը վերլուծումը յոյժ կարեւոր նշանակութիւն ունի հայ ժողովրդի եւ հայկական պետականութեան յետագայ գոյատեւման համար:

Կարսի անկման ականատես Արտաշէս Բաբալեանն իր յուշագրութիւնն աւարտում է՝ ասելով. «Երանի թէ այս դառն սխալները դաս ծառայէին ապագայի համար»[401]:

Մեր կարգին՝ այս ուսումնասիրութիւնն աւարտում ենք՝ ասելով. «Երանի թէ մեր ժողովրդի զաւակները լսեն Արտաշէս Բաբալեանի այս խորհուրդը»: Այսօ՛ր իսկ: Վաղը ոչ միայն ուշ կլինի, այլեւ կարող է այդ «վաղը» չլինել իսկ... Աստուած մի՛ արասցէ:

հարցեր» (յօդուածների ժողովածու, կազմող եւ խմբագիր՝ Արմէն Այվազեան), Երեւան, 2007, էջ 576-577:

[400] Երբ այս գրքոյկի պատրաստութիւնն աւարտուել էր, 2007 թ. փետրուարի 14-ին պատահաբար հանդիպեցի ՀՀ նախագահի ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական Գառնիկ Իսագուլեանին: Նրան ներկայացրի ՀՀ-ում տիրող ահաւոր վիճակը՝ համոզմունք յայտնելով, որ դա ՀՀ-ի պետական եւ հայութեան ազգային անվտանգութեանն սպառնացող մեծագոյն վտանգն է այսօր՝ աւելացնելով, թէ այս ընթացքի շարունակութեան դէպքում մեր կործանումն անխուսափելի է: ՀՀ նախագահի խորհրդականն անմիջապէս ասաց. **«ՀՀ-ն արդէն կործանուել է»**: Համաձայն չեմ նման գնահատականին, թէեւ Իսագուլեանի պատասխանում կայ նման վտանգի գիտակցումը:

[401] Արտաշէս Բաբալեան, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12, էջ 68:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Արխիւային փաստաթղթեր

- Հայաստանի ազգային արխիւ

1. 1. Ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 93:
1. 2. Ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 602:
1. 3. Ֆոնդ 276, ցուցակ 1, գործ 19:
1. 4. Ֆոնդ 477, ցուցակ 1, գործեր 2, 6, 7,8, 9, 10, 11, 12, 14, 16, 18:
1. 5. Ֆոնդ 4047, ցուցակ 1, գործ 197:
1. 6. Ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 43:

- Մաշտոցի անուան Մատենադարան

1. 7. Գարեգին Յովսէփեանցի ֆոնդ, թղթապանակ թիւ 91, վաւերագիր էջ 49ա, 50ա, 50բ:

2. Մենագրութիւններ

2. 1. Ալեքսանդրեան Արտաշէս, «Կարս. 1920-21», Երեւան, 1986:
2. 2. Անանուն, «Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի վերջին օրերը», Երեւան, 1994:
2. 3. Ասատրեան Հայկ, «Վերանորոգչական շարժում (խորհրդածութիւններ)», «Ազգայնական ակումբի» հրատարակութիւն, Երեւան, 2002:
2. 4. Արծրունի Վահէ, «Հայ-տաճկական պատերազմը – Հայ սպայութիւնը – Շատախ», Երեւան, 2002:
2. 5. Բաբաջանեան Վանիկ, «Միջկուսակցական յարաբերութիւնները Հայաստանի Հանրապետութիւնում բոլշեւիկեան հակապետական ելոյթների եւ դրանց հետեւանքների յաղթահարման շրջանում (1920 թ. մայիս-օգոստոս)», Երեւան, 2006:
2. 6. Բաղդասարեան Դնեպրիկ, «Դիմակայութիւն», Երեւան, 1998:
2. 7. Դարբինեան Արտակ, «Հայ ազատագրական շարժման օրերէն», Բ. տպագրութիւն, Երեւան, 2003, էջ 263:
2. 8. Զարմունի Օննիկ, «Ցեղի հրամայականը», Երեւան, 2007:

2. 9. Յակոբեան Արարատ, «1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմութեան փորձն ու դասերը», Երեւան, 2004:
2. 10. Յակոբեան Արարատ, «Հայաստանի խորհրդարանը եւ քաղաքական կուսակցութիւնները 1918-1920», Երեւան, 2005:
2. 11. Նալչաջեան Ալբերտ, «Էթնիկական հոգեբանութիւն», Երեւան, 2001:
2. 12. Նժդեհ Գարեգին, «Հատընտիր», Երեւան, 2001:
2. 13. Ուլուբաբեան Բագրատ, «Արցախեան գոյապայքարը», Երեւան, 1994:
2. 14. Պահլաւունի Եղիշէ, «Յուշամատեան», Երեւան, 2006:
2. 15. Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները» հ. է, Լոս Անջելոս, 1952:
2. 16. Սարդարեան Կտրիճ, «Հայ-վրացական յարաբերութիւնները 1918-1921 թթ.», Երեւան, 2002:
2. 17. Վիրաբեան Վանիկ, «Հայաստանի առաջին Հանրապետութեան յատուկ ծառայութիւնները 1918-1920 թթ.», Երեւան, 1998:
2. 18. Վրացեան Սիմոն, «Հայաստանի Հանրապետութիւն», Երեւան, 1993:

3. Փաստաթղթերի, յօդուածների եւ նիւթերի ժողովածուներ

3. 1. (կազմող եւ խմբագիր՝ Եազըճեան Գէորգ), «Ոգուն չապաւինելու արդիւնքը», Երեւան, 2002:
3. 2. Թադեւոսեան Աղասի, «Սոցիալական վախի երեւոյթը. արմատները եւ ձեւերը Հայաստանում (1991-1998 թթ.)», «Անցումային շրջանի էթնոհոգեբանական փոփոխութիւնների առանձնայատկութիւնները Հայաստանում» (յօդուածների ժողովածու), «Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի» հրատարակութիւն, Երեւան, հոկտ. 1998:
3. 3. Հախվերդեան Լեւոն, «Մենք եւ մեր դժուար օրերը», Երեւան, 2000:
3. 4. «Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920թթ. (Քաղաքական պատմութիւն). փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու», Երեւան, 2000:
3. 5. Аркадий Тер-Тадевосян, Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), (Արկադի Տէր-Թադեւոսեան, «Արցախում մարտական գործողութիւնների վեր-

լուծումը (յուլիս 1991-յուլիս 1992 թթ.)»), «Ռազմավարութեան եւ անվտանգութեան հարցեր» (յօդուածների ժողովածու, կազմող եւ խմբագիր՝ Արմէն Այվազեան), Երեւան, 2007, էջ 576-577:
3. 6. (compiled by Anita Burdette), <Armenia – Political and Ethnic Boundaries 1878-1948>, <Archive> Editions, London, 1998.

4. Յօդուածներ եւ հրապարակումներ

4. 1. Ասատրեան Հայկ, «Վերանորոգչական խորհրդածութիւններ», «Ռազմիկ» կիսաշաբաթաթերթ, Սոֆիա, թիւ 113-120, 1938-1939:
4. 2. Բաբալեան Արտաշէս, «Կարսի անկումը», «Հայրենիք», 1923, թիւ 12:
4. 3. Գնդունի Հայ, «Դրուագներ Կարսի կռիւներէն», «Պայքար» ամսագիր, 1931 թ., սեպտեմբեր:
4. 4. Գնդունի Հայ, «Կարսի անկումին պատճառները», «Մարտկոց» թերթ, Փարիզ, 1932 թ., 10 նոյեմբերի:
4. 5. Եազըճեան Գէորգ, «Հայ-քրդական յարաբերութիւնները Կարսի նահանգում 1919-1920 թուականներին», «Մերձաւոր Արեւելք. պատմութիւն, քաղաքականութիւն, մշակոյթ (յօդուածների ժողովածու)», ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտ, Երեւան, 2002:
4. 6. Թուրշեան Յարութիւն, «Սարդարապատի հերոսը (Դանիէլբէգ Փիրումեան) (1863-1922)», «Բանբեր Հայաստանի արխիւների», 1969, թիւ 1:
4. 7. Խատիսեան Ալեքսանդր, «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», «Հայրենիք», 1925, թիւ 6:
4. 8. Խուդինեան Գէորգ, «Սիմոն Վրացեան (1882-1969)», «Նշանաւոր ճեմարանականներ» (յօդուածների ժողովածու), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005:
4. 9. Մելքոնեան Աշոտ, «Կարս» եւ «Կարսի մարզ» յօդուածներ, «Հայկական հարց» հանրագիտարան, Երեւան, 1996:
4. 10. Չուգասզեան Լեւոն, «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա Յովսէփեան (1867-1952)», «Նշանաւոր ճեմարանականներ» (յօդուածների ժողովածու), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005:
4. 11. Սասունի Կարօ, «Հայ-թուրքական պատերազմը», «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1926, թիւ 4-9 եւ 11:

4. 12. Փափազեան Աւետիս, «Հայոց ցեղասպանութեան անհերքելի փաստաթղթեր», «Զարթօնք», 2005 թ., 14 սեպտեմբերի:
4. 13. «Քեազըմ Կարաբէքիրի յուշերը Հայաստանի Հանրապետութեան վրայ թրքական յարձակումներուն մասին», թարգմ. Ա. Շորվօղլեան, «Զարթօնք» օրաթերթ, Բէյրութ, 1966 թ., յուլիս-օգոստոս:
4. 14. Айрапетян Гайк, Триумф и трагедия генерала Силикова, Новое время, еженедельник, Ереван, 25 сентября 2002г.

5. Պարբերական մամուլ

5. 1. «Բանբեր Հայաստանի արխիւների» հանդէս, Երեւան, 1971, թիւ 1, 1989, թիւ 3, 2006, թիւ 1:
5. 2. «Երեկոյեան Երեւան» օրաթերթ, Երեւան, 989 թ., 23 եւ 24 օգոստոսի:
5. 3. «Էջմիածին» շաբաթաթերթ, Վաղարշապատ, 4 հոկտեմբերի 1920, թիւ 12:
5. 4. «Ժողովուրդ» թերթ, օրգան Հայ ժողովրդական կուսակցութեան, Երեւան, թիւ 167, 182, 185, 192 (1920 թ.):
5. 5. «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթ, Երեւան, 2006 թ., 7 սեպտեմբերի:
5. 6. «Յառաջ», Երեւան, 1920 թ., 5 հոկտեմբերի:
5. 7. «Նայիրի» շաբաթաթերթ, Բէյրութ, ԺԵ տարուայ (1968 թ. - Գ. Ե.) 45-50 միացեալ համարների փոխարէն լոյս տեսած բացառիկ համար:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ*

Աբգար (խմբապետ) 93
Ալեքսանդրեան Արտաշէս 15, 46, 47, 102
Ահարոնեան Աւետիս 33, 34
Աղամալեան Տիգրան 95
Աղայեան (հազարապետ) 51
Աղբալեան Նիկոլ 81
Ամուրեան Անդրէ 30
Այվազեան Արմէն 3, 23, 101, 104
Անանեան Լեւոն 29
Անանուն (Սեպուհի բրիգադում ծառայած օրագրող) 16, 24, 27, 42, 43, 60, 67, 69, 76, 88, 92, 93, 102
Անդրանիկ (Օզանեան Անդրանիկ) 21, 75
Ասատրեան Հայկ 35, 102, 104
Արարատեան Քրիստափոր 5, 77, 79, 94, 98
Արէշեան Միքայէլ 54
Արծրունի Վահէ (Մուրադեան Մելիքսէթ) ... 10, 15, 23, 25,29-31, 38, 40, 44-46, 48-50, 53-56, 61, 64-67, 72, 73, 76, 77, 83, 87, 89, 90, 92-95, 102
Աւշարով (փոխգնդապետ) 78

Բաբալեան Արտաշէս 4, 7, 8, 11, 12, 24, 25, 35, 37, 45, 49, 50, 52, 53, 56, 58, 59, 61, 66, 67, 74, 80, 83, 87, 90, 92, 99-101, 104
Բաբաջանեան Վանիկ 28, 102
Բաբաջանով (բուլղարացի գնդապետ) 22, 59, 78
Բագրատունի (գլխապետ) 7, 18
Բաղալեան Գեղամ 15, 45
Բաղդասարեան Դնեպրիկ 99, 102
Բորոյեան Սմբատ (Մախլուտո) 12, 29, 41, 75, 76, 92
Բուրդետ Անիթա 19, 104

* Անձնանունները այս ցուցակում բերուել են ազգանունների հայկական ձեւերով: Ներառուել են ծանօթագրութիւններում եւ օգտագործուած աղբիւրների ցանկում յիշատակուող անձնանունները, նաեւ նրանք, ում անձնանունները չեն յիշատակւում տուեալ էջում, բայց անձերն, այնուամենայնիւ, յիշատակւում են:

Գնդունի Հայ (Թօփչեան Համբարձում) ... 10, 13, 18, 19, 41, 43-45, 51-56, 64, 72, 75, 83, 84, 87, 104
Գրոնս Սիգիզմունդ 22

Դարբինեան Արտակ 63, 66, 102
Դենիկին Անտոն 30, 47
Դրօ (Կանայեան Դրաստամատ) 40, 49, 75, 76

Եազըճեան Գէորգ 7, 103, 104
Եղիազարեան (ճարտարապետ) 96
Երուսալիմսկի (զինուորական) 22

Զարեան Նաիրի (Եղիազարեան Հայաստան) 88
Զարեւանդ (Նալբանդեան, Զաւէն) 10
Զարմունի (Փանիկեան) Օննիկ 57, 102
Զինգեւիչ (գնդապետ) 22, 30, 47

Էզօ բէգ (գաւառապետ) 89

Թադեւոսեան Աղասի 3, 62, 79, 80, 89, 96, 103
Թումանեան Յովհաննէս 18, 19
Թուրշեան Յարութիւն 87, 104
Թրուանց Անոյշ 9

Իշխանեան (գնդապետ) 39
Իոնեսկու Վասիլ 5
Իսագուլեան Գառնիկ 101
Իսահակեան Աւետիք 18

Լեւոնեան Պարոյր 70
Լուսինեան Լեւոն Զ (թագաւոր Կիլիկիոյ) 26

Խալիդ բէգ (Կարաբէքիրին ենթակայ զօրահրամանատար) 57
Խալիլ բէյ (Կարաբէքիրի շտաբի պետ) 64, 87
Խատիսեան Ալեքսանդր 16, 32, 34, 78, 81, 83, 84, 104
Խուդինեան Գէորգ 9, 104
Խուրշուդեան Լենդրուշ 9

Ծառուկեան Անդրանիկ 4, 7, 8, 11, 99, 100

Կադիմով Իբրահիմ 45
Կարաբէքիր Քեազիմ 4, 5, 12, 13, 17, 40, 42, 43, 46, 53, 57, 63, 64, 70, 73, 86, 87, 105
Կնեազ (խմբապետ) 66
Կորոլկով (զինուորական) 22

Հախվերդեան Լեւոն 18, 103
Հախվերդեան Յովհաննէս 29, 30, 58, 94
Հայրապետեան Հայկ 98, 105
Հասան-Փաշայեան (Ղասաբբաշեան) (գնդապետ) 40
Հիդայաթ (Թադեւոս-Էմմանուէլ, դաւաճան) 46-47
Հիւսնի բէյ 46
Հովէեան Յովիկ 29

Ղազանչեան (Ղարաքիլիսայի յեղկոմի անդամ) 65
Ղազարեան (գեներալ) 49, 56, 78, 79
Ղոնդախչեան (փոխգնդապետ) 40, 50
Ղորղանեան Նիկոլայ 29, 48, 65
Ղորղանեան Ստեփան ... 10, 16, 19, 22, 24-32, 36-40, 44, 45, 48-57, 59, 60, 62-66, 68-70, 73, 75-92, 94-98, 102

Մազմանեան, Յովհաննէս 7, 18, 49, 82, 90
Մակավիեւ (գնդապետ) 54
Մամիկոնեան Վարդան (սպարապետ) 88
Մանուկեան Արամ 50
Մեդվեդեւ (գլխապետ) 22, 44
Մելքոնեան Աշոտ 5, 9, 104
Միրզոեւ (գնդապետ) 50, 51, 69
Միրիմանեան Դմիտրի 49, 67, 77, 98
Մուրադխան (խմբապետ) 92, 93

Յակոբեան Արարատ 10, 24-26, 61, 83, 103
Յարութիւնեան (գնդապետ) 25, 51, 77
Յովսէփեան Արտեմ 22, 27, 28, 42, 45, 49-52, 56, 58, 65, 77-80, 81, 88-90, 97, 98

Յովսէփեան Գարեգին (եպս., արք., կաթողիկոս) 6, 7, 14, 15, 19, 21, 33, 46, 47, 55, 58, 62, 67, 68, 74, 80, 83, 88, 92, 96, 99, 102, 104

Նազարբէգեան Թովմաս 12, 23, 26, 30, 31, 38, 50, 52, 58, 73, 76-78, 83, 90, 91, 98
Նալչաջեան Ալբերտ 23, 26, 76, 84, 103
Նապոլէոն Բոնապարտ 79
Նաւասարդեան Մկրտիչ 38
Նեստերովսկի (փոխգնդապետ) 22, 25
Նժդեհ (Տէր-Յարութիւնեան) Գարեգին ... 8, 9, 12, 17-21, 56, 86, 88, 103
Նորիատեան (Կարսի քաղաքագլուխ) 82, 95
Նուրի բէյ 5

Շաղուբաթեան (Շահբուդաղեան) (գնդապետ) 31, 65
Շնէուր Ալեքսանդր 22, 30
Շորվօղլեան Ա. 4, 17, 105

Ուլուբաբեան Բագրատ 14, 82, 103

Չեռնոզուբով 30
Չիլինգարեան (հազարապետ) 7, 18
Չխենկելի Ակակի 98
Չուգասզեան Լեւոն 14, 104

Պահլաւունի Եղիշէ 5, 6, 103
Պահլաւունի Նորայր 15
Պուադեբար Անտուան 27

Ջամալեան Արշակ 60
Ջանփոլադեան (գնդապետ) 22

Ռուբէն (Տէր-Մինասեան Մինաս) 10, 24, 29, 49, 51, 63, 70, 78, 87, 91, 93, 94, 103

Սասունի Կարո ... 5-7, 12, 13, 25, 29, 33, 36, 37, 41, 42, 44-46, 49, 55, 58, 61, 65, 66, 69-71, 74-76, 95, 104
Սարգիսեան Գարեգին (կաթողիկոս) 14

Սարգսեան Սերժիկ 20, 95
Սարդարեան Կտրիճ 25, 103
Սարեան Մարտիրոս (ՀՅԴ գործիչ) 99
Սեպուհ (Ներսէսեան Արշակ) 7, 12, 16, 26, 27, 29, 41, 42, 48, 67, 69, 73, 75-77, 86, 92
Սիլիկեան Մովսէս .. 25, 42, 52, 53, 71, 73, 77, 78, 83, 87, 98, 105
Սողոմոնեան Կոմիտաս (վարդապետ) 39, 78
Սուրէնեանց Գէորգ Ե (կաթողիկոս Ամենայն հայոց) 4, 6, 33
Ստոկս (բրիտանացի գնդապետ) 19, 35

Վեքիլեան Ալեքսանդր 5, 42, 53, 73, 87
Վէյգան Մաքսիմ 34
Վիրաբեան Վանիկ 44-48, 103
Վրանգել Պեոտր 31, 35
Վրացեան Սիմոն 9, 11, 16, 35, 36, 54, 55, 65, 66, 74, 75, 77-80, 85, 103, 104

Տէր-Առաքելեան Վահան 39, 49, 65, 78
Տէր-Թադեւոսեան, Արկադի 100, 101, 103
Տիգրանեան Սիրական 30

Փափազեան Աւետիս 5, 105
Փերվերդիեւ (գնդապետ) 73
Փիլոս (խմբապետ) 38, 92, 93
Փիրումեան Դանիէլ-բէգ 5, 23, 38, 39, 42, 49-52, 58, 59, 65, 69, 73, 76-78, 80, 81, 87, 88, 90, 91, 94, 97, 104

Քեազըմ բէգ (Կարաբէքիրին ենթակայ զօրահրամանատար) ... 57
Քեմալ Մուստաֆա 4, 13
Քոթանջեան Կորիւն (քահանայ) 4, 6, 19, 46
Քոթանջեան Հայկ 41, 68
Քոչարեան Ռոբերտ 97

Օհանջանեան Համօ 63
Օռլովսկի (զինուորական) 22

Ֆեւզի փաշա 5
Ֆօշ Ֆերդինանդ 33, 34

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներածութիւն 3

Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները 22

Ա. Կարսի անկման եւ ՀՀ բանակի քայքայման գաղափարական պատճառները 22

Բ. Կարսի անկման ռազմական պատճառները ... 36

Բ. 1. Զուտ ռազմական պատճառներ եւ սխալներ 36

Բ. 2. Ռազմահոգեբանական պատճառներ եւ սխալներ 61

Գ. Կարսի անկման բարոյահոգեբանական պատճառները 71

Վերջաբան 99

Օգտագործուած աղբիւրների ցանկ 102

Անձնանունների ցանկ 106

Նկատուած վրիպակներ

էջ 5, ծանօթագրութեան 4-րդ տողը, «նոյնը» բառի փոխարէն պէտք է լինի՝ «Քեազըմ Կարաբէքիրի յուշերը Հայաստանի Հանրապետութեան վրայ թրքական յարձակումներուն մասին», «Զարթօնք»

էջ 15, 2-րդ պարբերութեան առաջին բառի՝ «Եօթերորդ»-ի փոխարէն պէտք է լինի «Վեցերորդ»:

էջ 16, 1-ին տողի «ութերորդ» բառի փոխարէն պէտք է լինի՝ «եօթերորդ»: